

Ներդրումային խթաններ
Համախմբված զեկույց. Հայաստան



Բովանդակություն

Զեկույցի մասին	2
Գործադիր ամփոփում. հիմնական առաջարկություններ	4
ԳԼՈՒԽ 1. Խթանների կառուցվածքային տարրերը	5
Խթանների տաքսոնոմիան	6
Տեղադրության և վարքագծի վրա ազդող խթանների տարբեր դերը	7
Խթանների կիրառման համաշխարհային փոքր	8
ԳԼՈՒԽ 2. Ներդրումային խթանների արդյունավետության հիմնական նկատառումները	13
Խթանները ներդրումային միջավայրի բարեփոխումների ավելի ընդարձակ օրակարգի միայն մի մասն են	13
Խթանները ներդրողների տարբեր շարժառիթների համատեքստում	14
Խթաններն առանձին ոլորտներում, ենթաոլորտներում և ապրանքներում	18
Ավելի ընդարձակ ներդրումային միջավայրի կարևորությունը	19
ԳԼՈՒԽ 3. Հայաստանի կողմից առաջարկվող խթանների համեմատությունը ԵԿԱ տարածաշրջանի երկրների հետ	20
Համեմատություն Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի միտումների հետ	21
ԳԼՈՒԽ 4. Հայաստանի կողմից առաջարկվող խթանների համեմատությունը միջազգային լավագույն փորձի հետ ..	24
Հայաստանի ընթացիկ խթանների համակարգը	Error! Bookmark not defined.
Հայաստանի համապատասխանությունը քաղաքականության նպատակներին և արդյունավետության բարձրացմանն ուղղված ՕՈՒՆ-ներին	28
Հայաստանի համապատասխանությունը թափանցիկության սկզբունքին (խթանների մասին տեղեկատվության հասանելիություն)	31
Հայաստանի համապատասխանությունը իրավական շրջանակին և ինստիտուցիոնալ դերերին	34
Հայաստանի համապատասխանությունը խթանների կառավարման և տրամադրման գործելակերպերին	34
ԳԼՈՒԽ 5. Հայաստանի կողմից առաջարկվող խթանները վերանայելու առաջարկություններ	38
1. Բարելավել քաղաքականության նպատակների և արդյունավետության բարձրացմանն ուղղված ՕՈՒՆ-ների համապատասխանեցումը	39
2. Բարձրացնել թափանցիկությունը և ստեղծել խթանների համապարփակ գույքացանկ	45
3. Բարելավել խթանների իրավական շրջանակի հստակությունը	48
4. Ապահովել ինստիտուցիոնալ դերերի համապատասխանեցումը խթանների կառավարման և ղեկավարման գործընթացներում	51
5. Բարձրացնել խթանների արդյունավետությունը կանոնավոր մշտադիտարկում և ծախսերի ու օգուտների վերլուծություն իրականացնելու միջոցով	52
6. Դիտարկել հմտությունների զարգացմանն ավելի մեծ ուշադրություն դարձնելու հնարավորությունը	59
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	65
Հավելված 1. Տարբեր հարկային գործիքներ. առավելություններ և թույլ կողմեր	69
Հավելված 2: Հարկի գծով ծախսի, ծախսերի և օգուտների վերլուծության օրինակ՝ ըստ ոլորտների	72
Հավելված 3. Ընկերության մակարդակով հարկի գծով ծախսի, ծախսերի ու օգուտների վերլուծության օրինակ	73
Հավելված 4. Հմտությունների զարգացմանն ուղղված խթանների ընտրված դեպքերի ուսումնասիրություն	73
Հավելված 5. Արևմտյան Բալկանների տարածաշրջանային խթանների տվյալների բազա	80

Զեկույցի մասին

Ներկայումս Հայաստանն իրականացնում է մի շարք բարեփոխումներ օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) համար երկրի գրավչությունը մեծացնելու նպատակով, մասնավորապես՝ ավելի բարձր ավելացված արժեքով ՕՈՒՆ, որոնք կարող են ստեղծել աշխատատեղեր, փոխանցել գիտելիքներ տեղական ընկերություններին և խթանել նրանց ներառումը համաշխարհային արժեզրթաններում:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության (ՏԶՆՆ) խնդրանքով մշակված սույն զեկույցը կազմում է Համաշխարհային բանկի խմբի (WBG/ՀԲԽ) կողմից «Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխումներ II» ծրագրի շրջանակներում վերոնշյալ ներդրումային նպատակներին հասնելու համար ՀՀ կառավարությանը տրամադրվող խորհրդատվական աջակցության մաս:

Մասնավորապես, առաջարկվել է՝

- կազմել ներդրումների վայրի ընտրության /տեղադրության/ և վարքագծի վրա ազդող առկա խթանների գույքացանկ,¹
- իրականացնել տարածաշրջանային համեմատական վերլուծություն և կազմել Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի (ECA/ԵԿԱ) տարածաշրջանի ընտրված երկրներում կիրառվող ներդրումային խթանների փորձի համեմատական ուսումնասիրության ցանկ,
- մշակել ամփոփ փաստաթուղթ, որտեղ կներկայացվեն խթանների կառավարման և ղեկավարման լավագույն փորձի օրինակները, իրավական շրջանակները, բիզնես գործընթացների քարտեզագրումը և ինստիտուցիոնալ կարողությունների գնահատումը,
- ներկայացնել Հայաստանի ներդրումների խթանման քաղաքականության առաջարկություններ:

Ի պատասխան վերոնշյալ առաջարկությունների՝ կազմվել է սույն զեկույցը, որտեղ ներկայացվում են համաշխարհային փորձի ուսումնասիրության արդյունքները և բերվում են ինչպես ԵԿԱ, այնպես էլ այլ տարածաշրջանների տարբեր երկրների կողմից կիրառվող լավ գործելակերպերի օրինակներ:

Ի վերջո՝ խթանները վերանայելու կամ նոր խթաններ նախագծելու որոշումը դառնալու է ՀՀ կառավարության խնդիրը: Աջակցելով ՀՀ կառավարությանն այդ խնդրի լուծման գործում՝ սույն զեկույցում քննարկվում են Հայաստանի ներդրումների խթանման քաղաքականության համար կարևոր հիմնական հասկացությունները և նկատառումները: Քննարկվում է նաև, թե

¹ Ամբողջական գույքացանկը, ինչպես նաև փաստաթղթի հրապարակման համար նախատեսված տարբերակը ներկայացվել է ՏԶՆՆ-ին՝ որպես առանձին հավելված:

ինչպես կարելի է առկա խթանները համապատասխանեցնել Հայաստանի ավելի ընդարձակ ներդրումային քաղաքականության նպատակներին՝ մասնավորապես ավելի բարձր ավելացված արժեքով ՕՈՒՆ-ների ներգրավման նպատակին, որը հանդիսանում է ներդրումների խթանման լավ քաղաքականության բնորոշման ընդհանուր առանձնահատկությունը:

Սույն զեկույցի արդյունքներն ու առաջարկությունները գլխավորապես հիմնվում են ՏՁՆՆ-ի կողմից ներկայացված տեղեկությունների և գրասենյակային հետազոտությունների վրա: Հետագայում, զեկույցում ներառվեցին նաև 2017թ. մայիսի 2-ից 4-ը Երևանում կայացած ներդրումային խթանների թեմայով սեմինարի մասնակիցների կարծիքները/նկատառումները, որոնց թվում էին տարբեր շահագրգիռ պետական գործակալությունների ներկայացուցիչներ, ներառյալ՝ ՏՁՆՆ, Հայաստանի զարգացման հիմնադրամ (ՀԶՀ), «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամ (ՌՆԿ), ՀՀ ֆինանսների նախարարություն (ՀՀ ՖՆ) և ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն:

ՀԲԽ-ն իր երախտագիտությունն է հայտնում ՏՁՆՆ-ի, ՀԶՀ-ի և այն գործակալությունների ներկայացուցիչներին՝ «Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխումներ II» ծրագրի թիմին սույն զեկույցի կազմման աշխատանքներում զգալի աջակցություն ցուցաբերելու համար:

Գործադիր ամփոփում. հիմնական առաջարկություններ

Սույն զեկույցում խորհուրդ է տրվում, որ ՀՀ կառավարությունն իրականացնի հինգ առաջարկություններ՝ միջազգային լավագույն փորձին և ներդրողների կարիքներին Հայաստանի խթանման սխեմաների համապատասխանեցման գործընթացը բարելավելու նպատակով.

- 1. Բարելավել խթանների համապատասխանեցումը քաղաքականության նպատակներին և արդյունավետության բարձրացմանն ուղղված ՕՌՆ-ներին.** ՀՀ կառավարությունը պետք է անցնի խթանների «ad hoc» (առանձին դեպքի համար) առաջարկից դեպի ավելի ռազմավարական մոտեցումը, որը կենտրոնանում է քաղաքականության որոշակի նպատակների վրա: Այն պետք է տեղի ընտրության վրա ազդող խթանները նպատակաուղղի դեպի արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումները, որոնք ավելի լավ են արձագանքում այդ խթաններին, քան այլ ոլորտները: Այս գործընթացը պետք է սկսվի ՕՌՆ խթանման գերակա ոլորտների ցանկի վերջնական մշակմամբ: Եթե ՀՀ կառավարության հիմնական նպատակները ներառում են աշխատատեղերի ստեղծումը, հմտությունների զարգացումը/ուսուցումը, հետազոտության և մշակման (R&D) խթանումը, ապա խթանների հետ կապված ծախսերը պետք է ուղղակիորեն կապվեն այդ նպատակների հետ: Ինչ վերաբերում է ներդրումային գործիքի ընտրությանը, ապա շահույթի վրա հիմնված խթանները, ինչպիսիք են հարկային արձակուրդները և կոնցենսիոն համաձայնագրերի ներքո սահմանված հարկային դրույքաչափերը, նվազ նախընտրելի են, քանի որ դրանք թիրախավորված են, իսկ դրանց ծախսերի ու օգուտների քանակական չափումն ավելի դժվար է:
- 2. Բարձրացնել թափանցիկությունը և ստեղծել խթանների համապարփակ գույքացանկ/տվյալների բազա.** ՀՀ կառավարությունը պետք է նախաձեռնի կարգավորման տարբեր դաշտերում և իշխանության տարբեր մակարդակներում ներդրողներին առաջարկվող բոլոր խթանների համապարփակ քարտեզագրման աշխատանքներ՝ կանոնավոր հիմունքներով: Գույքացանկը/տվյալների բազան պետք է հասանելի լինի անգլերեն լեզվով, որտեղ յուրաքանչյուր խթանի մասով պետք է բացվի հղում լրացուցիչ տեղեկություններին, որոնք վերաբերում են համապատասխան իրավական շրջանակներին, իրավասության չափանիշներին, վարչական հսկողություն և մշտադիտարկում իրակացնող մարմիններին, քաղաքականության նպատակներին: Այս գործընթացին պետք է մասնակցեն օտարերկրյա և տեղական ներդրողներին խթաններ առաջարկող բոլոր գործակալությունները:
- 3. Բարելավել խթանների իրավական շրջանակի հստակությունը.** Այնուհետև, ՀՀ կառավարությունը պետք է ապահովի ներդրումային խթանների ավելի կանխատեսելի, նպատակաուղղված և թափանցիկ իրավական շրջանակ: Մասնավորապես, խթանների տրամադրումը (արտոնությունների շնորհումը) դեպք

առ դեպք հիմունքներով պետք է սահմանափակվի՝ հայեցողական մոտեցումը նվազեցելու նպատակով: ՀՀ կառավարությունը պետք է ապահովի ներդրումային խթանների առնչվող իրավական ակտերի անգլերեն տարբերակների հասանելիությունը: Ավելին, ամբողջ տեղեկատվությունը պետք է հավաքվի մեկ առցանց ռեսուրսում, որպեսզի ապահովվի թափանցիկության ավելի բարձր մակարդակ:

4. **Ապահովել ինստիտուցիոնալ դերերի համաձայնեցումը խթանների կառավարման և ղեկավարման գործընթացներում.** ՀՀ կառավարությունը պետք է պարզեցնի խթանների կառավարման ինստիտուցիոնալ շրջանակը՝ ապահովելով առցանց կիրառություն բոլոր խթանների մասով և հստակեցնելով խթանների համար դիմելու (արտոնություն ստանալու համար դիմում ներկայացնելու) և դրանք տրամադրելու վարչական ընթացակարգերը: Անհրաժեշտ է ստեղծել սերտ համագործակցություն ՏԶՆ-ի, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (ՀՀ ԱԿ ՊԵԿ), ՀՀ ֆինանսների նախարարության և ներգրավված այլ իրավասու մարմինների միջև՝ խթանների գործող համակարգը համակարգելու և ծախսերի ու օգուտների տվյալները փոխանակելու նպատակով: Համակարգման և տեղեկատվության փոխանակման բացակայությունը խթանների առկա ռեժիմի հիմնական թույլ կողմերից է:

5. **Բարձրացնել խթանների արդյունավետությունը՝ կանոնավոր մշտադիտարկում և գնահատում իրականացնելու միջոցով.** Ներկայումս ՀՀ կառավարությունը չի իրականացնում իր կողմից առաջարկվող խթանների արժեքի կամ տարեկան կտրվածքով յուրաքանչյուր ներդրումային գործիքից օգտվող ընկերությունների թվաքանակի հաշվառում: Առաջարկվում է ստեղծել շնորհիված բոլոր խթանների/արտոնությունների մշտադիտարկման և գնահատման (ՄԳ) համակարգ: Նման համակարգը հիմնված կլինի հստակ սահմանված քաղաքականության նպատակների վրա և կարձանագրի շահառուների կատարողականը՝ շահառու չհանդիսացող տնտեսվարողների համեմատությամբ կամ, եթե նպատակը ՕՈՒՆ խթանումն է՝ կկիրառի համապատասխան մեթոդաբանություններ խթանների գերկամ թերառաջարկը բացահայտելու համար:

ԳԼՈՒԽ 1. Խթանների կառուցվածքային տարրերը

Այս բաժնում ներկայացվում են խթանների ամփոփ նկարագրությունը և դրանց կիրառությունը տարբեր երկրներում՝ ներառյալ ԵԿԱ տարածաշրջանում, ինչպես նաև քննարկվում են հիմնական նկատառումները, որոնք քաղաքականություն մշակողները պետք է հաշվի առնեն խթանների արդյունավետությունն ապահովելու համար:

Խթանների տաքսոնոմիան

Պետության կողմից որոշակի ձեռնարկություններին կամ ձեռնարկությունների խմբերին տրամադրվող չափելի տնտեսական առավելություններ, որոնք նպատակ ունեն ուղղորդել այդպիսի ներդրումները դեպի ցանկալի ոլորտներ կամ տարածաշրջաններ կամ ազդել դրանց բնույթի վրա:²

Խթանները կարող են սահմանվել որպես կառավարության կամ առնչվող պետական մարմնի կողմից կատարվող ֆինանսական ներդրումներ, որոնք նախատեսում են՝

1. միջոցների և (կամ) պարտավորությունների ուղղակի կամ հնարավոր փոխանցում,
2. ազատում հարկային պարտավորություններից, որոնք այլ կերպ ենթակա են վճարման, կամ
3. ապրանքների և ծառայությունների տրամադրում՝ բացի ընդհանուր ենթակառուցվածքից, կամ բնափրային ձևով վճարումներ:

Կառավարությունը կարող է նաև վճարում կատարել ֆինանսավորման մեխանիզմին կամ հանձնարարել մասնավոր կազմակերպությանն իրականացնել մեկ կամ ավելի գործառույթներ վերոնշյալ (1)-(3)³ միջոցառումներում:

Անհրաժեշտ է տարբերակել ներդրումային խթանները սպառողներին տրամադրվող այլ տնտեսական առավելություններից, օրինակ՝ ֆիզիկական անձանց եկամտահարկի ցածր դրույքաչափ, կամ այն խթաններից, որոնց նպատակը սպառման կամ սոցիալական/մշակութային գործունեության խթանումն է:

Ընդհանուր առմամբ, ներդրումային խթանները կարելի է բաժանել հետևյալ երկու տեսակների.

- **Ֆիսկալ խթանները** նախատեսում են ազատում պետական հարկերից/տուրքերից, որոնք այլ կերպ ենթակա են վճարման բնակչության կողմից: Դրանք ներառում են խթաններ, որոնք առնչվում են կորպորատիվ հարկերին, օրինակ՝ կորպորատիվ եկամտահարկ (CIT/ԿԵՀ), ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ), արտահանման հարկ, գույքահարկ, պահումներ/գանձումներ, ներմուծվող/արտահանվող ապրանքների մաքսատուրքեր: Հարկային խթանների օրինակները ներառում են՝ հարկային արձակուրդներ, հատուկ նվազեցումներ, հարկի ֆինանսավորում և հարկային զեղչեր, հարկային պարտավորությունների կատարման ժամկետի երկարաձգում կամ հետաձգում: Մաքսատուրքի խթանների օրինակները ներառում են՝ ներմուծվող և արտահանվող ապրանքների ազատում մաքսատուրքից կամ մաքսատուրքի դրույքաչափի նվազեցում: ԱԱՀ խթանները կարող են տրամադրվել ձեռնարկության կողմից արտադրված արտադրանքի մասով, սակայն, ավելի հաճախ այդ խթանը տրամադրվում է ձեռնարկության կողմից գնված ներդրանքներն ԱԱՀ-ից ազատելու ձևով:

² Ջեյմս, Ս. (2009թ.) Համաշխարհային բանկ:

³ Սոնտրի համաշխարհային կազմակերպություն, «Standards and Countervailing Measures Agreement» («Ստանդարտների և հավասարակշռման միջոցառումների մասին համաձայնագիր») https://www.wto.org/english/tratop_e/scm_e/subs_e.htm

- **Ֆինանսական խթանները** միջոցների/պարտավորությունների ուղղակի կամ անուղղակի փոխանցումներն են՝ որոշակի բիզնեսին/գործունեությանը/ուրուրտին օգուտ տալու նպատակով, ինչպես նաև արտոնյալ պայմաններով ապրանքների ու ծառայությունների տրամադրումը, կամ հատուկ բնաիրային ձևով վճարումները, որոնք օգուտ են տալիս միայն տվյալ ներդրողներին: Ֆինանսական խթանների օրինակները ներառում են՝ ուղղակի սուբսիդիաներ, համաֆինանսավորման դրամաշնորհներ, նվազեցված սոկոսադրույքով վարկեր և հողի նվազեցված գներ:


Ներդրումային խթանները քանակապես չափելի են և ուղղվում են դեպի ձեռնարկությունների (գործունեության) որոշակի տեսակները՝ ներդրումները որոշակի ոլորտ նպատակաուղղելու կամ դրանց բնույթի և ներդրողների վարքագծի վրա ազդելու նպատակով:

Տեղադրության և վարքագծի վրա ազդող խթանների տարբեր դերը

Ներդրումային խթանները կարող են դասակարգվել քաղաքականության որոշակի նպատակի առնչությամբ, որի համար այդ խթանները կիրառվում են պետության կողմից, ներառյալ՝

- **Տեղադրության վրա ազդող խթաններ** (այսուհետ՝ տեղադրության խթաններ) նպատակն է ներգրավել և ուղղորդել ներդրումները դեպի հյուրընկալող երկիր կամ տվյալ երկրի որոշակի տարածք.
- **Վարքագծի վրա ազդող խթանները** (այսուհետ՝ վարքագծի խթաններ) նախատեսվում են ներդրողների ներգրավումը որոշակի վարքագծերում կամ գործունեությունում խթանելու համար, օրինակ՝ որոշակի ապրանքների արտադրություն կամ ծառայությունների մատուցում, աշխատատեղերի ստեղծում, օտարերկրյա և տեղական մատակարարների միջև կապերի հաստատում, շրջակա միջավայրի համար անվնաս տեխնոլոգիաների («կանաչ տեխնոլոգիաներ») ներկայացում:

Պատկեր 1. Ներդրումային խթաններ. հիմնական հասկացություններ և եզրույթներ



Աղբյուր՝ «Ներդրումային խթանների գործիքակազմ» ՀԲԽ, 2015թ):

Պատկերի թարգմանություն՝

Ներդրումային խթաններ

Պետության կողմից **որոշակի ձևաչափով** ներդրումներին կամ **ձևաչափով** ներդրումներին տրամադրվող **չափելի** տնտեսական առավելություններ, որոնք նպատակ ունեն ուղղորդել այդպիսի **ներդրումները** դեպի **ցանկալի ոլորտներ** կամ տարածաշրջաններ կամ **ազդել դրանց բնույթի վրա**:

Գործիք / Դեր

Հարկային խթաններ. ազատում պետական հարկերից/տուրքերից կամ դրանց նվազեցումներ, որոնք այլ կերպ ենթակա են վճարման:

Տնտեսական խթաններ. միջոցների ուղղակի փոխանցում կամ միջոցների և պարտավորությունների հնարավոր ուղղակի փոխանցում, ապրանքների և ծառայությունների տրամադրում, բնափրային ձևով վճարումներ:

Տեղադրության խթաններ. հյուսիսկալոլ երկիր կամ տվյալ երկրի որոշակի տարածք ներդրումներ ներգրավելու համար:

Վարքագծի խթաններ. Կիրառվում են ներդրողների ներգրավումը որոշակի վարքագծերում կամ գործունեությունում խթանելու համար (օր.՝ աշխատատեղերի ստեղծում, օտարերկրյա և տեղական մատակարարների միջև կապերի հաստատում կամ շրջակա միջավայրի համար անվնաս տեխնոլոգիաների ներկայացում):

Խթանների կիրառման համաշխարհային փորձը

Այս բաժնում համառոտ ներկայացվում է ներդրումային խթանների կիրառման համաշխարհային փորձը և քննարկվում են ներդրումների խթանման քաղաքականության բարեփոխումների որոշ հիմնական պատճառները: Խթանները վաղուց արդեն կիրառվում են ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների իշխանությունների կողմից՝ տնտեսական գործունեության և դերակատարների վարքագծի վրա ազդելու նպատակով: Սակայն, խթանների կիրառության արդյունավետությունն անհամաչափ է, որի պատճառները քննարկվում են ավելի ուշ՝ սույն գլխույցի մյուս բաժիններում:

ՀԲԽ-ի կողմից վերջերս իրականացված քարտեզագրումը ցույց է տալիս, որ խթանները կիրառվում են աշխարհի գրեթե բոլոր տնտեսություններում, չնայած առկա են տարբերություններ՝ կախված պայմաններից և հետապնդվող նպատակներից: Ստորև բերված Պատկեր 2-ում ներկայացվում են ուսումնասիրության մեջ ներառված 136 երկրներում տարբեր հարկային խթանների տարածվածության մակարդակը: Այդ երկրների կողմից կիրառվող գործելակերպերում որոշ մոդելներ և միտումներ ակնհայտ են: Ինչ վերաբերում է առանձին

գործիքներին, ապա հարկային արձակուրդի գործիքն առավել տարածված է Հարավային Ասիայի, **Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի (ECA/ԵԿԱ)**, ինչպես նաև Արևելյան Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի (EAP/ԱԱԽ) երկրներում, և նվազ տարածված՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD/SՀԶԿ) անդամ երկրներում: Սա ցույց է տալիս, որ զարգացած երկրներն աստիճանաբար հրաժարվում են օգտագործել հարկային արձակուրդները՝ քաղաքականության սահմանված նպատակներն իրագործելու առումով դրանց հարաբերական անարդյունավետության պատճառով, որը պայմանավորվում է պատշաճ թիրախավորման բացակայությամբ և այլ պատճառներով, որոնք քննարկվում են զեկույցի հաջորդ բաժիններում:

Աշխարհի բոլոր տարածաշրջաններում բավականին տարածված խթան է հարկից և մաքսատուրքից ազատումը հատուկ տնտեսական գոտիներում (SEZ/ՀՏԳ): Սա կարող է արտացոլել հարկային խթանները որոշակի աշխարհագրական վայրերում սահմանափակելու և այդ կերպ դրանց ազդեցությունն ավելի լայն տնտեսության վրա նվազեցնելու միտումը՝ ելնելով եկամուտների նկատառումներից: Սա կարող է դիտարկվել նաև որպես արձագանք Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից ներկայացված սահմանափակումներին, որոնց ներքո արգելվում է տրամադրել արտահանման սուբսիդիաներ արտադրողներին: Այս դեպքում ՀՏԳ-ներում տրամադրված հարկային խթանները՝ հստակ չսահմանափակելով դրանց հասանելիությունն արտահանողների համար, կարող են դեռ օգտակար լինել արտահանողների համար, քանի որ շատ դեպքերում այդ ՀՏԳ-ները սահմանվում են որպես տվյալ երկրի մաքսային տարածքից դուրս գտնվող տարածքներ: Խթանների նպատակների տեսանկյունից՝ հետազոտության և մշակման (R&D) խրախուսմանը նպատակառոտ դրված հարկային խթանները ներկայումս ավելի շատ են օգտագործվում ՏՀԶԿ և ԱԱԽ տարածաշրջանի երկրներում: Գերնվազեցումներ խթանը (որով թույլատրվում է կատարել որոշակի ծախսերի փաստացի արժեքից ավելի նվազեցումներ) ավելի լայն տարածում է ստացել Հարավային Ասիայում՝ հիմնականում նոր բիզնես ստեղծելու համար կատարված ներդրման արժեքը սուբսիդավորելու նպատակով:

Ինչպես ցույց է տրվում ստորև բերված Պատկեր 2-ում, աշխարհի գրեթե բոլոր երկրները ներդրողներին առաջարկում են խթաններ, և այս առումով Հայաստանը բացառություն չէ:

Պատկեր 2. Ներդրումային խթանները համաշխարհային տարածաշրջաններում

	Ուսումնասարված երկրների թիվը	Հարկային արձակուրդ / ազատում հարկից	Հարկի դրույքաչափի նվազեցում	Ներդրման ֆինանսավորում/ հարկային զեղչ	Ազատում ԱԱՀ-ից/ ԱԱՀ դրույքաչափի նվազեցում	R&D հարկային խթան	Գեր- նվազեցումներ	ՀՏԳ/ ազատ գոտիներ/ EPZ/ ազատ նավահանգիստ
Արևելյան Ասիայի Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրներ	12	92%	92%	75%	75%	83%	8%	83%
Եվրոպա և Գեներտրոնական Ասիա	17	71%	29%	18%	94%	29%	0%	94%
Լատինական Ամերիկա և Կարիբյան կղզիներ	24	75%	29%	46%	58%	13%	4%	75%
Միջին Արևելք Հարավ-արևելյան Աֆրիկա	15	73%	40%	13%	60%	0%	0%	80%
ՏՀԶԿ	33	21%	30%	61%	79%	76%	18%	67%
Հարավային Ասիա	7	100%	43%	71%	100%	29%	57%	71%
Մերձսահարյան Աֆրիկա	30	60%	63%	73%	73%	10%	23%	57%

Աղբյուր՝ Առևտրի և մրցակցության դեպարտամենտ, ՀԲՆ, 2015թ.:

Ինչ վերաբերում է խթանների տրամադրման մեթոդին, ապա կարելի է տեսնել, որ բոլոր տարածաշրջաններում լայնորեն կիրառվում են հարկային խթանների տրամադրման/արտոնությունների շնորհման հայեցողական ընթացակարգերը: Չհանդիսանալով լավ գործելակերպ՝ այդպիսի համակարգը թույլ է տալիս հարկ վճարողներին արտոնությունից օգտվելու համար «դիմել» հարկային վարչարարության շրջանակներից դուրս գործող գործակալություններին: Հարկային խթանը/արտոնությունը, որից իրավասու է օգտվել հարկ վճարողը, կարող է նախատեսվել հարկերի մասին օրենքում կամ ներդրումները կարգավորող օրենսգրքում, սակայն, դրան սովորաբար տալիս են լայն մեկնաբանություն՝ պահանջելով հաստատման գործընթաց: Հարկային կամ մաքսային հայտարարագիր ներկայացնելիս հարկ վճարողները պահանջում են կիրառել իրենց հարկային արտոնությունները, մինչդեռ հայեցողական ընթացակարգերի պարագայում հարկային արտոնությունները կարող են հանգեցնել կոռուպցիոն ռիսկերի, քանի որ ներդրողները ձգտում են ստանալ իրենց համար արժեքավոր «հաստատումը»: Մերձսահարյան Աֆրիկայում հայեցողական ընթացակարգերն ավելի լայն կիրառություն են ստացել, քան որևէ այլ

տարածաշրջաններում, սակայն, հայեցողական գործընթացները ՏՀԶԿ երկրներում ևս շարունակվում են կիրառվել:

Բացի հարկային խթանների ուսումնասիրությունից՝ ՀԲԽ-ն իրականացրել է նաև ֆինանսական խթանների հետազոտություն 13 երկրներում, որոնցից չորսը բարձր եկամուտ ունեցող ՏՀԶԿ անդամ երկրներ են (Բելգիա, Ավստրիա, Ֆրանսիա, Չեխիայի Հանրապետություն), չորսը՝ բարձր միջին եկամուտ ունեցող երկրներ (Հարավային Աֆրիկա, Թուրքիա, Արգենտինա, Բոսնիա և Հերցեգովինա), երկուսը՝ միջին մակարդակից ցածր եկամուտ ունեցող երկրներ (Հնդկաստան, Մարոկկո), իսկ երեքը՝ ցածր եկամուտ ունեցող երկրներ (Սիերա Լեոնե, Քենիա, Հաիթի):

Հետազոտությունը ցույց տվեց, որ ֆինանսական խթանների կիրառումը լայն տարածում է ստացել. դրանց բազմազանությունը հատկապես ակնհայտ է միջին և բարձր եկամուտ ունեցող երկրներում: Ցածր եկամուտ ունեցող երկրները միտում ունեն ավելի մեծ չափով հիմնվել հարկային խթանների վրա, հավանաբար այն պատճառով, որ հետաձգված կամ չստացված հարկային եկամուտների նախաբյուջետային ազդեցությունը կարող է ավելի փոքր լինել, քան ֆինանսական խթանների համար պահանջվող վճարումները: Բացի այդ, ցածր եկամուտ ունեցող երկրները միտում ունեն ներդրողներին տրամադրելու սուբսիդավորված հող: Միջին և բարձր եկամուտ ունեցող երկրներում ֆինանսական խթանները կիրառվում են տվյալ երկրի համար «ռազմավարական» համարվող ոլորտները և բարձր աճ ապահովող տնտեսական գործունեության տեսակները խթանելու նպատակով:

Որոշ բացառություններով՝ միջին և բարձր եկամուտ ունեցող երկրներում հազվադեպ են սահմանվում խթանների իրավասության խտրական չափանիշներ օտարերկրյա և տեղական ներդրողների համար: Հաշվի առնելով ասվածը, գործնականում, օտարերկրյա ձեռնարկությունները կարող են ավելի լավ դիրքավորված լինել որոշակի խթաններ ձեռք բերելու համար, քանի որ նրանք ավելի ճկուն են տեղադրության ընտրության առումով, ավելի շատ են հակված կատարելու հետազոտություն և մշակում (R&D), ներդրում կատարելու «ռազմավարական» որոլտներում և այլն: Միջին և բարձր եկամուտ ունեցող երկրներում ֆինանսական խթանների միջոցով հետապնդվող քաղաքականության նպատակների հիմնական տեսակները վերաբերում են հետևյալին՝ աշխատատեղերի ստեղծում/պահում, «ռազմավարական» կամ գերակա ոլորտների խթանում, մարդկային ռեսուրսների զարգացում, աջակցություն R&D հետազոտություններին և տեխնոլոգիաների փոխանցմանը, տվյալ երկրի նվազ զարգացած շրջաններում ներդրումների խրախուսում, փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) աճի խթանում: Ի վերջո, այն երկրները, որոնք համընդհանուր ճանաչմամբ հաջողության են հասել իրենց ներդրումային սխեմաներով, ինչպիսիք են Ավստրիան և Չեխիայի Հանրապետությունը, միտված են կենտրոնանալու այնպիսի ծրագրերի վրա, որոնք կարևորում են՝ (ա) աշխատողների ուսուցումը (մարդկային ռեսուրսներ), (բ) տեխնոլոգիաների տարածումը և (գ) նվազ զարգացած շրջանների զարգացումը:

Նախքան խթանման որևէ ռեժիմի մանրամասներին անցնելը՝ հարկ է նշել, որ ներդրումային խթանը կարող են լինել քաղաքականության բավականին սահմանափակ գործիք, որն արդյունավետ է դառնում խիստ առանձնահատուկ պայմաններում: Այլ խոսքերով, զարգացման ոչ բոլոր նպատակները կարող են իրագործվել խթանների միջոցով, և, անգամ այդ պարագայում, խթանները կաշխատեն միայն այն դեպքում, երբ ընդհանուր քաղաքականության և ներդրումային միջավայրերը նպաստավոր են: Ուստի, նախքան նոր խթանների ծրագիր մշակելը, կարևոր է իրականացնել տվյալ նպատակի իրագործման հիմնական խոչընդոտների համակողմանի վերլուծություն: Նման նախաձեռնությունը հաջողություն ունենալու հավանականություն կունենա միայն այն դեպքում, երբ առկա է շուկայի ակնհայտ ձախողում, որը հնարավոր է հաղթահարել կամ մեղմացնել խթանի կիրառման միջոցով: Ավելի հաճախ նման վերլուծությունը կարող է բացահայտել, որ տվյալ նպատակն իրագործելու համար պահանջվում են քաղաքականության այլ տեսակի միջամտություններ:


ԳԼՈՒԽ 2. Ներդրումային խթանների արդյունավետության հիմնական նկատառումները

Այս բաժնում ներկայացվում են տարբեր երկրներում խթանների արդյունավետության գնահատման ՀԲԽ-ի վերջին հետազոտության արդյունքները: Ի թիվս այլ հասկացությունների՝ հետազոտությունը ներկայացնում է «ներդրումների կենսացիկլ» հասկացությունը և ՕՈՒՆ դասակարգումն ըստ ներդրողների շարժառիթների, ինչպես նաև քննարկում է այն դերը, որը ներդրումային խթանները կարող են կատարել տարբեր տեսակի ՕՈՒՆ-ներում: Բացի այդ, **շեշտադրվում է** նաև ներդրումների խթանման սխեմաների գրավչությունը պահպանելու համար բարենպաստ ներդրումային միջավայր ստեղծելու կարևորությունը:

Խթանները ներդրումային միջավայրի բարեփոխումների ավելի ընդարձակ օրակարգի միայն մի մասն են

Օտարերկրյա ուղղակի ներդրումը մեկանգամյա գործառնություն չէ հյուրընկալող պետության և օտարերկրյա ընկերության միջև: Այն նախատեսում է շարունակական հարաբերություններ բազմաթիվ շահագրիտ կողմերի հետ՝ տվյալ երկրում օտարերկրյա ներդրումների կենսացիկլի տարբեր փուլերում (տես ստորև՝ Պատկեր 3): Ներդրումների կենսացիկլը սկսվում է երկրի ներդրումային տեսլականի և առաջնահերթությունների սահմանմամբ, որին հաջորդում է ներդրումների ներգրավման, մուտք գործելու, հաստատվելու և պահելու համապատասխան ռազմավարությունների մշակումը, և ի վերջո, կենսացիկլը ավարտվում է տեղական տնտեսության հետ կայուն կապերի զարգացմամբ:

Պատկեր 3. Ներդրումների կենսացիկլը



Աղբյուր՝ Առևտրի և մրցակցության դեպարտամենտ, ՀԲԽ

Թարգմանություն՝ Վարքազի խթաններ / Տեղական և ռազմավարություն / Տեղադրության խթաններ, / Ներդրումների ներգրավում / Ներդրումների հաստատում / Գարձաժամկետ, կոնկրետ բարեփոխումների գործողություններ / Օբյեկտիվորեն չափելի զարգացման ազդեցություն՝ Ներդրումների պահում / Գապեր և տարածում

Խթանները ներդրումային բարեփոխումների համախմբի միայն մի մասն են, ուստի դրանք պետք է դիտարկվեն ներդրումների ընդհանուր կենսացիկլի հետ միասին՝ բարեփոխումների ջանքերի արդյունավետությունն առավելագույնի հասցնելով նպատակով: Ներդրումների կենսացիկլը հաշվի է առնում ներդրումների ներգրավմանն ուղղված բարեփոխումների միջոցառումները, ՕՈՒՆ-ների պաշտպանությունը և պահումը, ինչպես նաև կապերը՝ ՕՈՒՆ-ներից դեպի տեղական տնտեսություն: Որպես դրա մաս՝ խթանների գործառույթը կարող է ընդարձակվել ավելի, քան պարզապես ՕՈՒՆ ներգրավելն է, այսինքն՝ տեղադրության խթանների միջոցով: Դրանք կարող են դեր կատարել նաև կապերի ստեղծման գործում, օրինակ՝ վարքազի խթանների կիրառման միջոցով խրախուսել աշխատողների ուսուցումը կամ տեղական ձեռնարկությունների վերազինումը/արդիականացումը: Հետևաբար, խթանների բարեփոխումը չպետք է նախագծվի մեկուսացման մեջ, այլ զգուշորեն մշակվի՝ որպես ներդրումային բարեփոխումների քաղաքականության, իրավական դաշտի, կարգավորման շրջանակի, վարչական գործընթացների և այլ բաղադրիչների մաս:

Խթանները ներդրողների տարբեր շարժառիթների համատեքստում

Միջազգային ընկերությունների կողմից տվյալ երկրում ներդրում կատարելու որոշումների վրա ներդրումային խթանների հնարավոր ազդեցությունը խորությամբ հասկանալու համար անհրաժեշտ է հաշվի առնել այն բազմաթիվ գործոնները, որոնք կարող մոտիվացնել ընկերություններին ՕՈՒՆ նախաձեռնելու գործում և այն հանգամանքը, որ այդ

մոտիվացիաները (շարժառիթները) իրենց հերթին ազդում են խթանների արդյունավետության վրա:

Գործնականում, անգամ լավագույն ՕՈՒՆ խթանման ռազմավարությունը հաճախ չի ծառայում որպես տնտեսության տվյալ ոլորտում ներդրումներ խթանելու արդյունավետ գործիք, որի պատճառը դրա անհամապատասխանությունն է ներդրողների շարժառիթներին: Ներդիր 1-ում ներկայացվում է ՕՈՒՆ-ների տարբերակման շրջանակը՝ ըստ ներդրողների շարժառիթների:

Ներդիր 1. ՕՈՒՆ տիպաբանություն

Անշուշտ, ՕՈՒՆ-ները կարևոր են տնտեսական աճի համար, սակայն, ոչ բոլոր օտարերկրյա ուղղակի ներդրումներն են նույնը.

- *Բնական ռեսուրսների շահագործմանը նպատակաուղղված ներդրում*⁴՝ մոտիվացվում է բնական ռեսուրսները գնահատելու և շահագործելու ներդրողի շահագրգռվածությամբ:
- *Շուկայական ուղղվածություն ունեցող ներդրում*⁴՝ մոտիվացվում է տեղական կամ տարածաշրջանային շուկաները սպասարկելու ներդրողի շահագրգռվածությամբ:
- *Ռազմավարական ակտիվների ձեռքբերմանը նպատակաուղղված ներդրում*⁴՝ մոտիվացվում է ռազմավարական ակտիվներ ձեռք բերելու ներդրողի շահագրգռվածությամբ (բրենդեր, մարդկային կապիտալ, բաշխման ցանցեր և այլն), որը հնարավորություն կընձեռի ընկերությանը մրցել տվյալ շուկայում: Սա հաճախ տեղի է ունենում միաձուլման և ձեռքբերման միջոցով⁴:
- *Արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրում*⁴՝ ՕՈՒՆ, որն ուղղվում է տվյալ երկիր որոշակի գործոններից օգուտ քաղելու նպատակով, որոնք կօգնեն մրցել միջազգային շուկաներում:


Վերջին կատեգորիան՝ արդյունավետության բարձրացմանն ուղղված ՕՈՒՆ, հատկապես կարևոր է այն երկրների համար, որոնք որոնում են համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրվելու և արժեշոթաներով վեր բարձրանալու ուղիներ: Այն հաճախ դիտարկվում է որպես աշխատատեղերի ստեղծման, տեխնոլոգիաների փոխանցման և համաշխարհային արժեշոթաներում երկրի ինտեգրման հնարավորություն: Ներդրումների այլ տեսակների համեմատությամբ՝ արդյունավետության բարձրացմանն ուղղված ՕՈՒՆ-ները շատ ավելի զգայուն են ծախսերի և բիզնեսի արդյունավետության ընդհանուր գործոնների հանդեպ, և սովորաբար, այդպիսի ՕՈՒՆ ներգրավելու և պահելու համար պահանջվում են բարեփոխումների ավելի մեծ ջանքեր քաղաքականություն մշակողներից:

Հաշվի առնելով այդ տարբեր առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց յուրահատուկ փոխհարաբերությունն առևտրի հետ (Նկար 4), **խթանները պետք է դիտարկվեն ՕՈՒՆ տիպաբանության շրջանակում:** Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ խթանների արդյունավետությունը մեծապես կախված է ներդրում կատարելու ներդրողի շարժառիթից (մոտիվացիայից).

⁴ Տարբերակման առումով ՕՈՒՆ-ի այս տեսակն ամենադժվարն է, որի պատճառով այն հաճախ դուրս է մնում ՕՈՒՆ տիպաբանության դասակարգումից:

- Շուկայական ուղղվածություն ունեցող և բնական ռեսուրսների շահագործմանը նպատակաուղղված ներդրումները գլխավորապես մոտիվացվում են տեղական շուկա մուտք գործելու հնարավորության կամ ռեսուրսների հասանելիության շարժառիթներով: Այդ ներդրողների համար ներդրումային խթանները սահմանափակ ազդեցություն ունեն տվյալ երկրում ներդրում կատարելու որոշումների վրա, ուստի, խթանները պարզապես չնախատեսված շահույթ ստանալու հնարավորություններ են (այն էլ՝ պետական բյուջեի հաշվին) նման ընկերությունների համար, որոնք այլ կերպ մուտք կգործեին երկիր՝ անկախ խթաններից:
- **Արդյունավետության բարձրացմանը նպատակաուղղված ներդրողները միտում ունեն ավելի մեծ ուշադրություն դարձնել տեղադրության խթաններին (օգտագործելով հարկի դրույքաչափերը որպես խթաններին «փոխարինող» գործիքներ), քան այլ տեսակի ներդրողները:** Պատկեր 5-ում ներկայացվում է այս երևույթի հետազոտական ապացույցը: Պատկերում ընդհանուր հարկի տոկոսադրույքը և ՕՈԻՆ-ների կանխատեսվող մասնաբաժինը ներմուծվում են որպես օրինակ վերցված արտադրության և ծառայությունների ոլորտներում՝ ընդգծելով, որ այն ոլորտները, որտեղ առկա են արտահանման ուղղվածություն ունեցող ավելի շատ ՕՈԻՆ-ներ (կանաչ գիծ), ավելի մեծ չափով են արձագանքում հարկի դրույքաչափերին, քան այն ոլորտները, որտեղ այդպիսի ՕՈԻՆ-ների (նարնջագույն և կարմիր գծեր) ներկայությունն ավելի քիչ է: Սա կարող է բացատրվել այն փաստով, որ նրանց որոշումները հիմնականում հիմնվում են ծախսերի և արդյունավետության գործոնների վրա, որոնց վրա խթանը կարող է ազդել:
- Բացի այդ, վարքագծի խթանները, որոնք նպատակուղղվում են ազդելու ներդրողների վարքագծի վրա, կարևոր դեր են կատարում բոլոր տեսակի ներդրողների համար՝ կապերի ստեղծման, գիտելիքների («նոու-հաու») փոխանցման և այլ օգուտների առումով:

Նկար 4. ՕՈԻՆ-ների տարբեր տեսակները և ներդրողների շարժառիթները. դրանց ազդեցությունը խթանների արդյունավետության վրա




Աղբյուր՝ Առևտրի և մրցակցության դեպարտամենտ, ՀԲՄ

թարգմանություն

Natural Resource seeking FDI - Բնական ռեսուրսների շահագործմանը նպաստակառուցված ՕՈՒՆ՝ մուտք է գործում երկիր առկա բնական ռեսուրսներն արդյունահանելու/շահագործելու նպատակով / Այն հանգեցնում է բնական ռեսուրսների կամ դրանց վրա հիմնված ապրանքների արտահանմանը Typically **limited** responsiveness to incentives – Սովորաբար, **սահմանափակ** արձագանք խթաններին **Շուկայական ուղղվածություն ունեցող ՕՈՒՆ՝** ուղղվում է երկիր տեղական շուկաներ մուտք գործելու նպատակով - Այն հանգեցնում է վերջնական ապրանքների ներքին իրացմանը սպառողներին կամ միջանկյալ ապրանքների իրացմանն այլ ընկերություններին **Արդյունավետության բարձրացմանն ուղղված ՕՈՒՆ՝** մուտք է գործում երկիր միջազգային արտադրության ցանցերում ծախսերը խնայելու նպատակով (օֆշորինգ) - Այն հանգեցնում է միջանկյալ ապրանքների ներմուծմանը ... և վերջնական կամ միջանկյալ ապրանքների արտահանմանը Typically **increased** responsiveness to incentives – Սովորաբար, խթաններին արձագանքելու **ավելի մեծ** ունակություն

Պատկեր 5. Ընդհանուր հարկերի դրույթաչափերի և ՕՈՒՆ-ների կանխատեսվող մասնաբաժինը տարբեր մակարդակի արտահանման ուղղվածություն ունեցող տնտեսության ոլորտներում



Աղբյուր՝ Առևտրի և մրցակցության դեպարտամենտ, ՀԲՄ

թարգմանություն

Հարկի դրույթաչափերն օրինակում - 25 50 75 տոկոսանիշ
 Օտարերկրյա ընկերությունների կանխատեսվող մասնաբաժինը
 ՕՈՒՆ-ների 0 տոկոս՝ արտահանման ուղղվածություն ունեցող ոլորտում
 ՕՈՒՆ-ների 25 տոկոս՝ արտահանման ուղղվածություն ունեցող ոլորտում

Խթաններն առանձին ոլորտներում, ենթաոլորտներում և ապրանքներում


Ի լրումն ներդրումների տեսակների՝ արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումների շրջանակներում որոշակի ոլորտների, ենթաոլորտների և անգամ ապրանքների կարիքները հաշվի առնելն էական նշանակություն ունի խթանների ցանկացած բարեփոխման համար: Չնայած այս հարցի առնչությամբ չկան համընդհանուր ուղեցույցներ, ՀԲԽ-ի կողմից իրականացված հետազոտությունը ցույց է տալիս, որ արտահանվող ապրանքների տարբեր տեսակներ կարող են ունենալ իրենց սեփական պահանջները ներդրումային միջավայրի առումով և հիմնավորել հետագա ենթադրությունները խթանների օգտակարության մասին:

Ստորև բերված Պատկեր 6-ում գնահատվում են այն պայմանները, որոնց ներքո սովորաբար տեղի է ունենում ընտրված արտահանվող ապրանքների արտադրությունը, այս դեպքում՝ հարկի դրույքաչափերը և կրթության մակարդակները: Պատկերում ներմուծվել են ռեգրեսիայի գործակիցները պարզ մոդելից, որը հարկերը և կրթության մակարդակները կապում է տվյալ բնագավառի շուկայի մասնաբաժնին՝ հսկելով համախառն ներքին արդյունքը (GDP/ՀՆԱ) և մեկ շնչին բաժին ընկնող համախառն ներքին արդյունքը (PCGDP): Ամփոփելով, քառակողմի վերին ձախ կողմում պատկերված կետերը ցույց են տալիս այն ապրանքները (օրինակ՝ օդանավեր և տիեզերանավեր կամ այդ բնագավառների համար արտադրվող ապրանքներ), որոնք հիմնականում արտահանվում են կրթության բարձր մակարդակներ և բարձր հարկեր ունեցող երկրների կողմից: Քառակողմի վերին աջ կողմում ներկայացված ապրանքները (օրինակ՝ էլեկտրատեխնիկա) կապված են կրթության բարձր մակարդակ և ցածր հարկեր ունեցող երկրների հետ, իսկ ներքևի աջ կողմում ներկայացվում են կրթության ցածր մակարդակ և ցածր հարկեր ունեցող երկրների կողմից արտադրվող ապրանքները (օրինակ՝ հագուստ):

Տարբեր պայմանները (բերված օրինակում՝ հարկման և կրթության առումով), որոնց ներքո տեղի է ունենում նշված ապրանքների արտադրությունը, ենթադրում են, որ ներդրումների համար երկրի արժեքի առաջարկը կախված է որոշակի ապրանքից: Օրինակ՝ այնպիսի ապրանքների համար ինչպիսիք են էլեկտրատեխնիկան և օդանավերը, խորհուրդ է տրվում, որ պետական քաղաքականությունը խթանի հմտությունների բարձրացումը, այլ ոչ թե նվազեցնի արտադրության ընդհանուր ծախսերը (ինքնարժեքը) հարկի դրույքաչափերի կամ հարկային խթանների միջոցով (որոնք երկուսն էլ ունեն նույն ազդեցությունը):

Խթանների ընտրողականությունը հասկանալու բարդության այս լրացուցիչ շերտը վեր է հանում մեկ այլ կարևոր հարց (որը քննարկվում է սույն փաստաթղթի հաջորդ բաժիններում), այն է՝ պատշաճ գնահատում իրականացնելու կարևորությունը նախքան խթաններ ներկայացնելը, ինչպես նաև հուսալի մշտադիտարկման և գնահատման մեխանիզմի առկայություն, որպեսզի գնահատվի, թե արդյոք խթանները հասնում են ցանկալի նպատակներին:

Պատկեր 6: Ոլորտային տարբերություններ, հարկերի և կրթության կարևորությունը⁵



Աղբյուր՝ Առևտրի և մրցակցության դեպարտամենտ, ՀԲԽ

Թարգմանություն
 Տվյալ բնագավառում երկրի շուկայի մասնաբաժնի մասով մասնագիտական կրթության մակարդակի ռեգրեսիայի գործակիցը (ՀՆԱ-ի և մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի հսկող ցուցանիշ)
 Կրթության բարձր մակարդակ, բարձր հարկ - Օղակազություն, տիրեզերագնացություն / մեքենաներ
 Կրթության բարձր մակարդակ, ցածր հարկ - էլեկտրատեխնիկա
 Կրթության ցածր մակարդակ, բարձր հարկ - ՉԻ ԵՆՏՄՆԴՈՒՄ ՊԱՏՃԱՄԱՎԱՐ ԿԱՊ
 Կրթության ցածր մակարդակ, ցածր հարկ / հագուստ
 ԿԵՇ-ի ռեգրեսիայի գործակիցը տվյալ ոլորտում երկրի շուկայի մասնաբաժնում (ՀՆԱ-ի և մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի հսկող ցուցանիշ)

Ավելի ընդարձակ ներդրումային միջավայրի կարևորությունը


Երկրի բարենպաստ գործարար միջավայրն առանցքային դեր է կատարում մասնավոր ներդրումների (ինչպես ներքին, այնպես էլ արտաքին) ներգրավման գործում և ծառայում է որպես հենասյուն ցանկացած հաջողված խթանների շրջանակի համար: Ավելին, լավ ներդրումային միջավայրի ստեղծումը կարող է և կնպաստի տնտեսապես կենսունակ, արդյունաբերականացված և գիտելիքահեն տնտեսության զարգացմանը, որը հանդիսանում է ՀՀ կառավարության նպատակներից մեկը:

Բոլոր տեսակի ՕՈՒՆ-ների շարքում **արդյունավետության բարձրացմանն ուղղված ՕՈՒՆ-ներն ամենազգայունն են ներդրումային միջավայրի որակի հանդեպ:** Ուստի, խթանները պետք է ներկառուցվեն ընդհանուր ներդրումային ռազմավարությունում՝ ներդրումային միջավայրի բարելավման և այն օտարերկրյա ներդրողների համար գրավիչ դարձնելու նպատակով:

⁵ Երկու առանցքների վրա նշված գործակիցները որոշվում են բնագավառին հատուկ միջերկրյան գլոբալ ռեգրեսիայով: X առանցքը ցույց է տալիս կորպորատիվ եկամտահարկի (CIT) գործակցի ռեգրեսիան՝ տվյալ բնագավառում երկրի շուկայի մասնաբաժնի մասով (հանդիսանում է ՀՆԱ-ի և մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի հսկիչ ցուցանիշ): Y առանցքը ցույց է տալիս տվյալ բնագավառում երկրի շուկայի մասնաբաժնի մասով մասնագիտական կրթության մակարդակի ռեգրեսիայի գործակիցը (նույնպես հանդիսանում է ՀՆԱ-ի և մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի հսկիչ ցուցանիշ):

Խթանները չեն լինի Հայաստանում լավ ներդրումային միջավայրին «փոխարինիչ», և այդ այլ պարտադրի արգելքների հասցեագրումն անհրաժեշտություն է ներդրումների խրախուսման համար: Ներդրումային միջավայրի խորհրդատվական հետազոտությունը⁶ ցույց տվեց, որ թույլ ներդրումային միջավայր ունեցող երկրների համար ավելի ցածր սահմանային արդյունավետ հարկային դրույքաչափը (METR/ՍԱՀԴ) սահմանափակ ազդեցություն ունի ՕՈՒՆ-ների վրա (Պատկեր 7): Միջին արձագանքը շատ ավելի արտահայտված է երևում լավ ներդրումային միջավայր ունեցող երկրներում: Օրինակ, եթե ՍԱՀԴ-ը կազմում է 20 տոկոս՝ 40 տոկոսի փոխարեն, ապա այն 1 տոկոսով ավելացնում է ՕՈՒՆ-ի մասնաբաժինը ՀՆԱ-ում՝ այն երկրներում, որոնց ներդրումային միջավայրը վարկանշվել է ստորին կեսում, մինչդեռ ՍԱՀԴ-ի նույն տարբերությունը հանգեցնում է ութ անգամ ավելի մեծ ազդեցության այն երկրներում, որոնք դասվել են վերին կեսում: Այս արդյունքը թույլ է տալիս ենթադրելու, որ հարկային խթանները շատ ավելի քիչ արդյունավետ են ավելի թույլ ներդրումային միջավայրերում, քան ավելի ուժեղներում:

Պատկեր 7. Ֆիսկալ խթանների և ներդրումային միջավայրի արդյունավետությունը



Աղբյուր՝ Ջեյմս (2009թ.), ՀԲԽ

Թարգմանություն
 ՕՈՒՆ-ի %-ը ՀՆԱ-ում / ՍԱՀԴ-ի իջեցումը գրեթե ոչ մի ազդեցություն չի թողնում ՕՈՒՆ-ի վրա / թույլ ներդրումային միջավայր (ՎԻՄ) ունեցող երկրներում / Սահմանային արդյունավետ հարկային դրույքաչափը (METR/ՍԱՀԴ) - Բարձր ՆՄ երկրներ / Ցածր ՆՄ երկրներ / Միտում Բարձր ՆՄ երկրներ / Միտում Ցածր ՆՄ երկրներ

ԳԼՈՒԽ 3. Հայաստանի կողմից առաջարկվող խթանների համեմատությունը ԵԿԱ տարածաշրջանի երկրների հետ

⁶ Ջեյմս, 2013թ.

Այս բաժնում ներկայացվում են ԵԿԱ տարածաշրջանի երկրների միտումների համեմատությունները, ինչպես նաև ներկայումս Հայաստանում առաջարկվող ներդրումային խթանների համառոտ նկարագրությունը:

Համեմատություն Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի միտումների հետ

ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովի /UNCTAD/ՄԱԿ Ա.ՁՀ/ (2017)⁷ հետազոտության արդյունքները վկայում են, որ ԵԿԱ տարածաշրջանում վերջերս նկատվող միտումները զգալի առաջընթաց են ցույց տալիս ԵԿԱ մի շարք երկրների միջև հարկերի դրույքաչափերի, այդ թվում՝ հարկերից ազատելու արտոնությունների շուրջ ընթացող երկարատև և վնասակար ֆինակալ մրցակցությանը վերջ դնելու առումով: Շատ երկրներ որոշել են զսպել առատաձեռն խրախուսումը, քանի որ համոզվել են, որ այն բերում է սահմանափակ եկամուտ՝ զգալիորեն չամրապնդելով ՕՈՒՆ-ների ներգրավումը:

Որոշ տնտեսություններ քայլեր են ձեռնարկել նաև ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխանություն ապահովելու ուղղությամբ՝ վերացնելով կամ աստիճանաբար հրաժարվելով խթանման շատ սխեմաներից: Որոշ երկրներ վերջերս բարձրացրել են կորպորատիվ եկամտահարկի դրույքաչափը կամ կատարել են կորպորատիվ հարկային եկամուտների մասով այլ ճշգրտումներ: Կորպորատիվ եկամտահարկի ռեժիմները ԵԿԱ տարածաշրջանի երկրներում ընդհանուր առմամբ պարզ են. տնտեսությունների մեծ մասը կիրառում է կորպորատիվ եկամտահարկի միասնական դրույքաչափ, իսկ որոշ երկրներ կիրառում են պարզեցված հարկման ռեժիմ ՓՄՁ-ների համար: Չնայած կորպորատիվ հարկային ռեժիմների հիմնական բնութագրերում ԵԿԱ տարածաշրջանի տնտեսությունների միջև առկա զգալի տարբերություններին՝ գործող հարկային բեռը զուգամիտման հակում ունի:

Տարածաշրջանի որոշ երկրներ կրճատում են հարկային ռեժիմի բարդությունը, որը նույնպես ցույց է տալիս նրանց կողմից լավ հարկային վարչարարության կարևորումը: Կորպորատիվ հարկի բազմաթիվ դրույքաչափերով և մեծ թվով խթանման սխեմաներով բնութագրվող բարդ հարկային ռեժիմներն առաջացնում են վարչարարության հետ կապված բարդություններ հարկային մարմինների համար, իսկ ներդրողների համար՝ համապատասխանություն ապահովման հետ կապված բարդություններ: Այս համատեքստում, ԵԿԱ տարածաշրջանի երկրները քայլեր են ձեռնարկում իրենց խթանման ռեժիմների ներդաշնակեցման, ինչպես նաև ծախսերի ու օգուտների վերլուծության և մշտադիտարկման համակարգերի ներկայացման ուղղությամբ:

Մի քանի երկրներ իրականացվում են նաև խթանների ազդեցության պարբերական գնահատումներ և ծախսերի ու օգուտների վերլուծություն՝ ցանկալի նպատակներին հասնելու առումով դրանց արդյունավետությունը վերանայելու նպատակով⁸:

⁷ Ներդրումային քաղաքականության ուսումնասիրություն RCC երկրներում (պատրաստ կլինի շուտով)

⁸ ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողով, UNCTAD (2016)

Որպեսզի Հայաստանը շարունակի մնալ մրցունակ տարածաշրջանային մակարդակով, ՀՀ կառավարությունը պետք է շարժվի համանման ուղղությամբ՝ այս ասպեկտների առումով:

Ներդիր 2. ԵԿԱ տարածաշրջանի երկրների ֆիսկալ և խթանների ռեժիմների բարելավումների օրինակներ⁹

- **Վերջին երկու տասնամյակում «մրցավազքի» ուղղության հակադարձում դեպի ներքև.** Որոշ տնտեսություններ (օրինակ՝ Ալբանիա և Մոլդովա) վերջերս բարձրացրել են կորպորատիվ եկամտահարկի դրույքաչափը կամ կատարել են կորպորատիվ հարկային եկամուտների մասով այլ ճշգրտումներ:
- **Հարկային ռեժիմների բարդության կրճատում.**
 - 2016 թվականին Բոսնիայի և Հերցեգովինայի Դաշնությունը վերացրեց արտահանման խրախուսմանն ուղղված հարկային խթանները: Սերբական Հանրապետությունը վերացրել է շահութահարկի հատուկ ռեժիմը փոքր հարկատուների համար:
 - 2015 թվականին Մոլդովայի Հանրապետությունը վերացրեց առևտրային բանկերի և միկրոֆինանսավորող կազմակերպությունների համար նախատեսված խթանները:
 - 2014 թվականին Սերբիան վերացրեց նոր հիմնական միջոց ձեռք բերելու համար տրամադրվող հարկային զեղչը:
 - Բազմաթիվ ֆիսկալ խթանների սխեմաները պահպանվում են միայն Մոլդովայի Հանրապետությունում (բացառությամբ ՓՄՁ-ների համար նախատեսված հատուկ ռեժիմների, որոնք պահպանվում են նաև այլ երկրներում):
- **Խթանների համակարգում/ուղղորդում և ծախսերի ու օգուտների վերլուծության ներկայացում.** Մոնտենեգրո, Սերբիա և Նախկին Հարավսլավիայի Մակեդոնիա Հանրապետություն:

Չնայած այդ բարելավումների՝ ֆիսկալ խթանների տրամադրման քաղաքականությունները ԵԿԱ տարածաշրջանի երկրների մեծ մասում դեռևս ամբողջությամբ համապատասխանեցված չեն միջազգային լավագույն փորձին:

Ստորև բերված Պատկեր 8-ում ներկայացվում է Հայաստանի և ԵԿԱ տարածաշրջանի ընտրված մի շարք երկրների կողմից առաջարկվող ներդրումային խթանների տարբեր սխեմաների համեմատությունը, որից բխող մի քանի դիտարկում ներկայացվում է ստորև.

- Ի հակադրություն միջազգային լավագույն փորձի՝ ԵԿԱ տարածաշրջանի երկրների մեծ մասն առաջարկում է խթաններ՝ **առանց հստակ ձևակերպված քաղաքականության նպատակների փաթեթի:** Եթե հնարավոր է դիտարկել, որ երկրների մեծ մասը կիրառում է ամբողջ տնտեսության և առանձին ոլորտների մակարդակով առաջարկվող խթանների համադրություն, ինչպես նաև միավորում է ֆիսկալ և ոչ ֆիսկալ խթանները, ապա դրանց հիմքում ընկած նպատակներն ամեննին էլ պարզ չեն:
- ԵԿԱ տարածաշրջանի երկրներից շատերին չի հաջողվում նաև ապահովել համապատասխանությունը **խթանների կառավարման և գնահատման** միջազգային լավագույն գործելակերպին: Այդպիսի գործելակերպը սահմանում է, որ ներդրումային խթանները պետք է սահմանափակվեն ժամկետներով, իսկ դրանց կառավարման պատասխանատվությունը հանձնվի անկախ մարմնին կամ նախարարությանը, որը չունի ներդրումների ներգրավման համար կատարողականի թիրախների հակասական

⁹ UNCTAD (2016) և Առևտրի և մրցակցության դեպարտամենտ, ՀԲԽ

նպատակներ: Բացի այդ, շատ դեպքերում խթանները պետք է առաջարկվեն նախապես որոշված և օբյեկտիվ չափանիշների հիման վրա, և կապված լինեն որոշակի զարգացման նպատակների հետ: Դրանք միշտ պետք է գնահատվեն երկարաժամկետ ծախսերի և օգուտների առումով:

Հայաստանը՝ համեմատվող երկրների նման, հիմնվում է ինչպես հարկային, այնպես էլ ֆինանսական ներդրումային գործիքների վրա¹⁰: Ինչպես ԵԿԱ տարածաշրջանի մյուս երկրները, ՀՀ կառավարությունը չի նշում համապատասխան իրավական հղումներում ներդրումների խթանման իր ծրագրերի քաղաքականության նպատակները, որը դժվարեցնում է ինչպես խթանների արդյունավետ նախագծման, այնպես էլ դրանց գնահատման աշխատանքները¹¹:

Պատկեր 8. ԵԿԱ տարածաշրջանի երկրների ներդրումային խթանների համեմատություն

Երկիր	Քաղաքականության նպատակներ	Տնտեսության/ոլորտի մակարդակով	Ֆիսկալ, ոչ ֆիսկալ
Հայաստան	Առկա չէ (Ա/Չ)	52%, 48%	70%, 30%
Արևմտյան Բալկաններ¹²			
Ալբանիա	«Հարկային խթանները նպատակաուղղված են ներդրումների խրախուսմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, եկամուտների մեծացմանը, առաջադեմ տեխնոլոգիաների ներդրմանը և տարածաշրջանային զարգացման աճին» ¹³	54%; 46%	82%, 18%
Բոսնիա	Ա/Չ	63%, 38%	92%, 8%
Խորվաթիա	Ա/Չ	93%, 7%	50%, 50%
Կոսովո	Մի քանի, ներառյալ՝ աջակցություն արտահանող ընկերություններին, գյուղատնտեսության ոլորտում վերամշակման և արտադրության ծավալների	24%, 76%	41%, 59%

¹⁰ ՏՁՆՆ-ի (հարկային արտոնությունների մասով) և ՓՄՁ գործակալության կողմից տրամադրված տեղեկությունների հիման վրա (ֆինանսական խթանների մասով):

¹¹ Ջեկոյցի կազմման ընթացքում խթանների մասին ՀԲԽ-ին տրամադրված տեղեկությունների հիման վրա:

¹² Արևմտյան Բալկանների երկրների ներդրումային խթանների համապարփակ տվյալների բազան/գույքացանկը ներկայացվում է Հավելված 5-ում: Տեղեկությունները վեր են հանվել PWC-ի, KPMG-ի and Deloitte-ի կողմից մշակված «Երկրի մասին տեղեկություններ» հրապարակումներից, ներդրումների մասին զեկույցներից, հարկային ամփոփագրերից, ինչպես նաև ՀԲԽ-ի կողմից խթանների վերաբերյալ նախկինում իրականացված հետազոտություններից:

¹³ Նույնը:

	աճի խթանում, աջակցություն ֆերմերներին՝ մասնագիտական ծառայությունների մատուցման միջոցով:		
Նախկին Հարավսլավիայի Մակեդոնիա Հանրապետություն	Ա/Չ	100%, 0%	62%, 38%
Մոնտենեգրո	Ա/Չ	70%, 30%	100%, 0%
Սերբիա	Ա/Չ	89%, 11%	66%, 33%
Կենտրոնական Ասիա¹⁴			
Ղազախստան	Ա/Չ	13%, 87%	22%, 78%
Ղրղզստան ¹⁵	պետք է սահմանվի (TBD)	40%, 60%	78%, 22%
Տաջիկստան	Ա/Չ	14%, 86%	87%, 13%

Աղբյուր՝ Առևտրի և մրցակցության դեպարտամենտ, ՀԲԽ

ԳԼՈՒԽ 4. Հայաստանի կողմից առաջարկվող խթանների համեմատությունը միջազգային լավագույն փորձի հետ

Այս բաժնում ներկայացվում է Հայաստանի կողմից ներկայումս առաջարկվող խթանների

¹⁴ Համապատասխան հաճախորդների կողմից ՀԲԽ-ին տրամադրված կոնֆիդենցիալ տեղեկությունների հիման վրա:

¹⁵ Ղրղզստանի Հանրապետության կառավարությունը՝ ՀԲԽ-ի աջակցությամբ, հրապարակել է ներդրումային խթանների վերանայման ուսումնասիրությունը, հղում՝ [following link](#).

ամփոփ նկարագրությունը: Այնուհետև, ներկայացվում են ներդրումային խթանների մշակման և տրամադրման մի շարք սկզբունքներ՝ միջազգային լավագույն փորձին համապատասխան, ինչպես նաև բերվում են միջազգային լավագույն փորձի օրինակներ և դրանց համեմատությունը Հայաստանի ընթացիկ գործելակերպի հետ:

Հայաստանի ընթացիկ խթանների համակարգը

Սույն զեկույցի մշակման ընթացքում ՀԲԽ-ին տրամադրված տեղեկությունների համաձայն՝ ներկայումս Հայաստանն առաջարկում է 27 տարբեր ներդրումային խթաններ, որոնք ունեն ինչպես ֆիսկալ, այնպես էլ ոչ ֆիսկալ բնույթ: Որոշ խթաններ պարունակում են մեկից ավելի հարկերից ազատելու արտոնության տրամադրում արդյունաբերական և ազատ տնտեսական գոտիներում: Գործող օրենսդրության համաձայն¹⁶ որոշ լրացուցիչ արտոնությունների տրամադրումը կարող է բանակցվել առանձին դեպքերի համար՝ տնտեսության որոշակի և (կամ) տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներում ներդրումների խրախուսման նպատակով¹⁷:

Հաջորդ պարբերություններում ներկայացվում է Հայաստանում ներկայումս առաջարկվող ֆիսկալ և ֆինանսական ներդրումային խթանների ամփոփ նկարագրությունը: Խթանների մանրակրկիտ ցանկը ներկայացվում է խթանների գույքացանկում, որը ներկայացվել է ՏԶՆՆ-ին՝ որպես սույն զեկույցի առանձին փաստաթուղթ:

Ֆիսկալ խթաններ

- **Ազատում եկամտային հարկից և շահութահարկից՝ սահմանված ոլորտներում**
 - i. Շահութահարկի նվազեցման արտոնությունը տրվում է խոշոր արտահանողներին, որոնց համար շահութահարկի դրույքաչափը կարող է լինել 5 կամ 2 տոկոս՝ կախված սահմանված չափանիշների համապատասխանության ապահովումից: Այս հատուկ հարկային արտոնությունը տարածվում է բոլոր ոլորտների վրա, բացառությամբ՝ հանքարդյունաբերություն, ոսկերչություն, թանկարժեք մետաղների և քարերի մշակում, ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտադրություն:
 - ii. Շահութահարկի դրույքաչափը նվազեցվում է շինարարության և շինմոնտաժման ոլորտում ՀՀ տարածքից դուրս գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների համար, որի դեպքում կիրառվում է շահութահարկի 5% դրույքաչափ: Այս դրույքաչափը կիրառվում է ծրագրի գործողության ամբողջ ժամկետում: Արտոնությունից իրավասու են օգտվել շինարարության և շինմոնտաժման ոլորտներում գործունեություն իրականացնող ընկերությունները:
 - iii. Շահութահարկի նվազեցումը կիրառվում է ՀՀ կառավարության կողմից հաստատված գործարար ծրագրի մեկնարկման և դրան հաջորդող երկու հաշվետու տարիների համար. հարկ վճարողը կարող է շահութահարկի գումարը նվազեցնել գործարար

¹⁶ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենք

¹⁷ ՀԲԽ-ի կողմից իրականացված խթանների համակարգի ուսումնասիրության նախնական արդյունքներ:

ծրագրի շրջանակներում շահութահարկի հաշվին ստեղծված նոր աշխատատեղերի մասով՝ 100 տոկոսի չափով: Նվազեցումը չի կարող լինել ավելին, քան համապատասխան հաշվետու տարվա համար հաշվարկված փաստացի շահութահարկի գումարի 30%-ը: Այս խթանի սահմանված նպատակը ներդրումային ծրագրի շրջանակներում նոր աշխատատեղերի ստեղծումն է:

- iv. Շահութահարկի որոշակի նվազեցումներ են նախատեսվում ձեռագործ գորգեր արտադրողների համար՝ երկրի ամբողջ տարածքում: Հարկ վճարողները կարող են նվազեցնել ձեռագործ գորգերի իրացումից ստացվող հասույթները եկամտային հարկով հարկման ենթակա հասույթներից:
- v. Շահութահարկի որոշակի նվազեցումներ են նախատեսվում գյուղատնտեսական արտադրանք արտադրողների համար՝ երկրի ամբողջ տարածքում: Այս դեպքում, հարկ վճարողը կարող է նվազեցնել գյուղատնտեսական արտադրանքի իրացումից և հարակից այլ գործունեությունից ստացված հասույթները, եթե վերջիններիս տեսակարար կշիռը համախառն եկամտի մեջ չի գերազանցում 10 տոկոսը:
- vi. **Հարկային արտոնություններ SS ոլորտի համար**
 - SS ոլորտում նոր ընկերությունների ստեղծումը և զարգացումը խթանելու նպատակով՝ ՀՀ կառավարությունը SS ոլորտում գործունեություն իրականացնող հավաստագրված ընկերություններին առաջարկում է հետևյալ հարկային արտոնությունները՝
 - շահութահարկից ազատում,
 - նվազեցում հարկման ենթակա եկամուտներից, և
 - եկամտային հարկի դրույքաչափի նվազեցում աշխատողների աշխատավարձի մասով (10%):
- vii. **Հարկային արտոնություններ բժշկական ոլորտի համար**
 - Բժշկական ապրանքների և ծառայությունների իրացման հետ կապված գործառնություններն ազատվում են ԱԱՀ-ից:

● **Մաքսատուրքերից ազատում սահմանված ոլորտներում ապրանքների ներմուծման համար**

- i. Ընկերություններն ազատվում են ՀՀ տարածքում օգտագործելու համար նախատեսված տեխնոլոգիական սարքավորումների և նյութերի ներմուծման մաքսատուրքերից: Ինչպես նշվում է Հայաստանի զարգացման հիմնադրամի կողմից, գերակա են համարվում հետևյալ ոլորտները¹⁸.
 - գյուղատնտեսություն / սննդի վերամշակում
 - ավիոհոլային խմիչքներ
 - էներգետիկա
 - ֆինանսներ
 - տեղեկատվական տեխնոլոգիաներ
 - ոսկերչություն

¹⁸ <http://www.dfa.am/wp-content/uploads/2017/03/Investment-One-pager.pdf>

- հանքարդյունաբերություն
 - դեղագործական արդյունաբերություն
 - տեքստիլ
 - զբոսաշրջություն
 - տրանսպորտ:
- **Ազատ տնտեսական գոտիներ. հատուկ խթաններ**
 - i. Հայաստանի երկու տնտեսական գոտիներում¹⁹ գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտներն օգտվում են մի շարք ֆիսկալ խթաններից: Տրամադրելով այդ խթանները՝ ՀՀ կառավարությունը նպատակ է հետապնդում ստեղծել նոր աշխատատեղեր, խրախուսել տեխնոլոգիական զարգացումը, խթանել ՕՈՒՆ-ների ներգրավումը և մեծացնել արտահանման ծավալները: Այդ ազատ տնտեսական գոտիներում գործունեություն իրականացնող ընկերությունները ազատվում են՝
 - շահութահարկից,
 - ԱԱՀ-ից,
 - գույքահարկից,
 - մաքսատուրքերից:
 - **Արդյունաբերական գոտիներ. հատուկ խթաններ**
 - i. Արդյունաբերական և կլաստերային զարգացումը խթանելու նպատակով ՀՀ կառավարությունն առաջարկում է շահութահարկի, անշարժ գույքի հարկի մասով արտոնություններ, ինչպես նաև ընձեռում է ֆինանսական և խորհրդատվական աջակցություն ստանալու հնարավորություններ:
 - **Ազատում ավելացված արժեքի հարկից**
 - i. Առաջարկվում է ԱԱՀ գումարների վճարման ժամկետի հետաձգում մինչև 3 տարի ժամկետով՝ կախված ներմուծվող ապրանքների տեսակից և ներմուծման ծավալից:
 - **Հարկային խթաններ որոշակի շրջաններում**
 - i. Տարածքային զարգացումն ամրապնդելու նպատակով ՀՀ կառավարությունն առաջարկում է ազատում շահութահարկից, եկամտային հարկից և ԱԱՀ-ից՝ որոշակի տարածքներում:
 - ՀՀ կառավարության կողմից հաստատված տարածքներ / Տավուշի մարզ:

Ֆինանսական խթաններ²⁰

¹⁹ «Ալիանս» Ազատ տնտեսական գոտին մասնագիտացված է նորարար տեխնոլոգիաների ոլորտում՝ էլեկտրոնիկա, ճշգրիտ ճարտարագիտություն և ՏՏ: Այդ գոտին ներառում է նաև տեղում գործող «մեկ կանգառ» ծառայություններ և մաքսային գրանցումներ: «Մերիդիան» Ազատ տնտեսական գոտին հիմնականում աղամանդագործության, ժամագործության և ոսկերչության կլաստեր է:

²⁰ «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ, Հայաստան՝ <http://smeinvest.am/>

- **Սուբսիդավորվող վարկեր ՓՄՁ-ների համար**

- i. Հայաստանի ՓՄՁ-ների համար սուբսիդավորվող վարկեր են առաջարկվում հետևյալ կազմակերպությունների կողմից.

- «ՓՄՁ ներդրումներ» ՈԻՎԿ ՓԲԸ²¹
 - Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամ
 - Հայաստանի զարգացման հիմնադրամ (ՀԶՀ)²²
 - «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ

- **Արտոնյալ պայմաններով գյուղատնտեսական տեխնիկային ֆինանսական վարձակալություն՝ լիզինգ**

- i. Հայաստանում արտոնյալ պայմաններով գյուղատնտեսական տեխնիկային ֆինանսական վարձակալություն են տրամադրում հետևյալ կազմակերպությունները.

- «ՓՄՁ ներդրումներ» ՈԻՎԿ ՓԲԸ
 - Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամ
 - ՍՊԵՑՄԱՇ Սպը

- **Արդյունաբերական գոտիներում որոշակի ծախսերի մասով ծախսերի բաշխում և խորհրդատվական աջակցության հնարավորություններ**

- i. Տես վերևում՝ «ֆիսկալ խթաններ» «արդյունաբերական գոտիների» համար:

Հայաստանի համապատասխանությունը քաղաքականության նպատակներին և արդյունավետության բարձրացմանն ուղղված ՕՈԻՆ-ներին

Միջազգային լավագույն փորձ 1. Բոլոր ընկերություններին ընդհանուր խթաններ տրամադրելու փոխարեն՝ ծախսարդյունավետ խթանման ծրագրերը պետք է հստակ կապվեն քաղաքականության այն նպատակին, որը ձգտում է իրագործել, և լինեն նպատակաուղղված՝ իրավասու ընկերությունների և խթանների տրամադրման համար կիրառելի գործիքների առումով: Խթանների կիրառման քաղաքականության նպատակի հստակ սահմանումը կարևոր է նաև մշտադիտարկման և գնահատման համար, որպեսզի հնարավոր լինի համադրել կատարողականը սահմանված նպատակի հետ:

Հիմնավորում. Չնայած շատ երկրներ, ընդհանուր առմամբ, շահագրգռված են բարձրացնել իրենց ներդրումների մակարդակը, դրա իրականացումը հազվադեպ է դառնում քաղաքականության նպատակ: Օրինակ՝ որոշ երկրներ կարող են հատուկ շահագրգռված լինեն խրախուսելու օտարերկրյա տեխնոլոգիաների ներկայացումը և ներդրումը, որոնք հաճախ

²¹ Գործունեության հիմնական ոլորտները՝ գյուղատնտեսություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ծառայությունների մատուցում:

²² Այդ վարկերը հատուկ նպատակաուղղվում են արտահանման ուղղվածություն ունեցող արտադրական ձեռնարկություններին:


ուղեկցում են ՕՈԻՆ-ներին: Այլ երկրների համար աշխատատեղերի ստեղծումը կարող է հանդիսանալ քաղականության հիմնական նպատակը: Շատ երկրներում սահմանվում են նաև ոլորտային գերակայություններ կամ նրանք շահագրգռված են բազմազանեցնելու իրենց տնտեսությունը՝ նոր ոլորտներում ներդրումներ ներգրավելու միջոցով:

Հայաստան. Հայաստանի կողմից առաջարկվող խթանները, թվում է, նախագծվել են «ad hoc» կարգով (առանձին դեպքի համար)՝ պատշաճ ուշադրություն չդարձնելով քաղաքականության նպատակներին: Օրինակ՝ արտոնության «նպատակի» ընդհանուր նկարագիրը տրվում է հարկային արտոնությունների միայն 30 տոկոսի մասով: Այդուհանդերձ, շատ դեպքերում նկարագիրը չի կարող որակվել որպես քաղաքականության հստակ նպատակ²³: Քաղաքականության նպատակների և ՕՈԻՆ ներգրավման գերակա ոլորտների միջև կապերի բացակայության պարագայում հնարավոր չէ դատել, արդյոք խթաններն իսկապես աշխատում են, թե ոչ:

2015 թվականի հոկտեմբերին **ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգի** ընդունումը կարևոր հիմք ստեղծեց Հայաստանի ներդրումային քաղաքականության առնչությամբ կատարելագործված մոտեցում մշակելու համար: Մասնավորապես, ՀՀ կառավարությունը կենտրոնացրել է իր ուշադրությունը արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումների ներգրավման և պահման վրա, որոնք ունեն գիտելիքները և երկրի արտադրողական կարողություններն արդիականացնելու, միջազգային արժեշրթաններում տեղական տնտեսության ինտեգրմանն աջակցելու մեծ ներուժ: Մակայն, արդյունավետության բարձրացմանն ուղղված ՕՈԻՆ-ների մասնաբաժինը դեպի Հայաստան ուղղորդվող օտարերկրյա ներդրումների ընդհանուր հոսքում դեռևս փոքր է, ինչպես ծավալների, այնպես էլ ծրագրերի քանակի առումով: Խթաններ պետք է համապատասխանեցվեն այս նպատակին:

²³ Մույն գեկույցի մշակման ժամանակահատվածում խթանների մասին ՀԽԲ-ին տրամադրված տեղեկությունների հիման վրա:

Պատկեր 9. Նոր (գրինֆիլդ) ՕՈՒՆ-ներ՝ ըստ ծրագրերի քանակի, որոնք իրականացվել են Հայաստանում 2003թ. հունվարից մինչև 2016 թվականի նոյեմբերն ընկած ժամանակահատվածում



Աղբյուր՝ Համաշխարհային բանկի հաշվարկներ՝ ՕՈՒՆ շուկաների և «Observatory of Economic Complexity» կայքի տվյալների հիման վրա:

Թարգմանություն - Նոր ՕՈՒՆ (ծրագրերի քանակ) / (2003թ. հունվար. - 2016թ. նոյեմբեր) / Բնական ռեսուրսների շահագործմանը նպաստակառուցված ՕՈՒՆ (% մասնաբաժին) / Շուկայական ուղղվածություն ունեցող ՕՈՒՆ (% մասնաբաժին) / Արդյունավետության բարձրացմանն ուղղված ՕՈՒՆ (% մասնաբաժին)

Միջազգային լավագույն փորձ 2. Երբ խթաններն օգտագործվում են ՕՈՒՆ ներգրավելու համար (տեղադրության խթաններ), կարևոր է հասկանալ ներդրողի շարժառիթը, և խթանները կենտրոնացնել այդ ներդրողների վրա:

Հիմնավորում. Ինչպես արդեն քննարկվել է, ներդրումային խթանը միշտ չէ, որ կարող է հանդիսանալ ներդրումները որոշակի ոլորտ ուղղորդելու արդյունավետ գործիք: Ինչպես արդեն քննարկվել է, արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումն ավելի արձագանքող է, քան ներդրումների մյուս տեսակները, այդուհանդերձ, անհրաժեշտ է դիտարկել յուրաքանչյուր ոլորտ և ենթաոլորտ:

Հայաստան. Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության հայեցակարգի (2015թ. հոկտեմբեր) համաձայն՝ ՀՀ կառավարությունը ձգտում է ներգրավել արդյունավետության բարձրացմանն ուղղված ավելի շատ երկարաժամկետ ՕՈՒՆ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արդյունավետություն փնտրող ներդրողները հավանական է, որ ավելի մեծ հետաքրքրություն կցուցաբերեն հարկային և ֆինանսական խթանների հանդեպ՝ ՀՀ կառավարությունը դեռևս պետք է համապատասխանեցնի իր կողմից առաջարկվող ներդրումային խթանները միջազգային լավագույն փորձին, որպեսզի առավելագույնի հասցնի երկրի մրցակցային առավելությունները և տնտեսական ներուժը:

Հայաստանի համապատասխանությունը թափանցիկության սկզբունքին (խթանների մասին տեղեկատվության հասանելիություն)

Միջազգային լավագույն փորձ 3. Իշխանությունները պետք է վարեն տարբեր գործակալությունների կողմից առաջարկվող բոլոր խթանների կենտրոնացված տվյալների բազա/գույքացանկ, որը ներառում է թափանցիկ տեղեկություններ հետևյալի մասին՝ տրամադրվող խթան, իրավասության չափանիշներ, խթանի տրամադրման/շնորհման և կառավարման գործընթաց, իրավական հղում, տրամադրվող գումարների չափ և այլն: Գույքացանկը պետք է հասանելի լինի հանրությանը՝ հեշտ կիրառելի ձևաչափով, իսկ այն հրապարակելու և կանոնավոր հիմունքներով թարմացնելու պահանջը պետք է ամրագրվի օրենքով կամ կառավարության հրահանգով/հրամանով:

Հիմնավորում. Խթանների թափանցիկության բարձրացումը պետք է դառնա կառավարության բարեփոխումների օրակարգի գլխավոր հարցը՝ առնվազն հետևյալ հինգ պատճառներով.

- 1. Ստանալ ավելի մեծ օգուտներ.** Խթանների թափանցիկությունը կօգնի ներգրավել ավելի մեծ թվով որակավորված դիմումատուներ/ներդրողներ, որն իր հերթին կհանգեցնի ավելի բարձր սոցիալ-տնտեսական օգուտների ստացմանը: Օրինակ՝ բարձր աճի կամ սոցիալական ազդեցության ներուժ ունեցող ընկերությունները, որոնք բավարարում են իրավասության չափանիշները, հաճախ չեն դիմում խթաններ ստանալու համար, քանի որ իրազեկված չեն: Սա կարող է հանգեցնել թերնետրոմներին կամ վատագույն դեպքում՝ ներդրումների բացակայությանը, մասնավորապես այն ոլորտներում, որտեղ խթանները կարող են ազդել երկրի ընտրության հարցում ներդրողի որոշման վրա: Երկիրը զրկվում է ոչ միայն ներդրումներից («չստացված ներդրումներ»), այլև այնպիսի օգուտներից, ինչպիսիք են՝ ավելի շատ և ավելի որակյալ աշխատատեղ, արտադրողականություն: Ի հակադրություն սրան՝ թափանցիկությունը կարող է պաշտպանել գործող շահառուների շահերը: Երբ գործող շահառուները մրցակցային առումով ամենաուժեղները չեն կառավարության նպատակներին հասնելու առումով, սա կարող է հանգեցնել ենթաօպտիմալ արդյունքների: Վատագույն սցենարի դեպքում այն կարող է խաթարել մրցակցությունը և հանգեցնել անբարեխիղճ վարքագծի դրսևորումներին:
- 2. Խնայել ժամանակը և կրճատել ծախսերը.** Խթանների թափանցիկությունն օգնում է ընկերություններին կրճատել դրանց մասին տեղեկությունների որոնման ծախսերը և ժամանակը: Հաճախ, ներդրողները վարձում են խորհրդատուներ, որպեսզի նրանք օգնեն իրենց այդ գործընթացում. սա կարող է լինել բավականին ծախսատար նախաձեռնություն՝ մասնավորապես միջին և բարձր միջին երկամուտ ունեցող երկրներում: Սա ի վերջո չի խրախուսում բիզնեսներին, հատկապես ՓՄՁ-ներին, նախաձեռնելու դիմում ներկայացնելու գործընթացը: Բացի այդ, արտոնություններ ստանալու գործընթացների և ընթացակարգերի մասին տեղեկատվությունը կարող է օգնել կառավարությանը բացահայտել այն ոլորտները, որտեղ համակարգման կարիք կա՝ այդ կերպ նվազագույնի հասցնելով արտոնությունների շնորհման հետ կապված վարչական ծախսերը:

3. Խթանել ներդրումները. Ներդրումային քաղաքականության և խթանման գործունեության մեջ ներգրավված հաստատությունները ստիպված են մրցակցել համաշխարհային ասպարեզում, որպեսզի ներգրավեն և պահեն ներդրողներին: Այդ գործընթացում, նրանք կարող են լծակավորել խթանների մասին տեղեկատվությունը՝ հատկապես այն ոլորտներում, որտեղ խթանները կարող են փոփոխություն բերել ներդրողների համար:

4. Գնահատել հանրային ծախսերը. Շատ երկրների՝ հատկապես զարգացող երկրների իշխանություններն ունեն սահմանափակ ռեսուրսներ: Ուստի, նրանց համար կարևոր է հասկանալ, թե ինչպես է ծախսվում իրենց փողը: Հանրային ֆինանսները կառավարող մարմինները կարող են օգտագործել խթանների մասին տեղեկատվությունը ֆիսկալ ծախսերը գնահատելու և ճշգրիտ բյուջեներ կազմելու համար:

5. Բարելավել քաղաքականության համակարգումը. Խթանների թափանցիկությունը կարող է օգնել նաև բարելավելու համակարգումը իշխանության մարմինների միջև: Շատ երկրներում ոչ բոլոր գործակալություններն են (լիարժեք) տեղեկացված այլ մարմինների կողմից տրամադրվող խթանների մասին: Սա կարող է հանգեցնել կրկնորդմանը կամ անգամ հակասությանը և ի վերջո՝ հանրային ռեսուրսների վատնմանը:

Հայաստան. ՀՀ կառավարությունը ներկայումս չի վարում խթանների կենտրոնացված տվյալների բազա, իսկ այդ մասին հանրությանը մատչելի տեղեկատվությունը չի ներառում առնչվող գործընթացների և ընթացակարգերի մանրամասները: Գործող արտոնությունների տեսակների մասին ներդրողներին հասանելի տեղեկատվությունը հիմնականում տրամադրվում է ՀՉՀ-ի և ՓՄՁ ՋԱԿ-ի կայքերի միջոցով: Սակայն, այդ տեղեկատվությունը հստակ չի ներկայացվում միասնական՝ հատուկ այդ նպատակի համար նախատեսված կայքում: Ավելին, առկա տեղեկատվությունում հղում չի կատարվում համապատասխան իրավական աղբյուրներին, որոնց հիմքով տրամադրվում են խթանները/արտոնությունները, ինչպես նաև չեն հիշատակվում այն մարմինները, որոնք պատասխանատու են դիմումների քննության, արտոնությունների շնորհման, մշտադիրտակման և գնահատման համար: Պաշտոնական իրավական հիմքերի մասին տեղեկատվություն տրամադրվում է միայն Հայաստանում («ARLIS» տեղեկատվական համակարգի և ՀՀ ազգային ժողովի պաշտոնական կայքի միջոցով): Առնվազն, այդ տեղեկատվությունը պետք է մատչելի լինի անգլերեն լեզվով միջազգային ներդրողների համար:

Ներդիր 3. Օրինակ - Հորդանան. Միջազգային լավագույն փորձը թափանցիկության բարձրացման ոլորտում. Նախքան խթանների գույքագրման բարեփոխումներ իրականացնելը, Հորդանանը խթանների թափանցիկության ապահովման առումով դասվում էր ամենացածր վարկանիշն ունեցող երկրների շարքում: ՀԽԲ-ն աջակցեց Հորդանանի կառավարությանը տարբեր ճյուղային նախարարությունների և Հորդանանի ներդրումային հանձնաժողովի (JIC) միջոցով առաջարկվող ներդրումային խթանների վերանայման և առցանց ռեժիմով գույքացանկի հրապարակման աշխատանքներում ²⁴:

²⁴ <https://jic.gov.jo/portal/Home/Inventory>


Jordan Incentives Inventory

Filter the Jordan incentives inventory by incentive type or by institution. Click on the selected row for more detailed information

Brief Description	Applicable Tax Duty	Incentive Modality	Applicable Sectors	Zones Specificity	Eligibility Criteria	Legal References	Issuing Awarding Institution	Implementing Authorities	Awarding Process	Appeal Procedure
Corporate Income Tax (CIT) reduced to 5% for economic activities inside the Development Zones (inst...	Corporate Income Tax (CIT)	Reduced Tax Rate	Any industrial, agricultural, touristic, commercial, crafts, or service activity registered in the ...	Development Zone-specific	Investments in Development Zones except for: banks, telecommunications companies that hav...	Investment Law No. 30/2014, Art. 11.A; Investment Incentives Regulation 33/2015; Income T...	Jordan Investment Commission (JIC) - Development Zone-specific	Jordan Investment Commission (JIC) and Income and Sales Tax Department (ISTD)	Automatic - By simply registering at JIC and obtaining a certificate of registration, the...	The investor can appeal to the Head of the Investment Commission within 60 days from rece...
Corporate Income Tax (CIT) reduced to 5% for manufacturing activities inside the	Corporate Income Tax (CIT)	Reduced Tax Rate	Any industrial, agricultural, touristic, commercial, crafts, or service activity	Development Zone-specific	The industrial sector in Development Zones	Investment Law No. 30/2014, Art. 11.B; Investment	Jordan Investment Commission (JIC) - Development	Jordan Investment Commission (JIC) and Income and	Automatic - By simply registering at JIC and obtaining a	The investor can appeal to the Head of the Investment Commission

Հանրամատչելի ձևով կազմված գույքացանկերը, տնտեսության տարբեր ոլորտներում և երկրի տարբեր աշխարհագրական տեղանքներում Հորդանանի տարբեր պետական հաստատությունների կողմից առաջարկվող հարկային, մաքսային և ֆինանսական խթանները հասանելի են ներդրողների համար: Գույքագրման հիմնական նպատակն էր բարձրացնել թափանցիկությունը և ապահովել տարբեր խթանների, դրանց տրամադրման ու կառավարման գործընթացների մասին տեղեկատվության հասանելիությունը ներդրողների համար:

Ինչպես ցույց է տրված ստորև, խթանների գույքացանկի վերջնական մշակումը և առցանց հրապարակումը զգալիորեն նպաստեց Հորդանանի կողմից առաջարկվող խթանների համակարգի թափանցիկության բարձրացմանը՝ երկիրը դասելով Միջին Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի (MENA/ՄԱՀԱ) տարածաշրջանի թափանցիկության բարձր վարկանիշ ունեցող առաջատարների շարքում²⁵:



ՄԱՀԱ-ի հանձնարարականի հիման վրա՝ նույն կառույցի կազմում գործող Հետազոտությունների դեպարտամենտի պատասխանատու թիմը տարեկան կտրվածքով իրականացնում է գույքացանկի թարմացում՝ կառավարության ներդրումների խթանման քաղաքականությունում կատարված փոփոխությունները (ներառյալ գործող խթանների փոփոխությունները և նոր խթանների ներկայացումը):

²⁵ Միավորները հաշվարկվել են ՀԲԽ-ի վերլուծության միջոցով՝ «Privilege Resistance Economic Policies in the Middle East and North Africa» (Արտոնությունների նկատմամբ դիմակայուն տնտեսական քաղաքականությունները Միջին Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում) (2016):

Հայաստանի համապատասխանությունն իրավական շրջանակին և ինստիտուցիոնալ դերերին

Միջազգային լավագույն փորձ 4. Հարկային խթանները պետք է հստակ սահմանվեն համապատասխան օրենքում, գերադասելի է հարկերի մասին օրենքում, և չպետք է բանակցվեն յուրաքանչյուր առանձին դեպքի համար /դեպք առ դեպք հիմունքներով/:

Հիմնավորում. Խթանների անուղղակի բացասական ազդեցությունները, ինչպիսիք են՝ թափանցիկության բացակայությունը և մրցակցության խաթարումը, զգալիորեն մեծանում են, երբ խթանները տրամադրվում են դեպք առ դեպք հիմունքներով: Լավագույն փորձը նախատեսում է, որ բոլոր խթանները հստակ սահմանվեն համապատասխան օրենքում և հասանելի լինեն բոլոր այն ներդրողների համար, ովքեր բավարարում են դրանց վավերապայման հանդիսացող օբյեկտիվ չափանիշները: Խթանների ամրագրումը հարկերի մասին օրենքում ապահովում է, որ հարկային մարմինները կատարեն օրենքի կիրարկման և վարչարարության իրենց դերը: Նաև, այն բարձրացնում է թափանցիկությունը և նվազեցնում է բարդությունը՝ համախմբելով բոլոր խթանները մեկ օրենսդրական ակտում:

Հայաստան. Խթանների/արտոնությունների ընթացիկ համակարգը Հայաստանում հիմնականում սահմանվում է հատուկ օրենքների և կառավարության որոշումների միջոցով, որոնք ուղղակիորեն վերաբերում են առաջարկվող արտոնությունների տեսակներին: Հղումներն առավել հաճախ կատարվում են «Շահութահարկի մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին», «Արդյունաբերական քաղաքականության մասին», «Ազատ տնտեսական գոտիների մասին», ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքներին: Այս կանոնակարգումը նպատակ ունի հասցեագրելու բոլոր ասպեկտները՝ ներառյալ իրավասության չափանիշները և արտոնությունների շնորհման ընթացակարգը: Չնայած այն հանգամանքին, որ նշված իրավական աղբյուրները հասանելի են՝ ներառյալ նաև առցանց, առկա են այդ փաստաթղթերի միայն հայերեն տարբերակները և, դրանք հավաքված չեն մեկ առցանց ռեսուրսում:

Հայաստանի համապատասխանությունը խթանների կառավարման և տրամադրման գործելակերպերին

Միջազգային լավագույն փորձ 5. Ներդրումային խթանի համար դիմելու և այն շնորհելու գործընթացը պետք է լինի պարզ և նվազագույնի հասցնի հայեցողական մոտեցումը: Հարկային խթանների դեպքում հաստատման գործընթացը պետք է լինի ավտոմատ (հավաստման հնարավորությամբ):

Հիմնավորում. Շատ երկրներում նախատեսվում է ինչ-որ տեսակի հաստատման գործընթաց հարկային խթաններ/արտոնություններ տրամադրելու համար: Սա հանգեցնում է անհարկի ուշացումներին, ոտնձգության և, հնարավոր է նաև, կոռուպցիայի ռիսկերի: Ուստի,

արտոնություն ստանալու բոլոր պայմանների հստակ ամրագրումը հարկային օրենքում հրամայական անհրաժեշտություն է, որը հնարավորություն կտա տրամադրել ներդրողներին ինքնագնահատման ստուգաթերթ («check the box»), որի միջոցով ներդրողը կիրականացնի հարկային խթանից օգտվելու իր իրավասության ինքնագնահատում: Հարկային մարմինը կարող է ստուգել իրավասության համապատասխանությունը ստուգումների իրականացման փուլում: Ուղղորդված, լավ համակարգված ընթացակարգերն օգնում են կրճատել ինչպես վարչական, այնպես էլ ներդրողների համապատասխանության ապահովման ծախսերը: Տարբեր երկրների փորձը ցույց է տալիս, որ հարկային արտոնությունների տրամադրման գործընթացի ավտոմատացումը նպաստում է թափանցիկության և հաշվետվողականության խրախուսմանը և ներդրողների վստահության ամրապնդմանը: Հարկային մարմինները պետք է իրականացնեն պարբերական ստուգումներ հարկային խթաններից օգտվելու մասով՝ չարաշահման դեպքերը բացահայտելու և կանխելու նպատակով:

Հայաստան. Ներկայումս առաջարկվող հարկային արտոնությունների մոտ 80%-ը շնորհվում է ոչ ավտոմատ կարգով: Այդ արտոնությունների շնորհումը կատարվում է կա՛մ հայեցողական ընթացակարգով, կա՛մ էլ որոշման հիման վրա, որն ընդունվում է «ստուգման ենթակա չափանիշների» հիման վրա, որոնք միշտ չէ, որ նշվում են: ՏՁՆՆ-ն և Հավաստագրման հանձնաժողովն այն հիմնական մարմիններն են, որոնք շնորհում են արտոնությունները:

Առաջարկվող 27 արտոնություններից միայն չորսն ունեն առցանց կիրառություն: Առաջարկվող 27 արտոնություններից հինգի մասով չկան տեղեկություններ դիմումների ներկայացման կարգի մասին, իսկ երեքի մասով՝ իրավասու ընկերությունները կարող են դիմում ներկայացնել միայն թղթային ձևով²⁶:

Հայաստանում ավտոմատ կարգով շնորհվում են հետևյալ չորս տեսակի արտոնությունները.

- հարկերից ազատում հատուկ տարածքներում,
- հարկերից ազատում բժշկական ոլորտում,
- ձեռագործ գորգերի իրացումից ստացվող հասույթների նվազեցում,
- գյուղատնտեսական ապրանքների իրացումից ստացվող հասույթների նվազեցում:

Արտոնություն ստանալու համար դիմում ներկայացնելու գործընթացում կիրառվում են ՀՀ կառավարության կողմից հաստատված օրինակելի ձևերը (դիմումի ձև, գործարար ծրագրի օրինակելի ձև և այլն). սա համապատասխանում է միջազգային լավագույն փորձին: Ավելին, արտոնության տրամադրման մասին որոշման կայացման գործընթացում «դե յուրե» հայեցողության հնարավորությունը նվազեցվում է ընդհանուր վարչական ընթացակարգերի մասին ՀՀ օրենսդրությամբ²⁷: Այդուհանդերձ, գործնականում այդ օրենքների կիրառման որակը

²⁶ Սույն զեկույցի մշակման ժամանակահատվածում խթանների վերաբերյալ ՀԽԲ-ին տրամադրված տեղեկությունների հիման վրա:

²⁷ Օրինակ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի հոդված 46-ով սահմանվում է վարչական գործընթացի 30-օրյա առավելագույն ժամկետ, եթե այլ կերպ հստակ նախատեսված չէ այլ օրենքներով: Հոդված 48-ով նախատեսվում են վարչական վարույթի ժամկետում վարչական ակտ չընդունելու հետևանքները:

պետք է ստուգվի՝ յուրաքանչյուր խթանի/արտոնության մասով համապատասխան գործընթացի և արտոնությունը շնորհող պետական մարմնի քարտեզագրման միջոցով: ՀԽԲ-ի կողմից իրականացված ձեռնարկությունների ուսումնասիրության համաձայն՝ հարցված ընկերությունների 29.3%-ը պատասխանել է, որ հարկային վարչարարությունը գործարարությամբ զբաղվելու հիմնական խոչընդոտն է, որը, ելնելով այլ երկրների փորձից, կարող է լինել նաև խթանների կառավարման որակի ցուցիչ:

Հայաստանի համապատասխանությունը խթանների արդյունավետությանը

Միջազգային լավագույն փորձ 6. Պետության համար առաջացող ֆիսկալ ծախսերը և ռիսկերը պետք է գնահատվեն կանոնավոր հիմունքներով:

Հիմնավորում. Խթաններն ունեն իրական ծախսեր (չստացված եկամուտների մասով), ինչպես նաև անուղղակի ծախսեր պետության համար: Անուղղակի ծախսերը ներառում են խափանման ծախսերը (distortion costs), համապատասխանության ապահովման մասով հարկ վճարողների լրացուցիչ ծախսերը, ինչպես նաև խթանների կառավարման մասով պետական մարմնի լրացուցիչ ծախսերը: Մակայն հաճախ պարզվում է, որ որոշում կայացողները բավարար տեղեկացված չեն խթանների իրական արժեքի մասին, քանի որ խթանների մասով ծախսերը չեն մուտքագրվում բյուջե: Ուստի, կարևոր է, որ խթանների մասով ծախսերը հրապարակվեն և մշտադիտարկվեն՝ չստացված եկամուտները հաշվարկելու նպատակով: Ներկայումս որոշ երկրներ հրապարակում են «հարկային ծախսերի մասին հաշվետվություն»՝ որպես տարեկան բյուջեի հավելված:

Ավելին, խթանների արժեքը պետք է չափվի ոչ միայն ընդհանուր մակարդակով, այլև առանձին՝ ըստ ոլորտների և խթանման ծրագրի, այնպես որ դրանք հստակ կապվեն ծրագրի օգուտների հետ, իսկ քաղաքականություն մշակողները կարողանան կայացնել իրազեկված որոշումներ ծրագրի կատարողական գործունեության մասին:

Հայաստան. Ներկայումս չի գործում խթանների արժեքին հետևելու ֆորմալացված համակարգ՝ մասնավորապես տարբեր հարկային նվազեցումների առնչությամբ (ներառյալ տարեկան բյուջետավորված գումարներ, օգտվող ընկերություններ և այլն), ինչպես նաև պարզ չէ, թե արդյոք ներքին հաշվետվողականության մեթոդները բավականաչափ ողջամիտ են հուսալի համարվելու համար: Ավելին, թվում է, որ ՀՀ կառավարությունը չի վարում տարեկան կտրվածքով արտոնություն ստացած ընկերությունների թվաքանակի հաշվառում, ինչը համարվում է ստանդարտ լավագույն փորձ ներդրումային սխեմաներ իրականացնող երկրներում²⁸:

Միջազգային լավագույն փորձ 7. Անհրաժեշտ է գործարկել մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներ, որպեսզի ստուգվի, թե արդյոք իրականացվում են խթանների քաղաքականության նպատակները:

²⁸ Սույն զեկույցի մշակման ժամանակահատվածում խթանների վերաբերյալ ՀԽԲ-ին տրամադրված տեղեկությունների հիման վրա:

Հիմնավորում. Ինչպես վերոնշյալ ծախսերի դեպքում, կարևոր է իրականացնել խթանների օգտագործումից ստացված ցանկացած օգուտի մշտադիտարկում և գնահատում: Հաճախ, խթանները սխալմամբ համարվում են արդյունավետ այն դեպքում, երբ դրանց օգտագործումը համընկնում է ներդրումների հոսքի կամ այլ դրական արդյունքի հետ: Մակայն, տվյալ արդյունքն առկա խթանին իսկապես վերագրելու համար պահանջվում են ավելի խորը մոտեցումներ մշտադիտարկման և գնահատման գործընթացներին՝ մեկուսացնելով խթանների ազդեցությունն այլ գործոններից, որոնք կարող էին ազդել ներդրողի որոշման վրա:

Հայաստան. Ներկայումս, կարծես թե չկա մշտադիտարկման և գնահատման որևէ համակարգային մեխանիզմ, որի միջոցով հնարավոր կլիներ համադրել խթաններից/արտոնություններից օգտվող ընկերությունների կատարողականը և քաղաքականության նպատակները: ՀԽԲ-ի տեղեկությունների համաձայն՝ հետևյալ տեղեկություններից ոչ մեկը հասանելի չէ՝ յուրաքանչյուր օրացուցային տարվա համար առանձին արտոնության/խթանի մասով բյուջետավորված և տրամադրված գումարներ: Արտոնություն ստացած ընկերությունների թվաքանակի մասին տեղեկությունները տրամադրվում են միայն երեք խթանման սխեմաների մասով²⁹:

Ներդիր 5-ում քննարկվում են մշտադիտարկման և գնահատման շրջանակ չունենալու հետևանքով առաջացած ծախսերը՝ հատուկ ֆիսկալ խթաններ ներկայացնելու Նիդերլանդների օրինակի հիման վրա:

²⁹ Չնայած այդ տեղեկատվությունը մատչելի չէ ներդրումային բոլոր գործիքների մասով և չի տրամադրվում տարեկան կտրվածքով:

Ներդիր 4. Օրինակ – Նիդերլանդներ. ՄԳ-ի բացակայությունը (M&E) հանգեցրեց տեսակարար կշռի բարձր կորստի:

1998 թվականին Հոլանդիայի կառավարությունը փոփոխություններ կատարեց իր ֆիսկալ համակարգում, որպեսզի խրախուսի ընկերություններին կազմակերպել վերապատրաստման դասընթացներ (թրեյնինգ) տարիքով ավելի մեծ աշխատողներին համար: Ընդ որում, տարիքով ավելի մեծ 40-ը (նոր) լրացած աշխատողների համար դասընթացի գինը 14 տոկոսով ավելի էժան էր, քան 40-ից ցածր (40-ը դեռ չլրացած) աշխատողների համար:

Լյովենի և Ուստերբեկի (2004թ.) կողմից իրականացված հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ քաղաքականությունը չտվեց նախատեսված արդյունքները: Չնայած 40-ից բարձր տարիք ունեցող անձանց մասնակցությունը 15-20 տոկոսով ավելի բարձր էր, քան 40-ից ցածր մասնակիցներինը, ընկերությունների կողմից առաջարկվող դասընթացների ընդհանուր ծավալը չավելացավ: Մրա պատճառն այն փաստն էր, որ 40-ը դեռ չլրացած աշխատողների դասընթացները հետազգվեցին, որը հանգեցրեց ավելի երիտասարդ աշխատողների դասընթացների մասնակցության տեսակարար կշռի նվազմանը:

Ուսումնասիրության եզրահանգումները նպատակ ունեն չխրախուսել քաղաքականություն մշակողներին այն առումով, որ նրանք չկիրառեն որոշակի ժողովրդագրական խմբին հարկային սուբսիդիա տրամադրելու խթանը, որպեսզի խրախուսեն տարիքով ավելի մեծ (40 և բարձր) աշխատողների մասնակցությունը դասընթացներին: Ցածր որակավորում ունեցող աշխատողների վերապատրաստմանն ուղղված քաղաքականությունը՝ ի հակադրություն որոշակի տարրային խմբի, հավանական է, որ կհանգեցնի տեսակարար կշռի ավելի ցածր կորստի: Ավելին, ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե պետության համար որքան ծախսատար կարող է լինել ներդրումային խթանների ակնկալվող օգուտների մասին տվյալներ չհավաքելը:

Աղբյուր՝ Leuven and Oosterbeek (2004)

ԳԼՈՒԽ 5. Հայաստանի կողմից առաջարկվող խթանները վերանայելու առաջարկություններ

Այս բաժնում ներկայացվում են մի շարք առաջարկություններ, որոնք ՀՀ կառավարությունը պետք է դիտարկի ներդրումների խթանման իր ռեժիմը բարելավելու համար: Առաջարկությունները վերաբերում են միջազգային լավագույն փորձի վերոնշյալ ասպեկտներից յուրաքանչյուրին՝ կարևորելով խթաններն ավելի ընդարձակ ներդրումային քաղաքականության նպատակներին ու շրջանակներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը, թափանցիկության բարձրացումը, խթանների իրավական շրջանակի որակի ամրապնդումը, խթանների կառավարման ինստիտուցիոնալ շրջանակի համապատասխանեցումը, ծախսերի չափման միջոցով արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև աշխատատեղերի ստեղծմանը և համաշխարհային արժեշտանքներում ինտեգրմանը նպաստող նոր ոլորտներում ջանքերի նպատակաուղղմանը, որի տարբերակներից մեկը կարող է լինել առկա խթանների վերաուղղորդումը դեպի հմտությունների զարգացում:

1. Բարելավել քաղաքականության նպատակների և արդյունավետության բարձրացմանն ուղղված ՕՈԻՆ-ների համապատասխանեցումը

Առաջ շարժվելով՝ ՀՀ կառավարությունը պետք է սահմանի արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումների խթանների առաջնահերթություն և հստակեցնի քաղաքականության նպատակները, որոնք պետք է իրագործվեն այդ խթանների միջոցով: Այս գործընթացը պետք է սկսվի ՕՈԻՆ խրախուսման գերակա ոլորտների ցանկ կազմելուց, որին կհետևեն վերլուծական աշխատանքները՝ քաղաքականության ներքո խթանների ընտրությունն ավելի խորը հիմնավորելու նպատակով: Կորպորատիվ եկամտային հարկից (ԿԵՀ) և շահութահարկից ազատելու արտոնությունները պետք է փոխարինվեն դեպի որոշակի ոլորտները նպատակաուղղված գործիքներով՝ ծախսերի և օգուտների գնահատում իրականացնելուց հետո:

Վերջին երկու տասնամյակներում ներդրումներ ներգրավելու երկրի ջանքերը, թվում է, հիմնականում ուղղվել են դեպի արտադրության որոշակի ոլորտների ներգրավումը՝ զբաղվածության աճը խթանելու նպատակով՝ ակնհայտ չկենտրոնանալով որոշակի համաշխարհային արժեզրեաների կոնկրետ տարրերի թիրախավորման վրա:


Այն համատեքստում, որտեղ ընդհանուր քաղաքականության առաջնահերթությունների կենտրոնացումը տեղափոխվում են դեպի որոշակի արժեզրեաների ավելի բարձր ավելացած արժեք ստեղծող սեգմենտների ներգրավումը, ՀՀ կառավարության համար կկարևորվի խթանների իր քաղաքականության համապատասխանեցումը: Պատահականորեն նախագծված խթանները կամ լայն հիմունքներով հարկերից ազատումը (որոնք գերակշռում են Հայաստանի ներդրումների խթանման ջանքերում և կիրառվում են առանց հստակ նպատակների), չեն կարող համարվել քաղաքականության օպտիմալ գործքներ:

1.1. *Խթանների նպատակաուղղվածության բարելավման եռաքայլ շրջանակ*

Քանի որ Հայաստանը դիտարկում է իր ներդրումային խթանները բարեփոխելու հնարավորությունը, առաջարկվում է եռաքայլ մոտեցում, որը կօգնի խթանների առաջնահերթությունները սահմանելու և դրանք դեպի որոշակի ոլորտներն ուղղելու համապատասխան պետական գործակալությունների աշխատանքներին:

Այդ մոտեցումը նախատեսում է անցում ոլորտների լայն ցանկից դեպի ավելի նպատակային ենթաօլորտները, որոնք կստանան խթաններ հետևյալ հիմունքներով՝ (i) ռազմավարական կարևորությունը երկրի համար (ii) խթանների առնչությունը համաշխարհային մակարդակով ՕՈԻՆ-ների խրախուսման համար, և (iii) խթանների արդյունավետությունը ներդրողների որոշումների վրա ազդելու և տնտեսական օգուտներ ստեղծելու առումով (տես ստորև՝ Պատկեր 10): Քանի որ այս մոտեցումը ներդրումների խրախուսման և խթանների իրավասության կենտրոնացումը կտեղափոխի դեպի ավելի քիչ թվով ոլորտներ, այն ՀՀ կառավարությանը թույլ կտա ավելի շատ կրճատել խթանների նոր ռեժիմների ֆիսկալ ծախսերը:

Պատկեր 10. Եռաբայլ շրջանակ խթանները դեպի որոշակի ոլորտ նպատակաուղղելու համար



Աղբյուր՝ Առևտրի և մրցակցության դեպարտամենտ, ՀԽԲ

Քայլ 1. Մշակել Հայաստանի համար ռազմավարական ներդրումային ոլորտների ցանկը

Գերակա ոլորտների ցանկ մշակելը կարևոր էլակետ է ցանկացած երկրի ներդրումների խթանման ռազմավարության համար և վերջնակետ՝ խթաններն ավելի լավ թիրախավորելու համար: Սովորաբար, այս գործընթացը նախատեսում է համակողմանի/խորը վերլուծական աշխատանքներ և շահագրգիռ կողմերի խորհրդակցություններ՝ այն ոլորտները բացահայտելու նպատակով, որոնք և՛ կենսունակ են, և՛ համապատասխանում են երկրի ռազմավարական զարգացման շահերին: Ոլորտների առաջնահերթության սահմանման մեթոդաբանության քննարկումը չի ներառվում սույն զեկույցի շրջանակներում, այդուհանդերձ, ընդհանուր առմամբ այն պետք է հիմնվի նկատառումների երկու փաթեթների վրա՝ (i) ոլորտի համապատասխանությունը երկրի ընդհանուր համեմատական առավելության և մրցունակության հետ, որպեսզի ապահովվի, որ թիրախները սահմանվում են իրատեսական ձևով, այլ ոչ թե շուկայի ազդակներին հակառակ, և (ii) ոլորտի ներդրումը աշխատատեղերի ստեղծման, հմտությունների և տեխնոլոգիաների արդիականացման կամ տնտեսության բազմազանեցման ջանքերում՝ կախված ՕՈՒՆ-ների ներգրավման ընդհանուր նպատակներից:

Քայլ 2. Ընդունել, որ եթե անգամ ոլորտը համարվում է ռազմավարական առաջնահերթություն, խթանները պարտադիր չէ, որ լինեն ՕՈՒՆ-ների խրախուսման արդյունավետ գործիքներ:

Ինչպես արդեն նշվել է, ներդրումների ներգրավումը հաճախ պահանջում է ավելին, քան միայն խթաններ առաջարկելը, որոնք կազմում են ընդհանուր քաղաքականության փաթեթի միայն մի փոքր մասը: Քայլ 2-ը և 3-ը նախատեսվում են գերակա որոլորտների ցանկից այն ոլորտները «քաղհանելու» համար, որոնց համար խթանները կարող են անհրաժեշտ չլինել:

Հայաստանի իշխանությունները պետք է խթանները նպատակաուղղեն գլխավորապես դեպի այն ոլորտները, որոնք ունեն արդյունավետության բարձրացմանն ուղղված ՕՌԻՆ ներգրավելու ներուժ՝ դեպի արտահանումը կողմնորոշված արտադրության և ծառայությունների ձևով: Սակայն, քանի որ նշված գործունեության տեսակները հակված են լինելու խիստ պահանջկոտ ընդհանուր ներդրումային միջավայրի հանդեպ, ուստի ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված բարեփոխումները վճռորոշ կլինեն ցանկացած խթանների համար՝ պայմանավորելով դրանց արդյունավետությունը:

Պատկեր 11-ում ներկայացվում են ներկայումս ՀՀ կառավարության կողմից ՕՌԻՆ-ների ներգրավման համար որպես գերակա ճանաչված ոլորտները:

Պատկեր 11: Հայաստանի գերակա ոլորտները



Աղբյուր՝ Հայաստանի զարգացման հիմնադրամ (ՀԶՀ)

Ըստ ՀԶՀ-ի՝ այս ոլորտներն ունեն ամենաբարձր ներուժը՝ հետևյալի գործոնների շնորհիվ.

- համապատասխանաբար աճող տարածաշրջանային շուկաներ և արտահանման արագ աճ.
- մուտք Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ), Եվրոպական միության (ԵՄ) և Ամերիկայի Միացյալ Նահանգների (ԱՄՆ) շուկաները՝ նվազեցված սակագնային դրույթաչափով (Ազատ առևտրի համաձայնագրեր «Արտոնությունների ընդհանրացված համակարգ+» (GSP+), ԵՏՄ, ՀՀ-ի և ԱՄՆ-ի միջև «Առևտրի և ներդրումների շրջանակային համաձայնագիր» (TIFA)).
- առաջնակարգ որակի ապրանքների արտադրության փորձ շքեղ բրենդերի համար (luxury brands):

Այս ոլորտներից յուրաքանչյուրի խթանման համար կարող են կիրառվել քաղաքականության տարբեր գործիքներ: Սակայն, կարևոր է նշել, որ խթանները չեն աշխատի բոլոր ոլորտներում: Ստորև բերված Պատկեր 12-ի օրինակի վրա ցուցադրվում է, թե որտեղ խթանները կարող են աշխատել (կանաչ գույնով նշված), իսկ որտեղ՝ ոչ, կիրառելով ՕՌԻՆ տիպաբանության տրամաբանությունը և խթանների պայմանավորվածությունն ապրանքի յուրահատկությամբ (ինչպես բացատրվում է Պատկեր 6-ում):

Պատկեր 12-ում թվարկվում են ՕՌԻՆ ներգրավման գերակա ոլորտները, որոնք նշված են ՀԶՀ-ի կայքում (սյունակ 1), և առաջարկվում է, թե որ ոլորտներն ունեն արդյունավետության բարձրացման հավանականություն (սյունակ 2) և խթաններին արձագանքելու ավելի բարձր

³⁰ DFA website. <http://www.dfa.am/wp-content/uploads/2017/03/Investment-One-pager.pdf>

ցուցանիշ (սյունակ 3): Այնուհետև, արդյունավետության բարձրացմանն ուղղված ՕՈՒՆ-ների շրջանակում բերվում են երկու տարբեր ոլորտների օրինակներ (մասնավորապես՝ տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ (SՀS)/ճշգրիտ ճարտարագիտություն և տեքստիլ արդյունաբերություն ու կոշիկի արտադրություն)՝ նշելով, թե սովորաբար ինչ պայմանների ներքո այդ ոլորտներում կարող է արձանագրվել շուկայի և արտահանման մեծ մասնաբաժին՝ հիմնվելով համաշխարհային տվյալների վրա:

Կարելի է կատարել երկու հիմնական եզրահանգում. առաջինը՝ խթանները տեղին են միայն այն որոշումների համար, որոնք նշված են կանաչ գույնով, երկրորդը՝ նշված ոլորտներից յուրաքանչյուրի մասով ներկայացվող խթանների տեսակները կարող են տարբերվել՝ դրանց տարբեր պահանջների հետևանքով: Լայն հիմունքներով առաջարկվող հարկային արձակուրդները հավանական չէ, որ օգուտ տան բարձր տեխնոլոգիաների ոլորտներին, ինչպիսին է SՀS ոլորտը, որոնք սովորաբար գործում են ավելի բարձր հարկային միջավայրերում: Ավելին, այս օրինակում կրթության և հմտությունների կարևորությունը դառնում է բիզնեսների մտահոգության գլխավոր հարցը: Իրավիճակն այլ է հագուստի արտադրության դեպքում, որտեղ ընկերությունները գործում են միայն ցածր հարկային միջավայրերում և չեն պահանջում կրթության բարձր մակարդակ:

Նման վերլուծություն կարելի է կատարել ՕՈՒՆ ներգրավման գերակա բոլոր ոլորտների մասով՝ իրականացնելով ոլորտի գնահատում: Գերադասելի է, որ այդ գործընթացը լրացվի յուրաքանչյուր ոլորտում խթաններից/արտոնություններից օգտվող տնտեսվարող սուբյեկտների կողմից տրամադրված տվյալներով, որպեսզի հնարավոր լինի պատշաճ կերպով գնահատել, թե ինչ չափով են մինչ այժմ տրամադրված արտոնությունները փաստացի ազդել այդ ոլորտների վրա:

Պատկեր 12. Հայաստանի գերակա ոլորտները և արձագանքումը խթաններին

ՕՈՒՆ ներգրավման գերակա ոլորտները	ՕՈՒՆ-ների տեսակը (միայն որպես օրինակ)	ՕՈՒՆ-ների արձագանքումը խթանին	Կրթության կարևորությունը/հարկ (որպես երկու օրինակներ)
Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ (SՀS), ճշգրիտ ճարտարագիտություն	Արդյունավետության բարձրացմանն ուղղված	Հավանական է՝ բարձր	Կրթության բարձր մակարդակ, ցածր հարկեր ³¹
Դեղագործություն և առողջապահություն	Արդյունավետության բարձրացմանն ուղղված	Հավանական է բարձր	

³¹ Նույն կայքում

Առաջադեմ տեխնոլոգիաներ	Պարզ չէ	Պարզ չէ	
Տրանսպորտ և ենթակառուցվածք	Շուկայական ուղղվածություն	Հավանական է ցածր	
Կայուն էներգիա	Շուկայական ուղղվածություն	Հավանական է ցածր (չնայած վերականգնվող էներգիայի մասով կարող է բացառություն կազմել)	
Զբոսաշրջություն և հյուրընկալություն	Շուկայական ուղղվածություն	Հավանական է ցածր	
Գյուղատնտեսություն/աննդի վերամշակում	Արդյունավետության բարձրացմանն ուղղված	Հավանական է բարձր	
Տեքստիլ արդյունաբերություն և կոշիկի արտադրություն	Արդյունավետության բարձրացմանն ուղղված	Հավանական է բարձր	Կրթության ցածր մակարդակ, ցածր հարկեր
Ֆինանսներ և բանկային գործունեություն	Շուկայական ուղղվածություն	Հավանական է ցածր	

Աղբյուր՝ Առևտրի և մրցակցության դեպարտամենտ, ՀԽԲ

Այս նկատառումները պետք է կազմեն Հայաստանում ներդրումների խթանման առաջնահերթությունների և քաղաքականության նպատակների թեմայով ավելի լայն քննարկման մաս, որը կհանգեցնի համաձայնեցված ռազմավարական տեսլականի մշակմանը՝ տեսլական, որի մեջ խթանների համակարգը պետք է համապատասխանեցվի³²:

Քայլ 3. Վերլուծել խթանների արդյունավետությունը տվյալ ոլորտում՝ որոշելու համար, թե արդյոք դրանք արդարացված են:

Խթանները պետք է տրամադրվեն միայն ծախսերի և օգուտների խորը վերլուծության հիման վրա, որպեսզի ապահովվի, որ դրանք չեն բերում միայն չնախատեսված շահույթներ այն ներդրումների համար, որոնք միննույն է կկատարվեին՝ անկախ խթանների առկայությունից:

Սույն զեկույցի թիվ 5 առաջարկության ներքո ներկայացվում են տարբեր ուղիներ և գործիքներ, որոնք ՀՀ կառավարությունը կարող է կիրառել խթանների արդյունավետությունը չափելու համար:

³² Քայլ 2-ը վերաբերում է միայն տեղադրության խթաններին: Եթե նպատակը վարքագծի խթաններ կիրառելն է, ապա Քայլ 2-ը պետք է բաց թողնել:

1.2. Ընտրել համապատասխան ներդրումային գործիքներ

Եթե ՀՀ կառավարության առաջիկա տարիների հիմնական նպատակները ներառում են աշխատատեղերի ստեղծումը, հմտությունների զարգացումը/ուսուցումը և R&D գործունեությունը, ապա խթանները պետք է ուղղակիորեն կապվեն ներդրողի կողմից այդ նպատակների առնչությամբ կատարված համապատասխան ծախսերի, այլ ոչ թե շահույթի վրա հիմնված խթանների հետ, ինչպիսիք են հարկային արձակուրդներն ու արտոնյալ հարկային դրույքաչափերը:

Շահույթի վրա հիմնված խթանները, ինչպիսիք են հարկային արձակուրդներն ու արտոնյալ հարկային դրույքաչափերը, ընդհանուր առմամբ համարվում են թույլ գործիքներ, քանի որ հիմնվում են նախապես շնորհվող մեխանիզմի, այլ ոչ թե քաղաքականության նպատակի իրագործման մասով ներդրողի փաստացի կատարողական գործունեության վրա: Հաստատումը ստանալուց հետո կառավարության համար դժվար է դառնում արդյունավետ հսկողություն իրականացնելը և հարկային արձակուրդ/արտոնյալ հարկային դրույքաչափ ստանալու համար տրված խոստումների կատարումը պարտադրելը՝ թե՛ ներդրումների մակարդակների ու ստեղծված աշխատատեղերի, թե՛ ընկերության որևէ այլ վարքագծի առումով, որը կառավարությունը նպատակ է ունեցել խրախուսել: Այդ խթանները միտում ունեն նաև նախապատվություններ տալու դրանցից օգտվող ընկերություններին՝ ընձեռելով հենց սկզբից հարաբերականորեն բարձր շահույթ ստանալու և երկրում իրենց ներկայությունը որոշակի ժամկետով սահմանափակելու հնարավորություններ: Ավելին, երկարաժամկետ ներդրումներ կատարող ներդրողը, որը պատրաստ է կորուստներ կրել գործունեության առաջին տարիներին՝ ծրագրի կենսացիկլի ընթացքում դրանք վերականգնելու հեռանկարով, ավելի քիչ է օգտվում հարկային արձակուրդներից. այս մոտեցումը հանգեցնում է ներդրողների տեսակի ոչ ճիշտ ընտրությանը³³:

Մյուս կողմից, ծախսերի վրա հիմնված գործիքները, ինչպիսիք են ներդրումների գծով հարկերի ֆինանսավորումը կամ հարկային զեղչերը, ուղղակիորեն կապված են ընկերության կողմից նախաձեռնած ներդրումների մակարդակից: Չնայած դրանց կառավարումն ավելի բարդ է, այդ գործիքները միտում ունեն լինելու և՛ ավելի արդյունավետ՝ տվյալ գումարի ծախսումից ստացված օգուտների կամ չստացված եկամուտների առումով, և՛ նվազ խաթարող՝ այն դեպքում, երբ խթանի նպատակը ներդրումների խրախուսումն է:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ուսուցմանը և հմտությունների զարգացմանն առնչվող ներդրումային խթանները հատկապես արդյունավետ են, երբ մրցում են գիտելիքահեն ոլորտների համար, ինչպես Հայաստանն է փորձում անել: Քաղաքականության այնպիսի նպատակների համար, ինչպիսիք են աշխատատեղերի ստեղծումը, հմտությունների զարգացումը/ուսուցումը կամ հետազոտության և մշակման (R&D) գործունեության խրախուսումը, խթանները կարող են ուղղակիորեն կապվել ներդրողի կողմից այդ

³³ Տես Հավելված 1-ը:

նպատակների առնչությամբ կատարված համապատասխան ծախսերի, այլ ոչ թե նախապես տրված խոստման կամ համաձայնության հետ³⁴։ Նշված ոլորտներում ներդրումների ներգրավման համար մրցող երկրների կողմից հաջողությամբ կիրառված գործիքների օրինակները ներառում են՝ թրեյնինգի վճարներ, հատուկ կուրսերի/ուսումնական ծրագրերի ներկայացում, աշխատանքի թույլտվությունների սահմանափակումներից ազատում՝ որակավորված օտարերկրյա մասնագետների համար³⁵։

2. Բարձրացնել թափանցիկությունը և ստեղծել խթանների համապարփակ գույքացանկ

ՀՀ կառավարությունը պետք է նախաձեռնի իրավական տարբեր դաշտերում և իշխանության տարբեր մակարդակներում ներդրողներին առաջարկվող բոլոր խթանների համապարփակ քարտեզագրում։ Էլեկտրոնային գույքացանկը (e-inventory) պետք է հրապարակայնորեն հասանելի լինի շահագրգիռ կողմերին՝ առցանց ռեժիմով։ Այս գործընթացը պետք է ուղեկցվի ներդրումների խթանման քաղաքականության մեջ ներգրավված բոլոր գործակալությունները ներկայացնող աշխատանքային խմբի ստեղծմամբ, որը կառաջադրի էլեկտրոնային գույքացանկի կանոնավոր վարման և թարմացման համար պատասխանատու թիմի անդամներին։ Գույքացանկը պետք է հասանելի լինի անգլերեն լեզվով, որտեղ յուրաքանչյուր խթանի մասով պետք է բացվի հղում լրացուցիչ տեղեկություններին, որոնք վերաբերում են համապատասխան իրավական շրջանակներին, իրավասության չափանիշներին, վարչական հսկողություն և մշտադիտարկում իրակացնող մարմիններին և քաղաքականության նպատակներին։

Թափանցիկության և խթաններին առնչվող տեղեկությունների հասանելիության բարելավումը՝ առցանց տվյալների բազայի միջոցով, միջազային ներդրողներին առաջարկվող ներդրումային սխեմաների մասին դյուրահասանելի գործիք տրամադրելու ամենաարդյունավետ ուղիներից է։ Միաժամանակ, առցանց տվյալների բազան կարող է ծառայել որպես տվյալների հավաքման կարևոր գործիք իշխանությունների համար՝ աջակցելով ներդրումների խթանման քաղաքականության կատարողականը մշտադիտարկելու և խթանների ռազմավարության ազդեցությունը գնահատելու գործընթացներին։

Ներդրումային խթանների առցանց գույքացանկի նախագծման և կանոնավոր հիմունքներով թարմացման աշխատանքները կատարելիս, անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ սկզբունքները.

³⁴ Այդպիսի գործունեությունը չափելու համար այն պետք է ներառվի հարկային հայտարարագրերում։ Տես Հավելված 3-ը։

³⁵ Տես հավելված 7-ը։

- ՀՀ կառավարությունը պետք է տրամադրի արտաքին արտապատկեր (ինտերֆեյս) խթանների մասին կենտրոնական տվյալների բազայից ընտրված տեղեկությունների հրապարակման համար, որպեսզի դրանք հասանելի դառնան հնարավոր ներդրողների համար:
- Ցանկալի է, որ ներդրողների համար հասանելի ներդրումային խթանների կենտրոնացված տվյալների բազան/գույքացանկը (այսուհետ՝ «գույքացանկ») մշակելու/վարելու պահանջը սահմանվի օրենսդրորեն:
- Գույքացանկը պետք է հիմնվի ինտեգրված SS լուծման վրա, որը կապում է խթաններ տրամադրող տարբեր մարմինների տվյալների աղբյուրները և հեշտացնում է տվյալների մուտքագրման ապակենտրոնացումը, հասանելիությունը և վերլուծությունը:
- Գույքացանկը պետք է ներառի տեղեկությունների հետևյալ կատեգորիաները՝
 - ընդհանուր տեղեկություններ խթանների մասին՝ ներառյալ ընդհանուր նպատակներ, խթանի տեսակ/ձև (օրինակ՝ հարկային արձակուրդ, համաֆինանսավորվող դրամաշնորհներ և այլն), ծախս/օգուտ առավելագույն հարաբերակցությունը ներդրողների համար, ինչպես նաև խթանների իրավական հիմքերը.
 - տեղեկություններ խթաններից օգտվելու/արտոնություն ստանալու համար դիմում ներկայացնելու մասին՝ ներառյալ իրավասության չափանիշներ, արտոնող մարմին, պահանջվող փաստաթղթեր, ընթացակարգեր և ժամկետներ.
 - տեղեկություններ բողոքարկման, ինչպես նաև մշտադիտարկման ու կատարողական գործունեության կառավարման ընթացակարգերի մասին.
 - տեղեկություններ լրացուցիչ ռեսուրսների մասին՝ ներառյալ ուղղակի հղումներ պաշտոնական այլ կայքերին կամ կապի միջոցներին, որոնց միջոցով կարելի է հարցեր տալ դիմում ներկայացնելու կամ արտոնություն շնորհելու գործընթացի վերաբերյալ.
 - տեղեկություններ նախկինում տրամադրված խթանների մասին, ներառյալ՝ ըստ տարիների բյուջետավորված և տրամադրված միջոցներ և շահառուների թվաքանակ:
- Հրապարակվող գույքացանկը պետք է հասանելի լինի անգլերեն, ինչպես նաև օտարերկրյա ներդրողների համար հասկանալի այլ լեզուներով (օրինակ՝ չինարեն, ռուսերեն, ֆրանսերեն):

Բացի վերոնշյալից, անհրաժեշտ է ապահովել համակարգումը խթանները կառավարող տարբեր պետական մարմինների միջև՝ կրկնորդումից խուսափելու, ինչպես նաև տարբեր հաստատություններից արտոնություն «գնելու» ընկերությունների փորձերը կանխելու նպատակով: Որոշակի նպատակի համար նախատեսված խթանները (օրինակ՝ տեղադրության խթաններ) կարող են կառավարվել մեկ մարմնի կողմից՝ կրկնորդումից խուսափելու և կառավարման գործընթացի արդյունավետությունն ապահովելու նպատակով: Վերը բերված Հորդանանի ներդրումային հանձնաժողովի առցանց տվյալների բազային օրինակը ([Jordan's](#)

[Investment Commission online incentives inventory](#)) կարող է ծառայել որպես օգտակար ուղեցույց և մեկնարկի կետ խթանների գույքացանկի հրապարակման համար:

Թարմացվող գույքացանկը թափանցիկության բարձրացման առաջին քայլն է այնպիսի իրավիճակում, երբ խթանների տարբեր ծրագրերի մասին տեղեկատվությունը ցրված է տարբեր պետական գործակալություններում: Սակայն, այն չի կարող փոխարինել խթանների տրամադրման ինստիտուցիոնալ կառույցների հետագա բարեփոխումների և պարզեցման անհրաժեշտությունը:

Ներդիր 6. Խթանների թափանցիկության ԵՄ կանոնակարգեր

ԵՄ կանոնակարգերի ներքո պահանջվում է, որ ԵՄ անդամ պետությունները վարեն խթանների կամ «պետական աջակցության» կենտրոնացված ռեեստրներ: Այդ տվյալների բազաների կառավարումը և վարումն իրականացվում է մեկ գործակալության կողմից, որը պատասխանատու է տվյալ երկրի պետական աջակցության համար: Կանոնակարգով պահանջվում է, որ ընկերություններին պետական աջակցություն տրամադրող նախարարություններն ու պետական գործակալությունները կենտրոնական ռեեստր ներկայացնեն հաշվետվություն՝ ներառելով պետական աջակցությանը վերաբերող հիմնական տեղեկությունները: Ռեեստր ներկայացվող տվյալները, սովորաբար, ներառում են հետևյալը՝ առաջարկվող խթանի տեսակ, աջակցության իրավական հիմք, աջակցության աշխարհագրական կամ ոլորտային թիրախ, տրամադրվող ընդհանուր գումարներ, շահառուների մասին տեղեկություններ: Այդ կերպ, պետական աջակցության ռեեստրը դառնում է տվյալ երկրի կողմից առաջարկվող խթանների մասին տեղեկատվության կենտրոնացված աղբյուր: Ռեեստրներից քաղված ընդհանրացված տվյալների մասին հաշվետվությունը ներկայացվում է Եվրոպական Հանձնաժողովին՝ տարեկան պարբերականությամբ, որը հետագայում հրապարակվում է Հանձնաժողովի պաշտոնական կայքում:

Բացի այդ, պետական աջակցությունը կառավարող մարմիններից պահանջվում է հավաքել և պահել մանրամասն տեղեկություններ յուրաքանչյուր առանձին խթանի գործիքի և ծրագրի վերաբերյալ: Սա հանգեցնում է համապարփակ տվյալների բազաների վարմանը, որտեղ ի թիվս այլ տեղեկությունների ներառվում են խթաններից օգտվող շահառուների մանրամասն տվյալներ (անուն, գտնվելու վայր, հարկ վճարողի հաշվառման համար կամ ընկերության նույնականացման համար), պետական աջակցություն ստանալու համար իրավասու ծրագրեր (տեսակ, նկարագիր, ոլորտ, գործունեություն), ինչպես նաև խթանի միջոցով տրամադրվող աջակցության մակարդակ (ծրագրի չափ, խթանի չափ): Այդ տվյալների բազաները ծառայում են որպես կարևոր աղբյուրներ ախտորոշման գործիքներ մշակելու համար, ինչպես նաև տրամադրում են հարթակ ազդեցության (արդյունքների) գնահատման խորը վերլուծություն իրականացնելու համար՝ քաղաքականության ցանկալի նպատակների իրագործման առումով տարբեր ներդրումային խթանների արդյունավետությունը գնահատելու նպատակով: Այդ կերպ, դրանք դառնում են ապացույցների վրա հիմնված որոշումների կայացման և ներդրումների խթանման քաղաքականությունների ավելի լավ նպատակաուղղման կարևոր հենքեր:

Աղբյուր՝ ՀԽԲ, Ներդրումային քաղաքականության գործիքակազմերի շարք. ներդրումային խթանների գործիքակազմ

3. Բարելավել խթանների իրավական շրջանակի հասակությունը

Առաջ ընթանալով՝ ՀՀ կառավարությունը պետք է ապահովի ներդրումային խթանների կանխատեսելի, նպատակաուղղված և թափանցիկ իրավական շրջանակներ, ինչպես նաև առնչվող իրավական ակտերի անգլերեն տարբերակների հասանելիությունը: Այնուհետև, բոլոր տեղեկությունները պետք է հավաքվեն մեկ առցանց ռեսուրսում, որպեսզի էլ ավելի բարձրացվի թափանցիկության մակարդակը և ապահովվի առնչվող կանոնակարգերի հասանելիությունը: ՀՀ կառավարությունը պետք է սահմանափակի խթանների/արտոնությունների շնորհումն ըստ առանձին իրավիճակների՝ հայեցողական մոտեցումը նվազագույնի հասցնելու նպատակով: ՀՀ կառավարությունը պետք է ապահովի ներդրումային խթաններին առնչվող իրավական ակտերի անգլերեն տարբերակների հասանելիությունը:

Կարգավորման անորոշությունը՝ հատկապես հարկային ռեժիմի հետ կապված, ներդրումների ներգրավման հիմնական խոչընդոտներից մեկն է: Խթանների/արտոնությունների ամրագրումը հարկերի մասին օրենքում ապահովում է հարկային մարմնի ինչպես օրենսդրական, այնպես էլ վարչարարական դերը: Նաև, այն բարձրացնում է թափանցիկությունը և նվազեցնում է բարդությունը՝ համախմբելով բոլոր խթանները մեկ օրենսդրական ակտում:

Խթանների իրավական շրջանակների մշակումը և իրականացումը պետք է առաջնորդվի հետևյալ չորս սկզբունքներով՝ (i) կանխատեսելիություն, (ii) պատասխանատու գործակալությունների հասակություն, (iii) իրականացման թափանցիկություն և (iv) ծախսերի արդյունավետություն:

(i) Կանխատեսելիություն

Կանխատեսելիությունը, որը բարձր է գնահատվում ներդրողների կողմից, հաճախ նրանց ներգրավման հիմնական խոչընդոտներից մեկն է: Այն կարող է ներկայացվել նաև որպես հարկային օրենքի առաջարկվող բարեփոխման հիմնական նպատակներից մեկը: Որպեսզի խթանների նոր ռեժիմը կանխատեսելի դառնա ներդրողների համար, անհրաժեշտ է.

- Խթանները պետք է ներառվեն օրենքի շրջանակում. դրանց տրամադրումը, փոփոխությունը, կիրառության ընդլայնումը կամ չեղարկումը պետք է կատարվի բացառապես օրենսդրական գործողությամբ:
- Խթանները պետք է շնորհվեն ընդհանուր չափանիշների հիման վրա, որոնց համապատասխանությունը կարող է ավտոմատ կարգով հայտարարագրվել ցանկացած որոկավորված ներդրողի կողմից՝ հարկերի սովորական հայտարարագրման գործընթացների միջոցով:
- Որակավորման/իրավասության չափանիշները պետք է լինեն լավ, հստակ և պարզ սահմանված, որպեսզի կանխվի տվյալ ներդրումների համար առաջարկվող օգուտների արտահոսքը դեպի քաղաքականության նպատակին չհամապատասխանող

ներդրումները: Սա հեշտ գործ չէ, և այստեղ միշտ ծագում են մեկնաբանության հետ կապված հարցեր: Օրենսդրությունը մշակողները պետք է դիտարկեն իրավասության վերաբերյալ ուղեցույցի համակարգի ներառումը, որը կարող է օգտագործվել ներդրողների կողմից: Սակայն, «մասնավոր պարզաբանումներ» տալը կարող է առաջացնել հայեցողական իրավասության «ետնամուտքի դուռը» բացելու ռիսկ: Այդուհանդերձ, հաշվի առնելով այս նախագուշացումը, ուղեցույցը կամրապնդի կանխատեսելիությունը և կկրճատի շահերի բախման ռիսկը:

- Ցանկացած հարկային արտոնության քաղաքականության նպատակները պետք է ամրագրվեն օրենքի շրջանակում:
- Ինչպես ներդրումների նպատակները, այնպես է դրանց չափանիշները պետք է հիմնվեն ծախսերի և օգուտների վերլուծության վրա, որը հաշվի է առնում ֆիսկալ խթանների ազդեցությունը ներդրողի որոշումների վրա:

Խթանների իրավասության չափանիշների սահմանման, ինչպես նաև ներդրումների ներգրավման ու կատարողականի ազդեցությունների հաշվարկման գործընթացներում օգտակար կլինի ՏՁՆՆ-ի, ինչպես նաև առևտրի ու ներդրումների հարցերով զբաղվող այլ պետական գործակալությունների ներդրումը:

(ii) Պատասխանատու գործակալությունների հստակություն

Չնայած ֆիսկալ խթանների դերը ներդրումների ներգրավման գործում հաճախ գերազնահատվում է, դրանք շարունակվում են լայնորեն կիրառվել ամբողջ աշխարհում, և ավելի հաճախ՝ ԵԿԱ տարածաշրջանի երկրներում: Ավելին, արտահանման կողմորոշում ունեցող արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումների որոշ տեսակներ զգայուն են ներդրանքների գների հանդեպ, ուստի արձագանքում են հարկային արտոնություններին: Այդ երկու գործոնները պահանջում են, որ համապատասխան օրենքում նախատեսվի ինչ որ աստիճանի իրավասություն ծախսերի վրա հիմնված խթաններ մշակելու համար, որը կհիմնավորի թիրախավորված և ապացույցների վրա հիմնված ներդրումների խթանման ռազմավարությունը: Այդ նպատակով, օրենքը մշակողները պետք է ապահովեն հետևյալը.

- Օրենքը սահմանում է ներգրավված ճյուղային նախարարությունների և պետական գործակալությունների արտոնություններ շնորհելու իրավասությունը՝ ըստ ժամանակացույցի ծրագրված մոտեցում կիրառելու միջոցով, որը պահանջում է օրենսդրական գործողություն: Նման իրավասության սահմանումը ժամանակացույցում կկանխի առանձին դեպքի համար այլ լրացուցիչ միջոցների կիրառումը («ad hoc means»): Նման ժամանակացույցի կիրառությունը բաժանարար գիծ է դնում օրենքի «փոփոխման ենթակա» և կայուն մասերի միջև՝ հիմնավորելով քաղաքականության կայունության և կանխատեսելիության նպատակը: Օրենքը կարող է ներառել նաև արտոնության տրամադրման իրավասության կիրառման պարամետրերը՝ պայմանով, որ այն շարունակի արձագանքել քաղաքականության փոփոխվող նպատակներին և ներառվի արդյունավետ խթանների տնտեսական վերլուծություններում:
- Օրենքը պետք է սահմանի այն նախարարությունը կամ պետական գործակալությանը, որն ունի որոշակի կատեգորիայի ներդրումների մասով հարկի ֆինանսավորում

(հարկային նվազեցումներ) և հարկային զեղչեր տրամադրելու բացառիկ իրավասություն՝ կառավարության ներդրումային քաղաքականության և խթանման թիրախների համաձայն:

Որպեսզի ապահովվի, որ ընտրողականության կիրառման և ոլորտների թիրախավորման համար անհրաժեշտ ճկունությունը չի խաթարում նոր ռեժիմի կարգապահությունը, միջազգային փորձը նախատեսում է վերապահումներ սահմանող դրույթներ՝ ֆիսկալ խթանների ցանկացած արտոնման դեպքում: Մա անհրաժեշտ է նաև ներդրողներին կանխատեսելիության շրջանակ տրամադրելու և շահերի բախումները կանխելու համար այն դեպքերում, երբ ժամանակի ընթացքում փոխվում են պետական քաղաքականության նպատակներն ու թիրախները:

(iii) Իրականացման գործընթացների թափանցիկություն

Խթանների ռեժիմի իրականացման ընթացքում թափանցիկության ապահովումն էական նշանակություն ունի լավ կառավարման համար: Մրա համար կպահանջվեն մի շարք գործիքների գործարկում.

- Յուրաքանչյուր բյուջեին կից հարկի գծով ծախսերի հաշվետվության հրապարակում, որտեղ ներառվում են տեղեկություններ եկամուտ-ծախս հարաբերակցության, շահառուների և խթանի ֆիսկալ ներդրման վերադարձելիության մասին՝ կատարված ներդրումների, ստեղծված աշխատատեղերի, արտահանման աճի, արտարժույթի հոսքի կամ քաղաքակրթյամբ հետապնդվող որևէ այլ նպատակի մասով: Այս գործիքը կարևոր նշանակություն կունենա ինչպես ընթացիկ, այնպես էլ նոր ռեժիմների թափանցիկության և հաշվետվողականության համար:
- Արտոնությունների սխեմայի կանոնավոր մշտադիտարկումը և գնահատումը հանդիսանում է թափանցիկության մեկ այլ մեխանիզմ:

Արտոնությունների կիրառման ավտոմատացումն ու իրավասության համախմբումը (կոնսոլիդացիան), մեկ նախարարությանը կամ պետական գործակալությանը որպես իրականացնող մարմին ճանաչելը նույնպես պետք է ներառվեն նոր ռեժիմի «թափանցիկության» հենասյուների կազմում:

(iv) Ծախսերի արդյունավետություն

Ներդրումների խթանման շատ ռեժիմներ կիրառում են եկամուտների գոյացման (revenue-generation) թեստը՝ որպես արտոնություն շնորհելու իրավասության կիրառման ստուգում: Ներդրումների խթանման վերանայված շրջանակի ներքո՝ արտոնություն տրամադրելու որոշումը պետք է միշտ առաջնորդվի ծախսերի և օգուտների հաշվարկներով:

Խթանման սխեմա մշակողները պետք է դիտարկեն այնպիսի մեխանիզմ նախագծելու հնարավորությունը, որի միջոցով կհաշվառվեն կամ կարձանագրվեն խթանների շահառուները, նրանց կողմից ստացված ֆիսկալ խթանները և դրանց տրամադրման իրավական հիմքերը: Այս նպատակին կարելի է հասնել պարտադիր պահանջ սահմանելու միջոցով, որի համաձայն հարկային արձակուրդներից օգուտը ներդրողները պետք է սահմանված ձևով և կարգով

ներկայացնեն հարկային հայտարարագիր՝ բացահայտելով իրենց օգուտների ընթացիկ մակարդակի մասին տեղեկություններ³⁶: Այս նպատակին կարելի է հասնել նաև արտոնություններից օգտվելու շարունակականությունը պայմանավորելով նոր օրենքով նախատեսված կարգով գրանցման գործընթացով անցնելու պահանջի հետ: Սակայն, ցանկացած նման միջոցառում ներկայացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել դրա կիրարկման ծախսերն ու օգուտները, ինչպես նաև իրականացնող գործակալության ինստիտուցիոնալ կարողությունները: Այն պետք է իրականացվի այնպիսի կարգով, որը գերծանրաբեռնվածություն չի առաջացնի ներդրողների համար:

4. Ապահովել ինստիտուցիոնալ դերերի համապատասխանեցումը խթանների կառավարման և ղեկավարման գործընթացներում

ՀՀ կառավարությունը պետք է պարզեցնի խթանների կառավարման ինստիտուցիոնալ շրջանակը՝ ներկայացնելով առցանց ռեժիմով դիմում ներկայացնելու հնարավորություն (ծրագրային կիրառություն) և հստակեցնելով վարչական ընթացակարգերը: Անհրաժեշտ է ստեղծել ամուր համագործակցություն ՏՁՆՆ-ի, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ ֆինանսների նախարարության և ներգրավված այլ իրավասու մարմինների միջև: Այդ մարմինները պետք է համագործակցեն խթանների ընթացիկ համակարգը համակարգելու և ծախսերի ու օգուտների տվյալները փոխանակելու նպատակով:

Խթանների կառավարման լավ գործելակերպի սկզբունքները, որոնց Հայաստանը կարող է հետևել, ներառում են.

- 1) Ներդրումային խթանների գործընթացների և ընթացակարգերի, կառավարման, ղեկավարման և բաշխման մասին **տեղեկությունները** պետք է լինեն թափանցիկ և հանրության համար հասանելի՝ կազմելով խթանների առցանց գույքացանկի մաս:
- 2) Անհրաժեշտ է ներկայացնել հարկային արտոնությունների տրամադրման դիմումի **ավտոմատ հաստատման** համակարգ իրավասության չափանիշները բավարարող ներդրողների համար՝ թափանցիկությունը և հաշվետվողականությունը խթանելու և ներդրողների վստահությունն ամրապնդելու նպատակով: Ի հակադրություն առանձին դեպքի հիմունքով (ad hoc) արտոնությունների տրամադրման ընթացակարգի՝ ավտոմատ կարգով դիմումի հաստատումը նախատեսում է նվազագույն հայեցողականություն և սահմանափակում է կաշառքները /կոռուպցիոն ռիսկերը/ այնքան ժամանակ, քանի դեռ իրավասության չափանիշներն օբյեկտիվ են ու հստակ սահմանված և առկա են համապատասխանության ապահովումը մշտադիտարկելու և կիրարկելու կարողություններ: Հարկային մարմինները պետք է իրականացնեն պարբերական ստուգումներ, որպեսզի բացահայտեն և կանխեն տրամադրված հարկային արտոնությունների չարաշահման դեպքերը:

³⁶ Հավելված 3:

3) **Ընթացակարգերը** պետք է լինեն դյուրըմբռնելի և ընկերությունների համար հեշտ կիրառելի, իսկ պահանջները չպետք է լինեն բարդ և ժամանակատար՝ դրանց կատարման առումով: Չնայած արտոնությունների տրամադրման ընթացակարգերի մանրակրկիտ քարտեզագրման գործընթացի քննարկումը չի ներառվում սույն զեկույցի շրջանակում, այդուհանդերձ, առաջարկում ենք, որ ՀՀ կառավարությունը նախաձեռնի խթանների կառավարման և շնորհման ընթացակարգերի քարտեզագրման գործընթաց: Երբեմն, արտոնության ստացման դիմումներում պահանջվում է ներկայացնել այնպիսի տվյալներ, որոնց բացահայտման համար դիմումատուն պետք է վարեր մանրամասն ֆինանսական հաշվառում, և հաճախ, դիմումը լրացնելու համար դիմումատուն ստիպված է լինում օգտվել խորհրդատուի ծառայություններից: Այդուամենայնիվ, պետական մարմինները պետք է հավասարակշռություն պահպանեն տվյալների ստեղծման և ծրագրի հասանելիության միջև, կամ չխրախուսեն մեծ թվով անձանց կողմից դիմումներ ներկայացնելը³⁷:

Բացի այդ, ներդրումների խթանման ընթացիկ շրջանակի **արդյունավետության մշտադիտակման** վերը նշված նպատակն իրագործելու, ինչպես նաև նոր խթանների նախագծումը և կառավարումը բարելավելու համար, անհրաժեշտ է ստեղծել ամուր համագործակցություն ՏԶՆՆ-ի, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարության, ինչպես նաև ներգրավված այլ իրավասու մարմինների միջև:

Անհրաժեշտ է, որ այդ մարմինները համագործակցեն միմյանց հետ՝ ներդրումների խթանման ընթացիկ համակարգը ներդաշնակեցնելու և խթաններին ներկայացվող նոր, ավելի պարզ պահանջներ սահմանելու համար: Հետագայում, նրանք պետք է համագործակցեն նաև համապատասխան ընկերությունների մասին տեղեկություններ և ոլորտային տվյալներ հավաքելու և վերլուծելու գործընթացներում: Ներդրումների խթանման նոր ռեժիմի ներքո հնարավոր չստացված կորուստները հաշվարկելու համար անհրաժեշտ են ընկերությունների փաստացի վարքագծի մասին ավելի մեծ ծավալով տվյալներ, որոնց վերլուծությունը կօգնի կատարել ընթացիկ, ինչպես նաև նոր խթանների ավելի խորը գնահատումներ³⁸:

5. Բարձրացնել խթանների արդյունավետությունը կանոնավոր մշտադիտարկում և ծախսերի ու օգուտների վերլուծություն իրականացնելու միջոցով

³⁷ ՀԲԽ, «Ներդրումային քաղաքականության գործիքակազմեր. ներդրումային խթաններ»:

³⁸ Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայությունը կարող է լինել տվյալների լրացուցիչ աղբյուր:

Ներկայումս ՀՀ կառավարությունը չի իրականացնում իր կողմից առաջարկվող խթանների արժեքի կամ տարեկան կտրվածքով յուրաքանչյուր ներդրումային գործիքից օգտվող ընկերությունների թվաքանակի հաշվառում:

Առաջարկվում է ստեղծել շնորհիված բոլոր խթանների/արտոնությունների մշտադիտարկման և գնահատման (ՄԳ) համակարգ: Նման համակարգը հիմնված կլինի հստակ սահմանված քաղաքականության նպատակների վրա և կարձանագրի շահառուների կատարողականը՝ շահառու չհանդիսացող տնտեսվարողների համեմատությամբ կամ, եթե նպատակը ՕՈՒՆ խթանումն է՝ կկիրառի համապատասխան մեթոդաբանություններ խթանների գեր- կամ թերառաջարկը բացահայտելու համար: Որպես առաջին քայլ, պետք է փորձել նախաձեռնել գործող համակարգի փաստացի (ex-post) վերլուծություն՝ վերլուծելով շահույթի մակարդակը հարկային արտոնությունների տրամադրման պարագայում և առանց դրանց, հիմնվելով խոշոր հարկատուների կողմից ներկայացված հայտարարագրերի տվյալների վրա³⁹:

Պետական մարմինները պահանջում են առնչվող ծախսերի և օգուտների լրիվ ըմբռնում և վերլուծության կատարում. նրանք պետք է ապահովեն, որ համապատասխան խթանների դրական ազդեցությունը շատ ավելի մեծ է, քան հարկի գծով չստացված եկամուտը:


Նվազագույնը, որ կարելի է անել դա հարկի գծով ծախսի վերլուծություն իրականացնելն է՝ խթանների ծրագրին վերագրվող օգուտները գնահատելու նպատակով՝ հիմնվելով շահառու ընկերություններից հավաքված և վերլուծված տվյալների վրա: Ազդեցության գնահատման առավել առաջադեմ մեթոդները (ներառյալ փորձարարական նախագծերի միջոցով) կարելի է կիրառվել խթանների սխեմաների կատարողականի վերանայման և բարելավման դեպքում:

5.1. Խթանների ՄԳ համակարգի հիմունքների մշակումը

ՄԳ ցանկացած ջանքի ելակետը խթանման ծրագիրը քաղաքականության որոշակի նպատակի հետ հստակ կապելն է (տես ստորև՝ Պատկեր 13): Դա կարող է լինել, օրինակ՝ ՕՈՒՆ-ների մոբիլիզացումը որոշակի ոլորտներում, ավելի շատ աշխատատեղերի ստեղծումը կամ ավելի շատ ներդրումների նպատակաուղղումը հմտությունների զարգացմանը և ընկերություններում ուսուցողական դասընթացների կազմակերպմանը:

³⁹ Հավելված 4-ում ներկայացվում է ծախսերի և օգուտների վերլուծություն իրականացնելու նպատակով ընկերության մակարդակով հասույթի (եկամուտների) և հարկի գծով ծախսի մասին տվյալների ներկայացման ձևեր:

Պատկեր 13. Ծախսերի և օգուտների գնահատման լավ գործելակերպ



Աղբյուր՝ Առևտրի և մրցակցության դեպարտամենտ, WBG

Թարգմանություն

Ծախսերը և օգուտները գնահատվում են շարունակական հիմունքներով՝ քաղաքականության որոշումները հիմնավորելու համար: Խթանման յուրաքանչյուր ծրագրի մասով առկա է քաղաքականության հստակ սահմանված և չափելի նպատակ: Հարկի գծով ծախսը և այլ ծախսերը հաշվառվում են առանձին՝ խթանման յուրաքանչյուր ծրագրի մասով, այլ ոչ թե գլխավոր մակարդակով: Ծախսերի հիմունքներով հավաքվում են քաղաքականության փոփոխական ցուցանիշի տվյալներ (կախված սահմանված նպատակից), ինչպես շահառու ընկերություններից, այնպես էլ համապատասխան ստուգիչ խմբի մասով՝ խթանի ազդեցության հետևելու նպատակով:

Այս հիմունքները սահմանելուց հետո անհրաժեշտ է նախագծել համապատասխան ՄԳ համակարգ՝ հավաքելով հուսալի համեմատություն իրականացնելու համար անհրաժեշտ տվյալներն ինչպես շահառու, այնպես էլ շահառու չհանդիսացող ընկերություններից: Եթե նպատակը ՕՈՒՆ խթանումն է, ապա տվյալների հավաքումը և վերլուծությունը պետք է նպատակաուղղվի այն ներդրողների բացահայտմանը, որոնք երկիր են մուտք գործել խթանի շնորհիվ (ի տարբերություն այն ներդրողների, որոնք այլ կերպ ներդրում կկատարեին երկրում՝ անկախ արտոնությունից), հավաքելով և վերլուծելով համապատասխան տեղեկություններ, օրինակ՝ ներդրումների վերադարձելիության (ROI) տվյալներ: Թիրախավորված ընկերությունների հետազոտությունը նույնպես է կարող է օգտագործվել որպես լրացնող գործիք ներդրողների կանոնավոր հարցում իրականացնելու համար, որի միջոցով հավաքվում են տեղեկություններ երկրում ներդրում կատարելու նրանց հիմնական շարժառիթների վերաբերյալ: Այդ տեղեկությունները կարող են օգտակար լինել նաև ներդրումների խթանման ջանքերը հիմնավորելու համար՝ խթանների ծրագրերի սահմաններից դուրս: Արդյունքում ստացված տեղեկությունները պետք է վերլուծվեն խթանների յուրաքանչյուր ծրագրի մասով՝ ծախսերի մասին ստացված տեղեկությունների համադրությամբ, որպեսզի ապահովվի քաղաքականության որոշումների հիմնավորումը:

Արդյունավետ ՄԳ համակարգ ստեղծելու համար անհրաժեշտ քայլերը

1. Որպեսզի ապահովվի խթանների մասով հարկային ծախսերի, ինչպես նաև ծախսերի ու օգուտների պատշաճ հաշվարկը, անհրաժեշտ է, որ **յուրաքանչյուր ընկերություն**

ներկայացնի տարեկան հարկային հայտարարագիր անգամ այն դեպքում, երբ ներգրավված որևէ ընկերություն օգտվում է «հարկային արձակուրդ» արտոնությունից: Իրական ժամանակում տվյալների ինտեգրումը տարբեր պետական գործակալություններում, բակերում և ֆինանսական այլ հաստատություններում ու գործակալություններում, ՀՀ կառավարությանը թույլ կտա մշակել ռիսկերի ավելի ստույգ պրոֆիլներ և բացահայտելու սխալ հայտարարագրված տեղեկությունները: Սա կօգնի ոչ միայն խթանների ՄԳ-ի իրականացմանը, այլև ընդհանուր առմամբ համապատասխանության ապահովմանը:

2. **Եկամուտների մասին հայտարարագրերի, ինչպես նաև կից ֆինանսական հաշվետվությունների ու ծանոթագրությունների (ժամանակացույցերի) ձևերը, որոնց հիմքով պահանջվում է տրամադրել հարկային արձակուրդներ և արտոնյալ հարկային դրույքաչափեր, պետք է մուտքագրվեն թվային տվյալների բազա:** Նման տեղությունները կարող են օգտագործվել հարկի գծով ծախսերի հաշվետվություն կազմելու համար՝ հաշվարկելով յուրաքանչյուր ծրագրի մասով չստացված եկամուտներն ու ստացված օգուտները: Եկամուտների մասին հայտարարագրերի ձևերը պետք է ներառեն առնչվող բոլոր տվյալները՝ այդ կերպ հնարավորություն տալով ՀՀ կառավարությանն իրականացնել խթանների ծախսերի և օգուտների գնահատում: Սա ներառում է ներդրումների մասով պահանջվող հարկային նվազեցումների տեսակը և գումարը, վնասների տեղափոխումը առաջիկա ժամանակաշրջանների, և հնարավոր է նաև՝ ստեղծված աշխատատեղերի թվաքանակն ու իրականացված արտահանումների ծավալը, ինչպես նաև նախորդ ռեժիմից մնացած խթանները, որպեսզի իրականացվի ներդրումների վերադարձելիության (ROI) գնահատում:
3. **Միջինստիտուցիոնալ համագործակցությունն անհրաժեշտ է եկամուտների կորստի տվյալների հաշվարկման և մեկնաբանման համար՝** տարեկան համախմբված հաշվետվություն մշակելու միջոցով, որը կկազմի պետական բյուջեի հավելված: Առաջարկվում է, որ ՀՀ կառավարությունը տարեկան բյուջեի հավելվածի տեսքով ներառի հարկային ծախսերի մասին հաշվետվությունը՝ հնարավորություն ընձեռելով հանրությանը և շահագրգիռ կողմերին բանավիճել այդ տեսակի հարկային ծախսերի կողմ և դեմ փաստարկների շուրջ: Հավելված 3-ի ԱԴՅՈՒՄԱԿ Ա-ում ներկայացվում է *հարկային ծախսերի մասին հաշվետվության* օրինակ՝ ըստ հարկի ծախսի տեսակի և ծրագրի (վերջինս հնարավոր է միայն այն դեպքում, երբ ժամանակացույցերը ներառված են հարկային տվյալների բազայում): Հավելված 3-ի Աղյուսակ Բ-ում ներկայացվում է *ծախսերի և օգուտների վերլուծության* օրինակ: Այդ աղյուսակը կազմելու համար կարևոր է ներդրումների, աշխատատեղերի և արտահանման տվյալների հաշվառումը՝ հարկային պարտավորություն կրող յուրաքանչյուր ընկերության մասով:
4. Ի լրումն ծախսային կողմի՝ կարևոր է նաև **խթանների կիրառումից ակնկալվող օգուտների մշտադիտարկում իրականացնելը:** ՄԳ ցանկացած ջանքի ելակետը խթանման ծրագրերը քաղաքականության որոշակի նպատակների հետ հստակ կապելն է: Դա կարող է լինել, օրինակ՝ ՕՈՒՆ-ների մոբիլիզացումը որոշակի ոլորտներում, ավելի շատ աշխատատեղերի ստեղծումը կամ ավելի շատ ներդրումների նպատակաուղղումը հմտությունների զարգացմանը և ընկերություններում ուսուցողական դասընթացների

կազմակերպմանը: Նպատակները սահմանելուց հետո անհրաժեշտ է նախագծել դրանց համապատասխան ՄԳ համակարգ՝ հավաքելով հուսալի համեմատություն իրականացնելու համար անհրաժեշտ տվյալները ինչպես շահառու, այնպես էլ շահառու չհանդիսացող ընկերություններից, որոնք հնարավորություն կտան իրականացնել հուսալի համեմատություն և վերագրել ազդեցությունը որոշակի նպատակին:

- 5. Անհրաժեշտ է հզորացնել համապատասխան գործակալությունների ՄԳ իրականացնելու կարողությունները:** ՀԲԽ-ն և այլ հաստատությունները կարող են կազմակերպել դասընթացներ հարկային ծախսերի հաշվետվություն կազմելու, տվյալների հավաքակազմի վերլուծություն իրականացնելու և արդյունավետ ՄԳ համակարգեր մշակելու թեմաներով:

5.2. Գործող խթանների ազդեցության գնահատման առաջադեմ մեթոդներ

Ներդրումային խթանների ազդեցության կամ արդյունավետության գնահատումը կարող է իրականացվել տարբեր մեթոդաբանական մոտեցումների հիման վրա, որոնք ունեն գնահատման խորության տարբեր աստիճաններ կախված այնպիսի գործոններից ինչպիսիք են՝ խթանի տեսակ (տեղադրության կամ վարքագծի խթաններ), տվյալների հասանելիություն, ծախսերի և ժամանակի նկատառումներ և այլն:

Ընդլայնելով խթանների հետ կապված ծախսերի պարզ մշտադիտարկման շրջանակները, կարելի է իրականացնել ավելի խորը վերլուծություն, որի արդյունքները կպատասխանեն այն հարցին, թե որքանով է խթանների ընթացիկ ռեժիմն արդյունավետ թիրախ ոլորտներում ներդրումներ ներգրավելու պետական քաղաքականության նպատակի իրագործման առումով: Նման վերլուծությունը կօգնի հիմք ստեղծել ապացույցների վրա հիմնված մոտեցման կիրառման համար՝ բարձրացնելով թիրախների ռեժիմի նպատակաուղղվածությունը և այն ավելի սերտ ներդաշնակեցնելով կառավարության ներդրումների ներգրավման վերանայված թիրախներին: Քանի որ ՀԽԲ-ի թիմին չէր հաջողվել ստանալ համապատասխան տվյալները, գեկույցի այս բաժնում ներկայացվում են միայն մեթոդաբանությունները, որոնց միջոցով ՀՀ կառավարությունը կարող իրականացնել հեռանկարային գնահատումներ:


Ներդիր 7. Քաղաքականության նպատակներին խթանների համապատասխանության բարձր մակարդակի գնահատում

Պատկեր 14-ում ներկայացվում է հեշտ կիրառելի գնահատման մեթոդ: Այն քննարկվում է աֆրիկյան մի պետության կառավարությանը ՀԽԲ-ի կողմից տրամադրված աջակցության օրինակով, որի խնդիրն էր հստակեցնել քաղաքականության որոշ նպատակները՝ արդեն գործարկվող տարբեր խթանների մասով: Նույն տեսակի վերլուծություն կարող են նախաձեռնվել նաև Հայաստանում՝ համադրելով ըստ ոլորտների խթանների բաշխման ցուցանիշները ընկերությունների կողմից տրամադրված համապատասխան տվյալների հետ: Չախ կողմի դիագրամի հորիզոնական առանցքը ցույց է տալիս ոլորտի մասնաբաժինը խթանների ընդհանուր ծավալում, իսկ ուղղահայաց առանցքը՝ ոլորտի մասնաբաժինը երկրում առկա աշխատատեղերի ընդհանուր ծավալում (ոլորտի մասնաբաժինը ներդրումների ընդհանուր ծավալում ներկայացվում է դիագրամի աջ ծայրում): Կարելի է տեսնել, որ չնայած որոշ ոլորտներ ստացել են բազմաթիվ խթաններ, այդ ոլորտներից ոչ բոլորն են հավասարաչափ նպաստել լրացուցիչ աշխատատեղերի ստեղծմանը կամ ներդրումներին, օրինակ՝ շինարարության ոլորտը:

Քննարկելով կառավարության հետ՝ ՀԽԲ-ն գնահատեց, թե ինչ էր ակնկալվում իրագործել որոշակի խթանների միջոցով: Պարզվեց, որ խթանները նախատեսվել էին ենթակառուցվածքների կառուցումը խրախուսելու համար: ՀԽԲ-ն առաջարկեց հավաքել լրացուցիչ տվյալներ այդ ընկերությունների մասին, որպեսզի պարզի, թե արդյոք խթանը փաստացի հանգեցրել է ավելի շատ ենթակառուցվածքների կառուցմանը: Հետաքրքրական է, որ «ձեռնարկություններին ծառայություններ մատուցող» (services aux entreprises) ոլորտը նույնպես ստացել էր բազմաթիվ խթաններ, բայց ստեղծել էր շատ աշխատատեղեր: Եթե նպատակը աշխատատեղերի ստեղծումն էր, ապա դա կարող էր լինել լավ ներդրում: Սակայն, մյուս կողմից, նույն ոլորտի մասնաբաժինը ներդրումների ընդհանուր ծավալում բարձր չէր, այդպիսով, եթե քաղաքականության նպատակը ներդրումների ծավալի աճն էր, ապա այդ խթանները լավ չէին թիրախավորվել: Նավթի և գազի արդյունաբերության ոլորտում պատկերը լրիվ հակառակն էր (ներդրումների մեծ ծավալ, բայց քիչ աշխատատեղեր):

Ընդհանուր առմամբ, նման վերլուծություն իրականացնելու աշխատանքները սկսվում են գնահատելուց, թե ինչ տեղեկություններ կարելի է հավաքել ընկերությունների և ոլորտների մակարդակով, որպեսզի հնարավոր լինի խթանները կապել քաղաքականություն արդյունքների հետ: Հաջորդը քայլը ներգրավված պետական մարմինների հետ քաղաքականության հիմնական նպատակների և դրանց իրագործմանն ուղղված խթանների գնահատման շուրջ բարձր մակարդակով քննարկումների անցկացումն է:

Պատկեր 14. Ըստ ոլորտների խթանների բաշխման ցուցանիշների համադրումը ընկերությունների կողմից տրամադրված տեղեկությունների հետ



Տարբեր երկրներում և քաղաքականության համատեքստերում խթանների արդյունավետությունը գնահատելու համար ՀԽԲ-ն գործարկել է ազդեցության գնահատման մի շարք մոտեցումներ: ՀԽԲ-ն կարող է աջակցել Հայաստանին այդ մոտեցումներից ցանկացածը կիրառելու գործում: Ներդիր 5-ում ներկայացվում է ազդեցության գնահատման տարբեր մոտեցումների ամփոփ նկարագրությունը:

Ներդիր 8. Ներդրումային խթանների արդյունավետության գնահատման մոտեցումները

Տեղադրության խթանների մասով ազդեցության գնահատման ամենակարևոր հարցը պատճառական կապն է, այն է՝ պարզել, թե արդյոք խթանն արդյունավետ է եղել օտարերկրյա ընկերություններին փաստացի տվյալ երկիր բերելու առումով: Սա չնչին հարց չէ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշ ընկերություններ այլ կերպ կգային երկիր՝ անկախ խթանից: Այսպես կոչված «մարզինալ» ներդրողներին (ընկերություններ, որոնք մուտք են գործում տվյալ երկիր բացառապես առաջարկվող խթանի համար) տարբերակելու համար կարելի է կիրառել հարաբերականորեն ինտուիտիվ մոտեցում, որը նախատեսում է ներդրողի շարժառիթների հարցման անցկացում, որի միջոցով ընկերություններին առաջարկվում է թվարկել (և միավորներով գնահատել) այն ամենակարևոր գործոնները, որոնք ազդել են տվյալ երկիր գալու նրանց որոշման վրա: Խթանների բարձր միավորները ցույց են տալիս, որ տվյալ ներդրողը «մարզինալ» է: Քանի որ մարզինալության բացահայտումը հիմնվում է «ինքնահայտարարման» մեխանիզմի վրա, այդ մոտեցումն ունի որոշակի սահմանափակումներ: Կախված (հատկապես) ընկերությունների մակարդակով տվյալների հասանելիությունից՝ կիրառվում են ավելի խորը մոտեցումներ, որոնք հիմնվում են ներդրումների վերադարձելիության (ROI) հաշվարկների և համեմատությունների վրա:

Վարքագծի խթանների մասով կարելի է կիրառել ավելի մանրակրկիտ մշակված մեթոդաբանական տարբերակներ: Ի տարբերություն տեղադրության խթանների՝ վարքագծի խթանների մեծ մասի համար հնարավոր է սահմանել ընկերությունների ստուգիչ խումբ, որը չի օգտվում որոշակի արտոնություններից, և համեմատել արտոնություն ստացած և չստացած ընկերությունների վարքագիծը՝ խթանման ծրագրով սահմանված նպատակի համատեքստում: Պատկեր 15-ում թվարկվում են էկոնոմետրիկ գնահատումների որոշ տեսակներ, որոնք կարելի է կիրառել ազդեցության նման գնահատման աշխատանքներում: Շարժվելով վերևից ներքև ուղղությամբ՝ ավելանում է դրանց բարդությունը, հավաքման ենթակա տվյալների ծավալը և աճում են ծախսերը:

Պատկեր 15. Խթանների արդյունավետության գնահատման էկոնոմետրիկ մեթոդներ և դրանց խորության մակարդակը



Ցուցադրական նպատակներով կարելի է կիրառել պարզ «մինչև-հետո» կամ «մասնակից-ոչ մասնակից» համեմատությունները, սակայն դրանք այնքան էլ նպատակահարմար չեն խթանման ծրագրերի պատճառական կապը պարզելու համար: Ազդեցության գնահատման տիպիկ մեթոդները, ինչպիսիք են հակվածության գնահատականի համադրման (PSM - propensity score matching), տարբերությունների համադրության (DiD - differences-in-differences) և ռեգրեսիայի ընդհատության (RDD regression discontinuity design) մեթոդները, կամ դրանց համադրությունը, կարող են հանգեցնել արդյունավետ արդյունքների՝ սահմանափակ ծախսերով: Մեթոդաբանության/մեթոդի և գնահատման շրջանակի ճիշտ ընտրությունը մեծապես կախված է տվյալների հասանելիությունից և ընկերությունների կողմից ծրագրի ընտրության բնույթից ու որակավորումից: Ռեգրեսիայի ընդհատության մեթոդը, որը հիմնվում է ընդհատության գծից անմիջապես վերև և ներքև գտնվող ընկերությունների միջև համեմատության կամ խթանների ընդունման գնահատականի վրա, հաճախ, գերադասելի է մյուս երկու մեթոդներից, եթե այդ տեղեկությունները հասանելի են:

Պատահական ընտրությամբ հսկվող փորձարկումները (RTC - Randomized control trials) գլխավորում են վերը նշված մեթոդների ցանկը՝ մեթոդաբանության խորության և վարքագծի խթանների ազդեցության պատճառական կապի ապացույց գտնելու ունակության առումով: Սակայն, նման փորձարկումների իրականացումը հաճախ դժվար է և ծախսատար, քանի որ դրանք պահանջում են խթանման սխեմայի նախագծման ճշգրիտ բնութագրեր, որոնք ներառում են պատահական ընտրված հսկիչ և հսկվող խմբերի ձևավորում:

Աղբյուր՝ Առևտրի և մրցակցության դեպարտամենտ, ՀԽԲ


6. Դիտարկել հմտությունների զարգացմանն ավելի մեծ ուշադրություն դարձնելու հնարավորությունը

Հմտությունները կազմում են ցանկացած երկրի գիտելիքահեն ոլորտներում և բարձր ավելացված արժեք ունեցող գործունեությունում ՕՈՒՆ ներգրավելու արժեքի առաջարկի մասը: ՀՀ կառավարությունը կարող է դիտարկել ավելի լավ թիրախավորված խթանների քաղաքականությանն անցնելու հնարավորությունը, որը նպատակաուղղված կլինի մարդկային կապիտալի զարգացմանը և նորարարության աջակցությանը կարճաժամկետ

հեռանկարում, քանի դեռ այդ հարցերն արմատապես չեն լուծվել կրթության համակարգի ավելի երկարաժամկետ բարեփոխումները ծրագրով: Սակայն, մինչ այդ, ՀՀ կառավարությունը պետք է գնահատի շուկայի այն հատուկ ձախողումները, որոնք խոչընդոտում են երկրի տարածքում հմտությունների ձևավորմանը և զարգացմանը, ինչպես նաև ուսումնասիրի այն երկրների փորձը, որոնք հաջողությամբ իրականացրել են հմտությունների զարգացմանն ուղղված վարքագծի խթանների ծրագրեր:

Հմտությունների պակասը որպես խոչընդոտ է ճանաչվել որոշ ընկերությունների կողմից և որոշակի ոլորտներում՝ ներառյալ տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) ոլորտում, որը ՀԶՀ-ն ներառել է ՕՈՒՆ խթանման գերակա ոլորտների ցանկում: ՏՏ ոլորտում վերջին սրընթաց զարգացումները (բումբ) խթանեցին բարձր որակավորում ունեցող և տեխնիկական կրթությամբ մասնագիտական աշխատուժի պահանջարկը: Հմտությունների պակասը ճանաչվել էր որպես հիմնական խոչընդոտ ձեռնարկությունների հարցման մասնակից այն ընկերությունների կողմից, որոնք ոլորտի առաջատարներն էին, ներկայացնում էին նոր ապրանքներ, ներդրումներ էին կատարում R&D գործունեությունում և Հայաստանում ՏՏ ոլորտի վերելքի տարիներին կատարելագուծում էին իրենց արտադրանքը⁴⁰: Համաշխարհային տնտեսական ֆորումը ևս նշեց, որ անբավարար կրթված աշխատուժը և ինովացիա կատարելու անբավարար կարողությունները հանդիսանում են գործարարությամբ զբաղվելու հիմնական խոչընդոտները, ինչպես համաշխարհային, այնպես էլ Հայաստանի մակարդակով (տես ստորև՝ Պատկեր 16):

Պատկեր 16. Հայաստանում գործարարությամբ զբաղվելու հիմնական խոչընդոտները



Աղբյուր՝ Համաշխարհային տնտեսական ֆորում, 2017

Թարգմանություն՝ Ֆինանսավորման հասանելիություն / Կոռուպցիա / Անարդյունավետ պետական բյուրոկրատիա / Հարկի դրույքաչափեր / Հարկային կարգավորումներ / Անբավարար կրթված աշխատուժ / Արտարժույթային կարգավորումներ / Մղած / Անբավարար ենթակառուցվածքներ / Ինովացիա կատարելու անբավարար կարողություն / Քաղաքականության անկայունություն / Ազգային աշխատուժի անբավարար աշխատանքային էթիկա / Սահմանափակող աշխատանքային օրենսդրություն / Անբավարար հանրային առողջապահություն / Հանցագործություն և զողություն / Կառավարության անկայունություն /

⁴⁰ «Systematic Country Diagnostic», ՀԻՔ («Երկրների համակարգային աշխտորոշում»), պատրաստ կլինի առաջիկայում:

Կրթության որոշակի նվազագույն մակարդակի հասնելն անհրաժեշտ վավերապայման է ցանկացած երկրի համար, որը ձգտում է ներգրավել ու պահել ՕՌԻՆ և առավելագույնի հասցնել մարդկային կապիտալի հետ կապված անուղղակի ազդեցությունները, որոնք առաջանում են օտարերկրյա կապիտալով ընկերությունների ներկայության հետևանքով: Ավելի լավ կրթված և հմուտ աշխատուժը մեծացնում է ստացվող «նոու-հաու» գիտելիքները կլանելու տվյալ երկրի կարողությունը: Ընդհանուր առմամբ, ավելի հավանական է, որ ՕՌԻՆ-ները դրական արդյունքներ տան այն երկրներում, որոնք ունեն բավարար որակյալ աշխատուժով մարդկային կապիտալի պաշարի նվազագույն շեմ⁴¹:

Ուսուցողական/վերապատրաստման և հմտությունների տրամադրման հետ կապված ներդրումային խթաններն արդյունավետ կիրառվել են գիտալիքահեն ոլորտների համար մրցող երկրների կողմից՝ հմտությունների չափազանց մեծ պակասը հաղթահարելու համար: Նշված ոլորտներում ներդրումների ներգրավման համար մրցող երկրների կողմից հաջողությամբ կիրառված գործիքների օրինակները ներառում են՝ թրեյնինգի վճարներ, հատուկ կուրսերի/ուսումնական ծրագրերի ներկայացում, աշխատանքի թույլտվությունների սահմանափակումներից ազատում՝ որակավորված օտարերկրյա մասնագետների համար: ՀՀ կառավարությունը կարող է լծակավորել այլ երկրների փորձից քաղված դասերը, որոնք հաջողությամբ իրականացրել են նշված հատուկ խնդիրների լուծմանն ուղղված խթանման ծրագրեր, օրինակ՝ Կոստա Ռիկա, Մինգապուր և Մալազիա:

6.1. Հմտությունների զարգացմանն ուղղված խթանների կիրառման օրինակներ միջազգային փորձից, որոնք տեղին են Հայաստանի համար⁴²

Կենտրոնանալով ՕՌԻՆ ներգրավմանն ուղղված խթանների վրա՝ շատ երկրներ հաճախ անտեսում են դրանց տարածման ազդեցության ներուժը («spillover» ազդեցություն): Երբ ներդրումներն արդեն ներգրավվել են տնտեսության մեջ, իշխանությունները կարող են կիրառել վարքագծի խթաններ, որպեսզի ազդեն ներդրողների որոշակի վարքագծի վրա, օրինակ՝ տեղացի աշխատողների հավաքագրում, ինովացիոն ոլորտում ներդրումների կատարում, տեղական մատակարարների ծառայությունների օգտագործում հետադարձ կապեր հաստատելու համար: Սա կարող է օգնել ցածր արդյունավետություն ունեցող արտադրական գործունեության արդիականացմանը՝ նպատակաուղղելով այն դեպի միջազգային արտադրության ցանցերի ավելի բարձր ավելացած արժեք ստեղծող սեգմենտները:


Իշխանությունները կարող են կիրառել տարբեր այլ գործիքներ, որոնք հատուկ նախատեսվում են վերապատրաստման (թրեյնինգ) և կրթության ոլորտում մասնավոր հատվածի ներդրումները խթանելու համար: Համապատասխան քաղաքականությունները կարող են ներառել, ի թիվս այլ գործիքների, գործատուների իրազեկում հմուտ աշխատուժի առկայության մասին կամ սպասարկման որակի բարելավում, օրինակ՝ զբաղվածության

⁴¹ Borensztein, De Gregorio, & Lee (1998)

⁴² Տես Հավելված 7՝ հմտությունների զարգացման ոլորտում խթանների կիրառման ընտրված երկրների փորձի ուսումնասիրության ցանկը: /չկա/

աջակցման ծառայություններ: Այս դեպքում փոքր ընկերությունների վրա «մասշտաբի ազդեցության» արտաքին գործոնները մեղմելու կամ խնդիրները լուծելու հաջողված փորձ է գործարար միավորումների (ասոցիացիաներ) ստեղծումը, որոնց միջոցով համակարգվում են աշխատանքները բազմաթիվ փոքր ձեռնարկությունների հետ՝ կոլեկտիվ գործողությանն աջակցելու նպատակով: Բացի խթանների տրամադրումից՝ իշխանությունների գործողությունները կարող ձեռնարկվել նաև ընկերություններին իրազեկելու, խմբային աշխատանքներին աջակցելու և հմտությունների զարգացման համար բարենպաստ շրջանակ ստեղծելու ծրագրերի միջոցով (Պատկեր 17)⁴³:

Պատկեր 17. Գործողությունների շրջանակներ, որոնք իշխանությունները կարող են ձեռնարկել հմտությունների զարգացման ոլորտում մասնավոր հատվածի ներդրումները խթանելու համար



Աղբյուր՝ Brisbois, Pollack and Aunders (2009)

Թարգմանություն

Մասնավոր հատվածի կողմից հմտությունների զարգացմանն ուղղված ներդրումների խթանում		
Խթաններ	Տեղեկատվություն և աջակցություն	Կարգավորում
<ul style="list-style-type: none"> • Հարկային խթաններ • Սուբսիդիաներ • Թրեյնինգի վճարներ 	<ul style="list-style-type: none"> • Տեղեկատվության տարածում • Սուբսիդիաներ 	<ul style="list-style-type: none"> • Ավելի ցածր աշխատավարձեր • Սուբսիդիաներ • Վերապատրաստման արձակուրդ • Աշխատատեղերի ռոտացիայի սխեմաներ • Բարձր որակավորում ունեցող օտարերկրյա մասնագետների շրջանակ

ՀՀ կառավարությունը պետք է որոշի, թե արդյոք հմտությունների զարգացումը առաջնահերթություն է և, եթե այո, ապա որոնք են հմտությունների արդիականացումը խթանելու լավագույն ուղիները և ինչ նպատակով: Ինչպես ցույց է տրված Պատկեր 17-ում իշխանությունները կարող են կիրառել հմտությունների արդիականացումը խրախուսելու խթանների երեք խումբ՝ հարկային խթաններ, ֆինանսական խթաններ (սուբսիդիաներ) և թրեյնինգի վճարներ: Դրանցից յուրաքանչյուրն ունի իր ուժեղ և թույլ կողմերը, ուստի, ճիշտ

⁴³ Brisbois, Pollack and Aunders (2009)

ընտությունը մեծապես կախված կլինի շուկայի ձախողման հատուկ գործոններից և որպես թիրախ ընտրված ընկերությունների տեսակից: Փորձը ցույց է տալիս, որ հարկային խթաններն ավելի դժվար է թիրախավորել, հատկապես ՓՄՁ-ների պարագայում, և դրանք նպաստավոր են հիմնականում խոշոր ընկերությունների համար: Մինևույն ժամանակ, հարկային խթանների իրական ծախսերը դժվար է չափել: Այնուամենայնիվ, դրանք կարող են նպատակահարմար գործիք լինել ուսուցողական/վերապատրաստման ծրագրերի որոշ արտաքին հարցերի լուծման համար, օրինակ՝ թրեյնինգներ, որոնք հիմնականում կազմակերպվում են խոշոր ընկերությունների կողմից: Սա պետք է դիտարկել նաև ՕՈՒՆ ներգրավման և հմտությունների զարգացման ջանքերը միավորելու շուրջ քննարկումների համատեքստում: Հարկային արտոնություններն արդեն իսկ լայնորեն կիրառվում են ՕՈՒՆ խթանման համար, մինչդեռ ավելի քիչ արդյունավետ որոշ գործիքների փոխակերպումը կարող է լինել ինչպես ավելի արդյունավետ, այնպես էլ չեզոք՝ եկամուտների առումով. օրինակ՝ կարելի է ընդհանուր հարկային արձակուրդները փոխակերպել հարկային այնպիսի արտոնությունների, որոնք տրամադրվում են հմտությունների արդիականացման պայմանով:

Ստորև ներկայացված Կոստա Ռիկայի փորձը հետաքրքրական կլինի Հայաստանի շահագրգիռ մարմինների համար. այն նկարագրում է երկրի հաջող անցումը բազային արտադրության դասական վայր լինելուց դեպի համաշխարհային շուկայում ուժեղ մրցակցի դիրքը գրավելն այնպիսի գիտելիքահեն ոլորտներում, ինչպիսիք են ծրագրային ապահովումների և համատեղ սպասարկման կենտրոնները: Բացի այդ, Հավելված 5-ում ներկայացվում է ևս մի քանի երկրների փորձը (ներառյալ՝ Մինգապուր, Լիտվա և Մալազիա), որոնք հաջողությամբ մշակել և ներդրել են որոշակի ոլորտներում հմտությունների հզորացման խթաններ և հմտություններ ներգրավելու այլ ծրագրեր:

Ներդիր 9. Հմտություններ և ՕՈՒՆ. Կոստա Ռիկայի SS ոլորտների փորձից քաղված դասեր

Կոստա Ռիկան հայտնի է որպես ՕՈՒՆ ներգրավման հաջողված օրինակ, որի շնորհիվ այն գյուղատնտեսական հումք արտահանող երկրից վերածվեց SS ոլորտի և հարակից ծառայությունների կենտրոնի: Երկրի կողմից ծառայությունների (մասնավորապես՝ SS և հարակից ծառայություններ) արտահանման ծավալներն աճել են քսանապատիկ անգամ 1995թ.-ից ի վեր՝ \$165 միլիոնից հասնելով մինչև \$3.4 մլրդ (2014թ.): Վերջին տարում ծառայությունների արտահանման մասնաբաժինը երկրի ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 36 տոկոս: Միաժամանակ, աճել է նաև բիզնես ծառայությունների ոլորտում գործունեություն իրականացնող ընկերությունների թիվը՝ 4-ից (1994թ.) հասնելով մինչև 75-ի (2014թ.):

ՕՈՒՆ-հմտություններ հանգույցն այս հաջողված օրինակի կարևոր մասն է, ինչպես վավերապայմանների (որոնց գործարկումը հնարավորություն է ընձեռել երկրին մուտք գործել այդ խիստ բարձր գիտելիքահեն ոլորտները), այնպես էլ աշխատանքի բարձր արտադրողականության և ուսուցման միջոցով բնակչությանը տված օգուտների առումներով:

Կոստա Ռիկայի արժեքի առաջարկը՝ որպես գիտելիքահեն, արդունավետության բարձրացմանն ուղղված ՕՈՒՆ հյուրընկալող երկիր, հիմնվում է տարբեր գործոնների համադրության վրա, որտեղ կարևոր դեր կատարեցին ստորև նշված առավելությունները: Կոստա Ռիկան ունի հարմար աշխարհագրական տեղադրություն և օգտվում է շուկաներին, մասնավորապես, ԱՄՆ շուկաներին մոտ լինելու հանգամանքից: Երկրի քաղաքական վիճակը կայուն է: Բավականին երկար ժամանակի ընթացքում կրթության ոլորտում կատարված խոշոր ներդրումների շնորհիվ երկիրն առաջարկում է լավ կրթված, սակայն համեմատաբար ոչ թանկ աշխատուժ: Արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումների ներգրավման կարևոր գործոններից է նաև շուկաների հասանելիությունը: Ըստ սահմանման՝ արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումներն ունեն արտահանման կողմնորոշում, ուստի հիմնական ընդունող շուկաներ մուտք գործելու հարմար տեղադրությունն այն հիմնական վավերապայմանն է, որը թույլ է տալիս երկրին

դիրքավորվել որպես այդ տեսակի ՕՈՒՆ-ների համար գրավիչ վայր: Հարկ է նշել, որ ասվածը վերաբերում է ծառայությունների առևտրի ոլորտին:

Հարկային արտոնությունները կարևոր դեր են կատարել որպես բարձր տեխնոլոգիաների ոլորտի տեղադրության խթաններ: Դրանք կազմում են Կոստա Ռիկայի կողմից ներդրողներին կատարվող արժեքի առաջարկի մասը, որոնք հնարավորություն ընձեռեցին երկրին մրցելու «նման երկրների» հետ այդ տեսակի ներդրումներ ներգրավելու համար: Բացի այդ, Կոստա Ռիկան առաջարկում է ֆինանսական խթաններ, մասնավորապես՝ էլեկտրաէներգիայի նվազեցված սակագներ և «աշխատավարձի գծով սուբսիդիաներ» երկրի տարածքում կազմակերպված ընտրված ազատ տնտեսական գոտիներում (ԱՏԳ) ներդրում կատարող ընկերություններին: ՏՏ և հարակից ծառայությունների ոլորտներում ներդրում կատարած ընկերությունների մեծ մասը իր գործունեությունը կազմակերպել է ԱՏԳ-ներում:

Որպես իր խթանների ռեժիմի հետագա զարգացման մաս՝ Կոստա Ռիկան առաջարկում է ուղեկցող ֆինանսական և կարգավորման խթաններ, որոնք կապվում են հատկապես ՏՏ և հարակից ոլորտներում մարդկային կապիտալի զարգացման հետ: Դրանք ներառում են հմտություններին ու կրթության հետ կապված մի շարք խթաններ, որոնք հատկապես նպատակաուղղվում են ներդրողներին հետաքրքրող ոլորտներում (ՏՏ ոլորտ և հարակից ծառայություններ) մարդկային կարողությունների զարգացմանը: Մասնավորապես, Կոստա Ռիկայի փաթեթը ներառում է.

- համաձայնագրերի կնքում հիմնական ներդրողների հետ կրթական և հատուկ թիրախավորված վերապատրաստման ծրագրերի շրջանակներում աշխատանքների համակարգման մասին.
- ֆինանսական խթանների տրամադրում մասնակի կրթաթոշակների ձևով՝ հիմնական ներդրողների առկա կամ պոտենցիալ աշխատողների համար վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու նպատակով.
- մասնագիտական ուսուցման խթաններ ԱՏԳ-ներում գործունեություն իրականացնող ներդրողների համար (ֆինանսական աջակցություն 3-ից մինչև 6-ամսյա թրեյնինգ ծրագրերի համար).
- օտարերկրյա աշխատուժի ներգաղթի ընթացակարգերի պարզեցման ծրագիր:

Վերջին մի քանի տարիներին Կոստա Ռիկայում արձանագրվել է հմտություններին առնչվող վերոնշյալ խթանների կայուն զարգացում՝ լավ չնախագծված և չծրագրված մոտեցումից դեպի ավելի սերտ կապակցված և համակարգված համագործակցությունը ոլորտի հիմնական օտարերկրյա ներդրողների հետ:

2012 թվականին կառավարությունը (գիտությունների և տեխնոլոգիաների նախարարությունը) ստորագրեց Փոխըմբռնման հուշագիր (ՓՀ) «Intel» ընկերության հետ՝ ստեղծելով համագործակցության շրջանակ, որի ներքո նախատեսվում է կազմակերպել հմտությունների հզորացման մասնագիտացված դասընթացներ երկրում իր գործունեությունն ընդլայնող «Intel» ընկերության աշխատողների համար: Հուշագիրը, օրինակ, թույլ է տալիս տրամադրել մասնակի կրթաթոշակներ ընկերության աշխատողներին, իսկ Intel-ը պարտավորվում է հատուցել յուրքանչյուր ծրագրի ընդհանուր արժեքի 20%-ը: Նման համաձայնագրեր են կնքվել նաև մի շարք այլ հանրահայտ ընկերությունների հետ՝ ներառյալ HP, Infosys և IBM:

Սակայն, Կոստա Ռիկան ունի նաև հմտությունների զարգացման և թրեյնինգի խրախուսման ռեժիմի իրականացման հետ կապված խնդիրներ, մասնավորապես՝ մասնավոր հատվածի կորպորացիաների հետ համագործակցելու հնարավորությունների լծակավորում, որպեսզի ապահովվի կրթության օրակարգի առաջընթացը: Դեռևս առկա է հիմնական ներդրողների հետ հարաբերությունները բարելավելու և հետագայում համագործակցությունն էլ ավելի խորացնելու անհրաժեշտություն, որպեսզի համատեղ ջանքերով լուծվի փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այնպիսի հարց, ինչպիսին է մարդկային կապիտալի զարգացումը: Վերը

նկարագրված մոտեցման մեջ, որտեղ Կոստա Ռիկյան համաձայնագրեր է կնքել բարձր տեխնոլոգիաների առաջատար բազմազգ կորպորացիաների հետ, երկիրն ունեցել է որոշ դժվարություններ, որոնք կապված են եղել ստանձնած պարտավորությունները կատարելու կամ այդ համաձայնագրերով նախատեսված օգուտները ամբողջ ծավալով լծակավորելու հետ: Սա վկայում է այն մասին, որ թերագնահատել է ինստիտուցիոնալ կարողությունների կարևորությունը նման գործընկերությունների ներքո ստանձնած պարտավորությունները մինչև վերջ արդյունավետ ձևով իրականացնելու գործում: Երբեմն, այն ավելի կարևոր է, քան նախաձեռնությունների նախագծումը: Կոստա Ռիկայում վատ կառավարումը հաճախ պայմանավորված է նման ծրագրի (ծրագրերի) ղեկավարման համար անհրաժեշտ համապատասխան ինստիտուցիոնալ շրջանակի բացակայությամբ: Կոստա Ռիկայի փորձն այլ երկրներին ցույց է տալիս, որ պետական-մասնավոր համագործակցության շրջանակ մշակելիս մեծ ուշադրություն պետք է դարձնել մարդկային կապիտալի և հմտությունների զարգացմանը:

***Աղբյուր՝** Հմտությունների և ՕՈՒՆ-ների խթանում. SS ոլորտի և հարակից ծառայությունների Կոստա Ռիկայի փորձից քաղված դասեր (ՀԽԲ, 2016թ.)*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Adams, Arvil V (2011), "The Role of Skills Development in Overcoming Social Disadvantage". United Nations Educational, Scientific and Cultural Organization (UNESCO).

Alfaro, L. & Rodríguez-Clare, A. (2003), "Multinationals and Linkages. An Empirical Evaluation," Harvard Business School and Inter-American Development Bank.

Alfaro, L. & Rodríguez-Clare, A. (2003), "Multinationals and Linkages. An Empirical Evaluation," Harvard Business School and Inter-American Development Bank.

Alfaro, L., Chanda, A., Kalemli-Ozcan, S., Sayek, S. (2006), "How Does Foreign Direct Investment Promote Economic Growth? Exploring the Effects of Financial Markets on Linkages". Harvard Business School.

Alfaro, L., Chanda, A., Kalemli-Ozcan, S., Sayek, S. (2006), "How Does Foreign Direct Investment Promote Economic Growth? Exploring the Effects of Financial Markets on Linkages". Harvard Business School.

Arráiz, I., Henríquez, F. & Stucchi, R. (2011), "Impact of the Chilean Supplier Development Program on the performance of SME and their large firm customers," IDB Working Paper, OVE/WP-04/11

Barbour, P. (2005), "An Assessment of South Africa's Investment Incentive Regime with a Focus on the Manufacturing Sector," ESAU Working Paper, No. 14.

Biggs, P. 2007, "Tax Incentives to Attract FDI, Paper presented at the Meeting of Experts on FDI, Technology and Competitiveness", UNCTAD, Palais des Nations, Geneva.

Blomström, M. & Kokko, A. (2003), "The Economics of Foreign Investment Incentives," NBER Working Paper, No. 9489, Cambridge: NBER.

Borensztein, E., J. De Gregorio and J. W. Lee., (1998) "How Does Foreign Direct Investment Affect Economic Growth?" Journal of International Economics.

Brisbois, Richard; Pollack, Nicole; Saunders, Ron (2009), "Lessons from Other Countries Regarding Incentives for Employer-Sponsored Training". Canadian Policy Research Networks (CPRN).

CEDEFOP - European Centre for the Development of Vocational Training (2009), "European Centre for the Development of Vocational Training".

CEDEFOP - European Centre for the Development of Vocational Training (2012), "Training leave: Policies and practice in Europe".

Dahlman, C.J. / O. Sananikone (1990): Technology Strategy in the Economic Development of Taiwan: Exploiting Foreign Linkages and Investing in Local Capability, Washington, D.C.

"Dar, Amit (2000), "Vocational Education and Training in Tanzania: Finance and Relevance Issues in Transition in "Vocational Education and Training Reform: Matching Skills to Markets and Budgets", I. Gill, F. Fluitman and A. Dar (eds)., Oxford University Press."

Dar, Amit et. al. (2003), "Training Levies: Rationale and Evidence from Evaluations". The WBG.

Del Carpio, Ximena; Moroz, Harry; Ozden, Caglar; Testarverde, Mauro; Wagner, Mathis (2008), "Improving the Effectiveness of TalentCorp's Initiatives". WBG.

Development Foundation of Armenia

Dunbar, Muriel (2013), "Engaging the private sector in skills development". Department for International Development (DFID).

Dunning, J. H. "Multinational Enterprises and the Global Economy" (Harlow: Addison-Wesley), 1993.

Eicher, Theo S. and Kalaitzidakis, Pantelis, (1997) "The Human Capital Dimension to Foreign Direct Investment: Training, Adverse Selection and Firm Location".

Enterprise Ireland (2016a), "Funding Supports", available at <https://www.enterpriseireland.com/en/funding-supports/Company/>

Farole, T. & Akinci, G. (2011), "Special Economic Zones Progress, Emerging Challenges, and Future Directions," Washington DC: The World Bank.

Farole, T. & Winkler, D. (2014), "Making Foreign Direct Investment Work for Sub-Saharan Africa Local Spillovers and Competitiveness in Global Value Chains," Washington DC: The World Bank.

Financial Times, "FDI Markets", 2016.

Gasskov, Vladimir (1998), "Levies, leave and collective agreements incentives for enterprises and individuals to invest in training". International Labor Organization (ILO).

Gasskov, Vladimir (2001), "Government Interventions in Public Financing of Training". International Labor Organization (ILO).

Glick, Peter (2015), "The Private Sector and Youth Skills and Employment Programs". RAND Corporation.

Hoong, S.S. (1992): Enhancing Technological Linkages Through the Ancillary and Support Industry, in: I.M. Salleh and L. Rahim (eds.), Enhancing Intra-Industry Linkages. The Role of Small and Medium Scale Industries, Kuala Lumpur, pp. 19 - 25

James, Sebastian, "Tax and Non-Tax Incentives and Investment: Evidence and Policy Implications", WBG, 2013.

Johanson, Richard (2009), "A Review of National Training Funds". The WBG.

Kuruville, Sarosh & Chua, Rodney (2000), "How Do Nations Develop Skills? Lessons from the Skill Development Experiences of Ինդուստրիա". Cornell University.

Lettmayr, Christian F. (2012), "Payback clauses in Europe: supporting company investment in training". European Centre for the Development of Vocational Training.

Leuven, Edwin & Oosterbeek, Hessel (2004). "Evaluating the Effect of Tax Deductions on Training" Journal of Labor Economics, Vol. 22. No. 2 (April 2004) pp. 461-488.

Linden, Toby and Anthony Patrinos, Harry (2003), "Lifelong Learning in the Global Knowledge Economy. Challenges for Developing Countries". The WBG.

Llobet, Gabriela (2016), "Skills and FDI promotion: Lessons from the case of the IT and IT enabled services industries in Costa Rica". The WBG.

Malta Enterprise (2016), "Incentive Guidelines for Knowledge Transfer"

Martinez-Fernandez, Cristina & Powell, Marcus (2009), "Employment and Skills Strategies in Southeast Asia: Setting the Scene". OECD.

Meyanathan, S.D. / I.M. Salleh (1994): Malaysia, in: S.D. Meyanathan (ed.), Industrial Structures and the Development of Small and Medium Enterprise Linkages: Examples from East Asia, Washington, D.C., pp. 23 - 66

MIDA – Malaysia’s Investment Development Authority <http://www.mida.gov.my/home/>

Ministry of Finance Republic of Tunisia (2016), "Taxes au profit du fonds de développement de la compétitivité dans le secteur industriel (FODEC)," available at http://www.impots.finances.gov.tn/documentation/impots_fr/tcl_fr_6.htm

Müller Normann, and Behringer Friederike (2012), "Subsidies and Levies as Policy Instruments to Encourage Employer-Provided Training". The Organization for Economic Co-operation and Development (OECD).

(OECD), (2003A), "Checklist for Foreign Direct Investment Incentive Policies".

OECD (2005), "Encouraging Linkages Between Small And Medium-Sized Companies And Multinational Enterprises," Paris: OECD.

OECD (2013), "Local Strategies For FDI-SME Linkage Building In Kazakhstan," Local Economic and Employment Development (LEED) Division of the Centre for Entrepreneurship, SMEs and Local Development of the OECD, Paris: OECD.

Organization for Economic Co-operation and Development (OECD), (2012B), "Better Skills Better Jobs Better Lives a Strategic Approach to Skills Policies".

Potter, J. (2005), "Embedding Foreign Direct Investment," Paris: OECD.

Ring, Kenneth & Palmer, Robert (2007), "Skills Development and Poverty Reduction: A State of the Art Review". European Training Foundation (ETF).

Smarzynska, B. & Spatareanu, M. (2004), "Czech Suppliers of Multinational Corporations – Benefits and Challenges," Vienna: World Bank.

Smith, Andrew and Billett, Stephen (2006), "Mechanisms for enhancing employer investment in training: a comparative perspective". Charles Sturt University. Griffith University

Spar, Debora. 1998. "Attracting High Technology Investment: Intel's Costa Rican Plant." Foreign Investment Advisory Service. Occasional Paper 11. International Finance Corporation and World Bank, Washington, DC.

Stone, Ian (2012), "Upgrading Workforce Skills in Small Businesses: Reviewing International Policy and Experience.Skills Development for SMEs and Entrepreneurship". Durham University and The Organization for Economic Co-operation and Development (OECD).

Stone, Ian and Braidford, Paul (2008), "Engaging small employers in continuing training: an international review of policies and initiatives". St Chad's College, Durham Business School and Durham University.

Tuomi, Krista (2012), "Review of Investment Incentives - Best Practice in Attracting Investment". IGC, London School of Economics and Oxford University.

UNCTAD, "World Investment Report", 2016.

UNIDO (2014), "Tunisia National Upgrading Program Summary," available at http://www.unido.org/fileadmin/user_media_upgrade/What_we_do/Topics/Business_investment_and_technology_services/CUP/BIT_IUMP_Tunisia.pdf .

United Nations Conference on Trade and Development (UNCTAD) (2007), "Aftercare: A Core Function in Investment Promotion", Investment Advisory Series, Series A, number 1, New York, United Nations.

United Nations Conference on Trade and Development (UNCTAD), (2014), "Skills and foreign direct investment promotion: What Can an Investment Promotion Agency Do?".

UNCTAD, "World Investment Report", 2016.

Van Elk, Koos and Gelderblom, Arie (2005), "Lifelong Learning and employer provided training". Erasmus University Rotterdam.

WBG, "Investment Incentives Toolkit", 2015.

WBG, "Doing Business 2017", 2016.

WBG, "Paying Taxes 2017", 2016.

World Economic Forum, 2017.

World Trade Organization (WTO), "Standards and Countervailing Measures Agreement". https://www.wto.org/english/tratop_e/scm_e/subs_e.htm

Հավելված 1. Տարբեր հարկային գործիքներ. առավելություններ և թույլ կողմեր

Գործիք	Նկարագրություն
Հարկային արձակուրդ	Նոր ընկերության կամ ներդրման ժամանակավոր ազատում որոշակի հարկերից: Մովորաբար, դրանք վերաբերում են ուղղակի հարկերին, օր.՝ կորպորատիվ եկամտահարկ (ԿԵՀ)
Կոնցեսիոն համաձայնագրերով սահմանված դրույքաչափեր / արտոնյալ դրույքաչափեր	Նվազեցված դրույքաչափեր, որոնք գործում են որպես մասնակի ազատում սահմանված կորպորատիվ եկամտահարկի դրույքաչափից:
Հարկային զեղչ	Հարկային պարտավորությունից ծախսի որոշակի մասի նվազեցում:
Հարկի նվազեցում	Հարկման ենթակա շահույթից ծախսի որոշակի մասի նվազեցում (բացի ամորտիզացիոն մասնահանումների): Եթե սահմանվում է ԿԵՀ-ի միասնական դրույքաչափ բոլոր ընկերությունների համար, ապա ներդրումների մասով հարկի դրույքաչափի նվազեցումները և հարկային զեղչերը համարժեք են:
Արագացված ամորտիզացիա	Մաշվածության (ամորտիզացիայի) ավելի արագ ժամանակացույց, քան սահմանվում է տնտեսության մնացած մասի համար:
Վնասների տեղափոխում առաջիկա ժամանակաշրջանների	Թույլ են տալիս ընկերությանը կամ ֆիզիկական անձին ընթացիկ տարվա գուտ գործառնական կորուստները տեղափոխել առաջիկա տարիների շահույթներին՝ հարկը նվազեցնելու նպատակով:
Արտահանմանն ուղղված անուղղակի հարկային խթաններ	Հաճախ տրամադրվում են արտահանմանն ուղղվածություն ունեցող ոլորտներին ներմուծման մաքսատուրքից, ակցիզային հարկից և ԱԱՀ-ից ազատելու ձևով՝ արտահանվող ապրանքների արտադրության մեջ անմիջականորեն օգտագործվող հումքի/կյութերի ներմուծման համար:

Կողմ	Դեմ
Եկամտային հարկի մասով արձակուրդներ և կոնցեսիոն համաձայնագրերի ներքո սահմանված դրույքաչափեր	
«Սզղանշանային ազդեցություն» ներդրողների համար. հեշտ է հաղորդացվում / գովազդվում:	Հիմնականում օգուտ է տալիս կարճաժամկետ հեռանկարով «ազատ» ներդրումներին, կամ այն ներդրումներին, որոնք ցանկացած դեպքում շահույթաբեր կլինեն: Օգուտ չի տալիս երկարաժամկետ ներդրողներին, որոնք շահույթը գործունեության առաջին տարիներին բացասական է:
Ներդրողները գնահատում են, երբ շփումը հարկային մարմինների հետ ավելի քիչ է:	Ներդրողներին հարկային հայտարարագիր ներկայացնելու պարտավորությունից ազատելը դժվարեցնում է ծախսերի հաշվառումը և նվազեցնում է թափանցիկությունը:
	Հարկային արտոնությունը տրամադրվում է ներդրողի

	կողմից նախապես տրված խոստման հիման վրա → չկա ուղղակի կապ ցանկալի արդյունքների հետ, օր.՝ ներդրումների աճ, աշխատատեղերի ստեղծում:
	Կարող է չարաշահումների տեղիք տալ՝ ընկերության ներսում շահույթը տեղափոխելու միջոցով → ստեղծում է հարկերից խուսափելու հնարավորություններ:

Արտահանմանն ուղղված անուղղակի հարկեր (օր.՝ ԱԱՀ-ից և մաքսատուրքերից ազատում)	
Համապատասխանում են ներդրումների տեղադրությամբ պայմանավորված հարկման սկզբունքին → ազատում է արտահանվող ապրանքների արտադրության մեջ անմիջականորեն օգտագործվող հումքի/նյութերի ներմուծման անուղղակի հարկումից:	Կարող է չարաշահումների տեղիք տալ (արտահոսքի ռիսկ) → զրո տոկոս դրույքաչափով հարկող ապրանքների օգտագործման նշանակության շեղում դեպի այլ ոլորտները:
Կարող է մեծացնել ընկերության մրցունակությունը՝ հեշտացնելով ներմուծվող հումքի/նյութերի հասանելիությունը:	Խաթարում է մրցակցությունը և ստեղծում է անբարենպաստ պայմաններ տեղական մատակարարների համար:
	Չի համապատասխանում տեղական արտադրության պինդ ապրանքների համար ԱԱՀ-ի տարբեր դրույքաչափերի կիրառման մոտեցմանը:
	Չկա ուղղակի կապ ցանկալի արդյունքների հետ, օր.՝ ներդրումների մակարդակ/ծավալ, աշխատատեղեր:

Հարկային զեղչեր և նվազեցումներ ներդրումների / աշխատատեղերի ստեղծման / R&D գործունեության մասով	
Ուղղակիորեն կապվում են քաղաքականության նպատակներին → ներդրողին տրվող օգուտը հանդիսանում է նոր ներդրման /աշխատատեղերի ստեղծման /հետազոտության և մշակման գործունեության ուղղակի արդյունք:	Կառավարման առումով ավելի բարդ են:
Հարկային եկամուտներն ավելի թափանցիկ են և հեշտ վերահսկելի → չարաշահումների ռիսկերն ավելի քիչ են, մեծացնում են ֆիսկալ ծախսերի թափանցիկությունը:	Արտադրության տեխնոլոգիան շեղում են դեպի աջակցվող գործոնը (սա հակափաստարկ չէ, եթե հանդիսանում է քաղաքականության ցանկալի նպատակ):
Արագացված ամորտիզացիա	
Բարենպաստ է երկարաժամկետ կապիտալաինտենսիվ ներդրումների համար	Կառավարման առումով ավելի բարդ են:
Հարկային եկամուտներն ավելի թափանցիկ են և հեշտ վերահսկելի → չարաշահումների ռիսկերն ավելի քիչ են, բարձրացնում են ֆիսկալ ծախսերի թափանցիկությունը	Արտադրության տեխնոլոգիան շեղում են դեպի աջակցվող գործոնը (սա հակափաստարկ չէ, եթե հանդիսանում է քաղաքականության ցանկալի նպատակ)
Ֆինանսական կորուստներն ավելի քիչ են լինում, քանի որ արագացված ամորտիզացիայի ժամանակահատվածում չստացված եկամուտներն	

ի վերջո վերականգնվում են:	
Վնասների տեղափոխումը առաջիկա ժամանակաշրջանների	
Խրախուսում է ներդրումներ այն ոլորտներում, որոնք ունեն ավելի արժեք և շահույթ ստանալու ավելի երկար հեռանկար:	Կառավարման առումով ավելի բարդ են:

Հավելված 2: Հարկի գծով ծախսի, ծախսերի ու օգուտների վերլուծության օրինակ՝ ըստ ոլորտների

ԱՂՅՈՒՄԱԿ Ա. Հարկի գծով ծախս՝ ըստ տեսակի և ծրագրի (ՀՀ դրամ, եթե այլ արժույթ չի նշվում)

Տեսակ	Ծրագիր	2014/15	2015/16
Եկամուտների ազատում հարկերից	Հղում անչվող օրենքին/իրավական ակտին. փաստաթղթի վերնագիրը (օր.՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք (ՀՀՊՏ 1997.12.03/27, ՀՕ-155))		
	Այլ ընկերություն		
	Հարկերից ազատված այլ եկամուտ		
	հողված X (հղում իրավական ակտին)		
Որակավորող վճարներ			
Կոնցեսիոն համաձայնագրերի ներքո սահմանված դրույքաչափեր /արտոնյալ դրույքաչափեր	Օրինակ՝ «Շահութահարկի վճարումից ազատվում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված հարկատուները՝ իրենց կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի, ինչպես նաև հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացումից ստացված և այլ եկամուտների մասով, եթե վերջիններիս տեսակարար կշիռը համախառն եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը:» («Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, (ՀՀՊՏ 1997.12.03/27, ՀՕ-155))		
	Օր.՝ «Շահութահարկի վճարումից ազատվում են ձեռագործ գորգերի արտադրությամբ զբաղվող հարկատուները՝ իրենց կողմից ձեռագործ գորգերի իրացումից ստացված եկամտի մասով:» («Շահութահարկի մասին» ՀՀ օրենք (ՀՀՊՏ 1997.12.03/27, ՀՕ-155))		
	Այլ շահույթ և եկամուտ		
	Այլ շահույթ և եկամուտ		
	Այլ շահույթ և եկամուտ		
Այլ շահույթ և եկամուտ			

Աղյուսակ Բ. Հարկի գծով ծախսի, ծախսերի ու օգուտների վերլուծություն ըստ ոլորտների

(մլն. ՀՀ դրամ, եթե այլ արժույթ չի նշվում)

Գումարը 2014/15թթ.				Ծախս	Օգուտներ
Տեսակ	Եկամուտների ազատում հարկից	Որակավորող վճարներ	Կոնցեսիոն համաձայնագրերի ներքո սահմանված դրույքաչափեր	Այն ընկերությունների կողմից հարկի գծով կատարված ծախսի գումարներ, որոնք այլ կերպ շահութաբեր կլինեին անկախ խթաններից	Խթանների շնորհիվ շահութաբեր դարձած ընկերությունների կողմից կատարված և ստեղծված աշխատատեղեր արտահանման ծավալներ
Ոլորտ 1					
Ոլորտ 2					

Հավելված 3. Ընկերության մակարդակով հարկի գծով ծախսի և ծախսերի ու օգուտների վերլուծության օրինակ

№	Ընկերության ծածկագիրը	Արտադրված ապրանքներ, 2016թ (ՀՀ դրամ)	Արտադրված ապրանքներ, 2015 (ՀՀ դրամ)	Տարբերությունը 2015 տվյալների համեմատությամբ (տոկոս)	Հիմնադրման ամսաթիվ	ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնություններ (ՀՀ դրամ)			Աշխատողների թվաքանակ (վիճակագրական տվյալներ)		
						2014	2015	2016	2014	2015	2016
Բնագավառ/հատված/ուլորտ/ օրինակ՝ Տեքստիլ արդյունաբերություն											
1	XXXXXX										
2	XXXXXX										
3	XXXXXX										
4	XXXXXX										
5	XXXXXX										
6	XXXXXX										
ԸՆԴԱՄԵՆԸ											

Ոլորտ/Էնթալորտ/տարի	Հարկային արտոնություններ / արտադրանք (ՀՀ դրամ)		Հարկային արտոնություններ / վաճառքից ստացված հասույթներ (ՀՀ դրամ)				Հարկային արտոնություններ / աշխատատեղեր (ՀՀ դրամ/ աշխատատեղ)			
	2015	2016	2014	2015	2016	Գումարային 2014-16	2014	2015	2016	Գումարային 2014-16
<i>Արտադրություն, այդ թվում՝</i>										
տեքստիլ ապրանքներ										
ծխախոտի արտադրանք										
մեքենա-սարքավորումներ										
ոսկերչական իրեր										

Հավելված 4. Հնտությունների զարգացմանն ուղղված խթանների ընտրված դեպքերի ուսումնասիրություն Սուբսիդիաներ

Մինգապուր. Երկիրն օգտագործում է սուբսիդիաները՝ օտարերկրյա ներդրողների հետ համատեղ ուսուցողական կենտրոններ ստեղծելու նպատակով:

Մինգապուրի Տնտեսական զարգացման խորհուրդը (EDB) 1972-1975թթ. նախաձեռնեց Համատեղ պետական մասնագիտական վերապատրաստման սխեմաների (JGITS) մշակման աշխատանքները:

JGITS-ի համար որպես մոդել հանդիսացավ Գերմանիայի արհեստագործության ուսուցման համակարգը, որը նախատեսում է երկու փուլ: Առաջին փուլում տրամադրվում է երկամյա ուսուցում կենտրոնում՝ առևտրային գործունեության տեսությանը և պրակտիկային նվիրված թեմաներով, որին հաջորդում է երկամյա արտադրական պրակտիկա կենտրոնի հետ համագործակցող ձեռնարկությունում, որոնց ցանկը հաստատվում է կենտրոնի խորհրդի կողմից:

Օտարերկրյա ընկերությունների կողմից հմտությունների զարգացմանն ուղղված ներդրումները խթանելու նպատակով՝ EDB-ին հատկացրեց ուսուցողական կենտրոնների ստեղծման համար ֆինանսական միջոցներ և ենթակառուցվածքներ, իսկ ընկերությունների ներդրումը պետք է կատարվեր մասնագետների և ծրագրային ապահովման տրամադրման ձևով: Այդ խթաններին արձագանքեցին այնպիսի միջազգային ընկերություններ, ինչպիսիք են «Tata» (Հնդկաստան), «Rollei» (Գերմանիա) և «Phillips» (Նիդերլանդներ), որոնք ստեղծեցին իրենց սեփական ուսուցողական կենտրոնները: Առանձին կենտրոնի ղեկավարումն իրականացվում էր Կառավարման հանձնախմբի կողմից, որի կազմում ընդգրկվում էին ընկերության, EDB-ի և Մասնագիտական կրթության խորհրդի ներկայացուցիչները:

«Tata» ընկերության ուսուցողական կենտրոնի ստեղծման համար կառավարությունը հատկացրեց հող և շինություններ, վճարեց ուսուցողական նպատակներով անհրաժեշտ մեքենա-սարքավորումների ձեռքբերման գինը, ինչպես նաև ստանձնեց սկզբնական փուլի գործառնական ծախսերի 70%-ը ֆինանսավորելու պարտավորություն: Բացի այդ, որպես համաձայնության մաս, կենտրոնը պարտավորվեց վերապատրաստել ավելի շատ մասնակիցների, քան պահանջվում էր «Tata» խմբի ընկերությունների կողմից: «Rollei» և «Phillips» կորպորացիաների ուսուցողական կենտրոնը ևս գործում էր նույն պայմաններով: 1984 թվականին «Tata» և «Rollei» ինստիտուտներից յուրաքանչյուրի շրջանավարտների թիվը կազմեց 500, իսկ գերմանական շատ ընկերություններ առաջարկեցին իրենց մոտ կազմակերպել Rollei ինստիտուտի շրջանավարտների արտադրական պրակտիկան:

Ի լրումն այդ ընկերություններին տրամադրված առատաձեռն խթանների՝ հմտությունների զարգացմանն առջվող ներդրումների խթանման գլխավոր տարրը շրջանավարտներին աշխատանքի հրավիրելու նախապատվությունն էր, որը տրվում էր ուսուցողական ծրագրերի կազմակերպմանը մասնակցող ընկերություններին: Օրինակ՝ «Rollei» ինստիտուտի շրջանավարտների շուրջ 44%-ը հետագայում աշխատանքի ընդունվեցին «Rollei» կորպորացիայում և գերմանական այլ ընկերություններում:

Աղբյուր՝ Kuruvilla & Chua (2000)

«Թրեյնինգի վճարներ»

Մինգապուր. Թրեյնինգի վճարների լավագույն փորձ

Մինգապուրի փորձը հաճախ բերվում է որպես թրեյնինգի շուկայում միջամտություններ իրականացնելու հաջողված օրինակ:^{44 45} Մինգապուրի հմտությունների զարգացման հիմնադրամը (SDF) ստեղծվել է 1980-ականներին՝ վերապատրաստման միջոցով ավելի ցածր որակավորում ունեցող աշխատուժի հմտությունների զարգացումը խթանելու նպատակով: SDF-ը կարևոր դեր

⁴⁴ Smith & Billett (2006).

⁴⁵ Martinez-Fernandez and Powell, Marcus (2009).

խաղաց 1980-ականներին Մինգապուրի կառավարության ծրագրի իրականացման գործում, որն ուղղված էր բարձր որակավորում պահանջող արտադրության ոլորտների խթանմանը: Հիմնադրամն օգնեց նաև նոր տնտեսության համար հմուտ աշխատուժի առաջարկ ապահովելու կառավարության հետագա ջանքերին: SDF-ի գործունեությունը ֆինանսավորվում էր սինգապուրյան ձեռնարկություններում աշխատող բոլոր աշխատողների (բացառությամբ միգրանտ աշխատողների) աշխատավարձի 1 տոկոսը գանձելու միջոցով:

Մինգապուրը շարունակում է կիրառել թրեյնինգի վճարների համակարգը: Գործող «Հմտությունների զարգացման վճարներ մասին» (SDL) օրենքով պահանջվում է, որ գործատուները կատարեն ամսական վճարումներ Մինգապուրում ծառայություններ մատուցող իրենց բոլոր աշխատողների համար (ներառյալ օտարերկրյա, կես դրույթով, գործարքային կամ սեզոնային աշխատողներ)՝ բացառությամբ տնային աշխատողներից, օրինակ՝ տան սպասավոր, այգեպան և վարորդ: Յուրաքանչյուր աշխատողի համար գործատուն ամսական վճարում է տվյալ աշխատողի աշխատավարձի գումարի 0.25%-ը, որը սակայն չպետք է լինի պակաս, քան \$2 (ամսական \$800 դոլարից պակաս աշխատավարձ ստացող աշխատողի համար), և ոչ ավելի քան \$11.25 (ամսական \$4,500 դոլարից ավելի աշխատավարձ ստացող աշխատողի համար):

SDF-ը շարունակում է աջակցել աշխատուժի հմտությունների արդիականացման ծրագրերին, ինչպես նաև տրամադրում է թրեյնինգի դրամաշնորհներ այն գործատուներին, որոնք իրենց աշխատողներին ուղղարկում են մասնակցելու Շարունակական կրթության և թրեյնինգի ազգային համակարգի շրջանակներում կազմակերպվող դասընթացներին: Գործատուների համար SDF-ի դրամաշնորհային միջոցները հասանելի են միայն այն դեպքում, երբ ավելի ցածր հմտություններ ունեցող աշխատողները մասնակցում են կառավարության կողմից հաստատված ուսուցողական ծրագրերին, օրինակ՝ «Հմտությունների թրեյնինգի հիմնական ծրագիր» (BEST) և «Հմտությունների մոդուլյար թրեյնինգի նախաձեռնություն» (MOST):

Դրամաշնորհներ ստանալու համար ընկերությունները պետք է բավարարեն իրավասության հետևյալ չափիշները.

- i. Ընկերությունը պետք է գրանցված լինի Մինգապուրում կամ ունենա երկրում գրանցված մասնաճյուղ.
- ii. Թրեյնինգի մասնակիցները պետք է լինեն ընկերության աշխատողները և գործատուն պետք է վճարի նրանց մասնակցության բոլոր ծախսերը (օր.՝ դասընթացների վճարներ).
- iii. Թրեյնինգի մասնակիցը պետք է լինի Մինգապուրի քաղաղաքացի (քաղաքացիության կարգավիճակ) կամ ունենա մշտական կացության թույլտվություն (ռեզիդենտի կարգավիճակ), և աշխատի ընկերությունում Աշխատանքային օրենսգրքի համաձայն՝ բացառությամբ անհատ ձեռնարկատերերի, գործընկերների, աշխատող տնօրենների, կոոպերատիվների անդամների և միջնորդավճարով աշխատող գործակալների.
- iv. Մասնակիցը պետք է ապահովի դասընթացի մասնակցության առնվազն 75%, ինչպես նաև ներկայանա բոլոր քննություններին, եթե դասընթացի ավարտին տրվում է հավաստագիր:

SDF-ը և վճարների գանձման համակարգը կառավարվում է Մինգապուրի աշխատուժի զարգացման գործակալությունը (WDA), որն աջակցում է նաև ընկերությունների աշխատուժի և հմտությունների արդյունավետ զարգացման ջանքերին: Օրինակ՝ գործատուները կարող են տեղեկատվություն և խորհրդատվություն ստանալ WDA-ից թրեյնինգի և հմտությունների զարգացման կարիքների պլանավորման հարցերի շուրջ:

Թիրախավորված մոտեցման շնորհիվ SDF-ը հաջողություններ է արձանագրել Մինգապուրում, խրախուսել է տնտեսության մեջ գերիշխող դիրք գրավող բազմազգ կորպորացիաներին վերապատրաստել իրենց աշխատողներին՝ ավելի բարձր որակավորում պահանջող աշխատատեղեր զբաղեցնելու համար, ինչպես նաև նպաստել է երկրի առաջընթացին դեպի բարձր արժեք ստեղծող տնտեսությունը: SDF-ի լավ աշխատանքը պայմանավորվում է այն հանգամանքով, որ կառույցը ներառվում է ազգային ծրագրի շրջանակներում, որի նպատակն է խթանել տնտեսության անցումը դեպի բարձր որակավորում պահանջող արտադրության ոլորտները: Սակայն, SDF-ի հաջողությունը պետք է դիտարկվի Մինգապուրի խիստ կենտրոնացված տնտեսության և քաղաքական կառույցների համատեքստում: Համընդհանուր թրեյնինգ ծրագրերը հակում ունեն «աշխատելու» միայն խիստ առանձնահատուկ իրավիճակներում: Ապացույցները ցույց են տալիս, որ «վճարների գանձման» նման ծրագրերը դժվար է փոխպատվաստել այլ երկրներում: Թրեյնի

Աղբյուր՝ S2Q4 (2009)

Որակավորված օտարերկրյա աշխատողների շրջանակ

Իշխանությունները կարող են խրախուսել ընկերությունների կողմից վերապատրաստմանն ուղղվող ներդրումների աճը՝ ստեղծելով բարենպաստ միջավայր բարձր որակավորում ունեցող օտարերկրացի մասնագետների գրավման կամ սփյուռքում բնակվող բարձր հմտություններ ունեցող իրենց քաղաքացիների հայրենադարձությունը խթանելու միջոցով: Օտարերկրյա մասնագետների դեպքում բարենպաստ միջավայրը նախատեսում է⁴⁶

- հստակ, արդար, արագ և թափանցիկ կիրառվող երկիր մուտք գործելու ընթացակարգեր՝ ներառյալ ժամանակավոր աշխատանքի թույլտվություն ստանալու դիմումն առցանց ներկայացնելու կամ դրա ընթացքին արագ հետևելու (fast-tracking) հնարավորություն,
- մշտական կացության/քաղաքացիության կարգավիճակ ստանալու ողջամիտ ուղի,
- օտարերկրյա հավատարմագրերի ճանաչում,
- հնարավորությունների ստեղծում ընտանիքի անդամների համար՝ կարճ ժամկետում օտարերկրացի աշխատողի ամուսնու/կնոջ աշխատանքի թույլտվության տրամադրում:

Սփյուռքի հմուտ աշխատուժի հայրենադարձությունը խթանելու համար կարևոր է, որ կառավարությունը մշակի հստակ ծրագիր, որը համապատասխանում է նաև հմտությունների մասով գործատուների կարիքներին: Ստորև ներկայացվում է Լիտվայի և Մալազիայի փորձը, որոնք հաջողությամբ ստեղծել են նման ծրագրեր:

⁴⁶ Del Carpio et. al. (2015)

Լիտվա. հաջողությամբ խթանել է գիտության, տեխնոլոգիաների, ճարտարագիտության և մաթեմատիկայի (STEM/ԳՏ&Մ) ոլորտներում բարձր որակավորում ունեցող իր հայրենակիցների վերադարձը

1990-ականներին Լիտվան, ինչպես և նախկին Խորհրդային Միության այլ պետությունները, բավականին ցավոտ անցում էր կատարում դեպի շուկայական տնտեսություն, որի հետևանքներից մեկը «ուղեղների արտահոսքն» էր: Երկրի զարգացման ռազմավարությունը նախատեսում էր գիտելիքահեն տնտեսության խթանում, որի համար պահանջվում էր գիտության, տեխնոլոգիաների, ճարտարագիտության և մաթեմատիկայի (STEM/ԳՏ&Մ) ոլորտներում բարձր որակավորում ունեցող աշխատուժ: Գիտելիքահեն տնտեսության մեջ ներդրումներ կատարելու համար միջազգային ընկերություններին ներգրավելու նպատակով՝ մշակվեց «Ստեղծիր Լիտվայի համար» ծրագիրը, որը գլխավորապես ուղղված էր խրախուսելու ԳՏ&Մ ոլորտներում բարձր որակավորում ունեցող սփյուռքի հայրենակիցների վերադարձը Լիտվա: Ծրագրով նախատեսվում էր 4-ամսյա ռոտացիա մի շարք պետական հաստատություններում (ներառյալ վարչապետի աշխատակազմ, նախարարություններ, խորհրդարան և այլ պետական գործակալություններ)՝ կենտրոնանալով ներդրումային միջավայրի բարելավման վրա: Ռոտացիան մասնակիցներին ընձեռեց օգտակար կապեր ստեղծելու հնարավորություն՝ այդ կերպ դառնալով կարևոր մարդկային կապիտալ ոչ միայն կառավարության, այլև Լիտվայում ներդրումներ կատարելու մեջ հետաքրքրված միջազգային ընկերությունների համար: Առ այսօր, մասնակիցների շուրջ 70 տոկոսը ծրագրի ավարտից հետո մնացել է Լիտվայում:

Աղբյուր՝ UNCTAD (2014)

Մալազիա. խթանման արդյունավետ ծրագրեր, որոնք նպատակաուղղված են խրախուսելու բարձր որակավորում ունեցող սփյուռքի հայրենակիցների վերադարձը և հմուտ օտարերկրյա աշխատուժի պահումը երկրում:

2011 թվականին Մալազիայի կառավարությունը մեկնարկեց երկու կարևոր ծրագրեր, որոնց նպատակն էր մեծացնել բարձր որակավորում ունեցող աշխատուժի առաջարկը և այդ կերպ դառնալ բարձր եկամուտ ունեցող երկիր մինչև 2020 թվականը: Այդ նպատակով մշակվեցին «Փորձագետների վերադարձ» (REP: Returning Expert Programme) և «Կացության թույլտվություն –Talent» (RP-T: Residence Pass-Talent) ծրագրերը:

«Փորձագետների վերադարձ» ծրագիր (REP)

REP ծրագրի թիրախում է ՏՀԶԿ անդամ երկրներում բնակվող 300,000 մալազիացիների այն հատվածը, որն ունի հմտություններ և հետաքրքրված է հայրենիք վերադառնալու և աշխատելու հնարավորություններով: Ծրագրով առաջարկվում են 4 հիմնական խթաններ, որոնց գրավչությունը կախված է դիմորդի հանգամանքներից.

- Ընտրանքային. աշխատավարձի մասով եկամտային հարկի 15% դրույքաչափի կիրառում (ստանդարտ պրոգրեսիվ դրույքաչափի փոխարեն)՝ Մալազիայում աշխատելու առաջին 5 տարիներին: Այս խթանը հատկապես գրավիչ է երկիր վերադարձող այն մալազիացիների համար, որոնց տարեկան եկամուտն ավելի է, քան RM 135,000 (\$45,000):
- Ներմուծվող բոլոր տեսակի անձնական գույքի ազատում մաքսատուրքից: Խթանը գրավիչ է ոչ այնքան գումարային օգուտների, որքան բյուրոկրատական ընթացակարգերի կրճատման

տեսանկյունից:

- Մալազիայում հավաքված երկու ավտոմեքենաների ձեռքբերման համար հարկից ազատում, որը կարևոր խթան է, քանի որ տեղում հավաքված ավտոմեքենաների մեծ մասի համար կիրառվում է ակցիզային հարկի 100% դրույքաչափ:
- Օտարերկրյա քաղաքացի հանդիսացող աշխատողի ընտանիքի անդամներին (կին, ամուսին, երեխաներ) մշտական կացության կարգավիճակի տրամադրում 6 ամսվա ընթացքում, որը շատ արժեքավոր խթան է, քանի որ Մալազիայի քաղաքացիությունը ձեռք է բերվում միայն ծննդով, իսկ մշտական կացության կարգավիճակը շնորհվում է միայն խիստ բարձր որակավորում ունեցող անձանց:

Այն անձանց, որոնց դիմումները բավարարվել են, տրվում է երկու տարի ժամանակ Մալազիայում աշխատանք գտնելու համար: Աշխատանք գտնելու դեպքում, նրանք պետք է այդ մասին տեղեկացնեն «TalentCorp» կորպորացիային, իսկ այնուհետև օգտվեն իրենց տրամադրված խթաններից: 2011-2012թթ REP ծրագրից օգտվելու իրավասության չափանիշները խստացվեցին, մասնավորապես՝

- քաղաքացիության մասով՝ Մալազիայի քաղաքացի, որն առնվազն երեք տարի բնակվել և աշխատել է արտասահմանում.
- աշխատանքի մասով՝ ստացել է աշխատավարձի ձևով եկամուտ Մալազիայի սահմաններից դուրս բնակվելու վերջին երեք տարիներին.
- չմարված պարտավորությունների մասով՝ չունի չմարված պարտավորություններ կրթաթոշակի և պետությունից ստացված այլ վարկի մասով:

2011-2013թթ. «TalentCorp»-ն ուսումնասիրեց շուրջ 4 000 անհատներից ներկայացված դիմումներ: Համաշխարհային բանկը բարձր է գնահատել REP ծրագիրը և դրա զուտ ներդրումը երկրի բյուջեում.

- Դիմում ներկայացրած անձանց հայրենադարձության ցուցանիշը կազմել է 72 տոկոս, որտեղ մեծ մասնաբաժին են կազմում այն անձինք, որոնք աշխատանք են գտել Մալազիայում նախքան ծրագրին դիմելը:
- Ծրագրի ծախսերի և օգուտների վերլուծությունը ցույց է տվել, որ զուտ ֆիսկալ օգուտները կազմել են RM 27,000 (\$ 9,000) մեկ դիմորդի համար, որը նշանակում է, որ ծրագիրն ամբողջությամբ փակել է իր ծախսերը:
- Ծրագիրն ունեցել է նաև հստակ արտաքին արդյունքներ, օր.՝ արտադրողականության աճ, գիտելիքների փոխանցում տեղական աշխատուժին, որի մասով սակայն հնարավոր չէր կատարել քանակական հաշվարկ:

Կացության կարգավիճակ - Talent (RP-T)

RP-T ծրագիրը նախատեսում է խթանել օտարերկրացի բարձրակարգ մասնագետների բնակությունը Մալազիայում՝ առաջարկելով մի շարք խթաններ.

- տաս տարի ժամկետով կացության և աշխատանքի թույլտվություն,
- գործատուներին փոխելու ճկունություն,
- Մալազիայում աշխատելու հնարավորություն օտարերկրացի մասնագետի ամուսնու/կնոջ համար (եթե անգամ նրանք բարձրակարգ մասնագետ չեն),
- Մալազիայում սովորելու իրավասություն անչափահաս երեխաների համար,

- Տաս տարի ժամկետով կացության թույլտվություն խնամարկյալների համար (երեխաներ և ամուսնու/կնոջ հարազատներ):

Սահմանվում են իրավասության շատ խիստ չափանիշներ, որոնց համաձայն, դիմորդը՝

- համարվում է իր ոլորտի փորձագետ,
- ունի բարձրագույն կրթության / գիտական աստիճան (դոկտորի, մագիստրոսի կոչում կամ բարձրագույն կրթության դիպլոմ, որը տրվել է ճանաչված համալսարանի կամ մասնագիտական ինստիտուտի կողմից),
- ունի եկեք տարվա աշխատանքային փորձ Մալազիայում և առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային փորձ,
- ունի Մալազիայում օրինական բնակության թույլտվություն՝ աշխատանքի թույլտվության հիմքով,
- ունի RM 144,000 նվազագույն տարեկան եկամուտ,
- առնվազն երկու տարի վճարել է հարկեր Մալազիայում:

Համաշխարհային բանկի կողմից RP-T ծրագրի գնահատման արդյունքները ցույց տվեցին, որ այն հաջողության է հասել տարբեր երկրներից իսկապես շնորհալի մասնագետների ներգրավման առումով: Այդ մասնագետներն օգնել են լրացնել հմտությունների պակասը հետևյալ ոլորտներում՝ նավթ, գազ և էներգետիկ արդյունաբերություն, բիզնես ծառայություններ և արտադրություն: Մրա ապացույցը ծրագրի դիմողների բարձր հավելավճարներն են: Միջինում օտարերկրացի աշխատողները վաստակում են 4 անգամ ավելի շատ, քան համեմատելի աշխատանք կատարող տեղացի մասնագետները: Այս հավելավճարի մի մասը վերագրվում է այն հանգամանքին, որ օտարերկրացի մասնագետներն ունեն աշխատանքային փորձ աշխատանքի միջազգային շուկաներում, որոնք ընձեռում են նոր տեխնոլոգիաների և «նոր-հատու» գիտելիքների ավելի մեծ հնարավորություններ: Ուստի ենթադրվում է, որ նրանք ավելի մեծ ներդրում կկատարեն ընկերության շահութաբեր գործունեության մեջ, քան տեղացի մասնագետները:

Չնայած «TalentCorp»-ի կողմից կառավարվող այս երկու ծրագրերը համարվում են հաջողված ինչպես բարձր որակավորում ունեցող մասնագետներ ներգրավելու, այնպես էլ նրանց կողմից տեղի աշխատուժի հմտությունների պակասը լրացնելու առումներով, այդուհանդերձ, բարելավման կարիք կա հետևյալ ոլորտներում.

- Ստեղծել արդյունավետ և ճիշտ թիրախավորված հաղորդակցության ուղի՝ Մալազիայի կողմից առաջարկվող աշխատանքային հնարավորությունների մասին բարձրակարգ միջազգային մասնագետներին իրազեկելու համար (օրինակ՝ աշխատանքի պորտալներ, աշխատանքի տոնավաճառներ արտասահմանում և այլն).
- Ստեղծել հմտությունների պակասի բացահայտման և մոնիթորինգի ընդհանուր հարթակ՝ կիրառելով Ավստրալիայի և Անգլիայի փորձը, որը նախատեսում է հիմնական շահագրգիռ կողմերի ներգրավումն այդ գործընթացներում (օրինակ՝ խոշոր գործատուներ, ՓՄՁ-ներ և այլն):

Աղբյուր՝ Del Carpio et. al. (2015)

Հավելված 5. Արևմտյան Բալկանների տարածաշրջանային խթանների տվյալների բազա

Ալբանիա

ՖԻՍԿԱԼ ԽԹԱՆՆԵՐ									
Խթանի անվանում և տեսակ	Ամփոփ նկարագրություն	Կիրառելի հարկ	Խթանի ձև	Կատեգորիա ֆիսկալ /ոչ ֆիսկալ (Ֆ/Ո)	Տեսուչության/աշխատի մակարդակով (Տ/Ո)	Ուղրտ	Ազգային/ենթազգային մակարդակով (Ա/Ե)	ՀՏԳ-ին հատուկ (Այո/ Ոչ)	Նպատակ(ներ)
ԿԵՀ-ի նվազեցում ԱՏԳ-ներում	Կորպորատիվ եկամտահարկը նվազեցվում է 50 տոկոսով ազատ տնտեսական գոտիներում գործունեություն իրականացնող ընկերությունների համար՝ գործունեության առաջին 5 տարիներին:	ԿԵՀ	Հարկի նվազեցում	Ֆ	S	-	Ա	Այո	Հարկային խթանների նպատակները՝ ներդրումների խրախուսում, նոր աշխատատեղերի ստեղծում, եկամուտների աճ, առաջադեմ տեխնոլոգիաների ներդրում և տարածաշրջանային զարգացման աճի խթանում:
Ծախսերի նվազեցում ԿԵՀ-ից	ԱՏԳ-ներում գործունեություն իրականացնող ընկերությունները կարող են ֆինանսական տարում կուտակված կապիտալ ծախսերի 20%-ը հաշվառել որպես նույն ժամանակաշրջանում կորպորատիվ եկամտահարկի մասով նվազեցվող ծախսեր՝ անկախ Եկամտային հարկի մասին օրենքով սահմանված մաշվածության դրույքաչափերից: Ընկերություններն իրավունք ունեն օգտվել այդ խթանից միայն իրենց գործունեության առաջին երեք տարիների ընթացքում, բայց ոչ ավելի, քան ընդհանուր հաշվարկով 2 տարի:	ԿԵՀ	Հարկի նվազեցում	Ֆ	S	-	Ա	Այո	Հարկային խթանների նպատակները՝ ներդրումների խրախուսում, նոր աշխատատեղերի ստեղծում, եկամուտների աճ, առաջադեմ տեխնոլոգիաների ներդրում և տարածաշրջանային զարգացման աճի խթանում:
Ալբանական արտադրության ապրանքների ազատում ԱԱՀ-ից	ԱՏԳ-ներում օգտագործվող տեղական արտադրության ապրանքների մատակարարումը համարվում է արտահանում, որի մասով կիրառվում է ԱԱՀ-ի զրո տոկոս դրույքաչափ՝ ԱԱՀ-ի և մաքսային օրենսդրության համաձայն:	ԱԱՀ	Ազատում հարկից	Ֆ	S	-	Ա	Այո	Հարկային խթանների նպատակները՝ ներդրումների խրախուսում, նոր աշխատատեղերի ստեղծում, եկամուտների աճ, առաջադեմ տեխնոլոգիաների ներդրում և տարածաշրջանային զարգացման աճի խթանում:
Ենթակառուցվածքների վրա ազդեցության հարկից ազատում	Զարգացման ծրագրերն ազատվում են Ենթակառուցվածքների վրա ազդեցության հարկից: Հարկի այս տեսակը կիրառվում է նոր ներդրումների մասով, հետևյալ դրույքաչափերով՝ Տիրանայում կատարված ներդրումների արժեքի 2-4%, և երկրի այլ շրջաններում կատարված ներդրումների արժեքի 1-3%:	Ենթակառուցվածքների հարկ	Ազատում հարկից	Ֆ	S	-	Ա	Այո	Հարկային խթանների նպատակները՝ ներդրումների խրախուսում, նոր աշխատատեղերի ստեղծում, եկամուտների աճ, առաջադեմ տեխնոլոգիաների ներդրում և տարածաշրջանային զարգացման աճի խթանում:

Գույքահարկից ազատում	Զարգացման ծրագրերի շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքներն ազատվում են գույքահարկից առաջին 5 տարիների համար:	Գույքահարկ	Ազատում հարկից	Ֆ	S	-	Ա	Այո	Հարկային խթանների նպատակները՝ ներդրումների խրախուսում, նոր աշխատատեղերի ստեղծում, եկամուտների աճ, առաջադեմ տեխնոլոգիաների ներդրում և տարածաշրջանային զարգացման աճի խթանում:
Կապիտալի հավելաճի հարկից (ԿՀՀ) ազատում	ԱԳՏ-ների կազմակերպիչները և շահագործողներն ազատվում են կապիտալի հավելաճի հարկից, որի գործող դրույքաչափը կազմում է 15%:	ԿՀՀ	Ազատում հարկից	Ֆ	S	-	Ա	Այո	Հարկային խթանների նպատակները՝ ներդրումների խրախուսում, նոր աշխատատեղերի ստեղծում, եկամուտների աճ, առաջադեմ տեխնոլոգիաների ներդրում և տարածաշրջանային զարգացման աճի խթանում:
ԿԵՀ-ի որոշման նպատակով աշխատավարձի և ապահովագրական վճարների մասով ծախսերի նվազեցում	Գործունեության առաջին տարվա համար կորպորատիվ եկամուտները հաշվարկելու նպատակով աշխատավարձի և ապահովագրավճարների մասով ծախսերը ճանաչվում են որպես նվազեցվող ծախսեր՝ դրանց արժեքի 150 տոկոսի չափով: Հաջորդ տարիների ԿԵՀ-ի որոշման նպատակով որպես նվազեցվող ծախսեր են ճանաչվում միայն աշխատավարձի և ապահովագրավճարների մասով լրացուցիչ ծախսերը՝ նախորդ տարվա համեմատությամբ, դրանց արժեքի 150 տոկոսի չափով:	ԿԵՀ	Հարկի նվազեցում	Ֆ	S	-	Ա	Այո	Հարկային խթանների նպատակները՝ ներդրումների խրախուսում, նոր աշխատատեղերի ստեղծում, եկամուտների աճ, առաջադեմ տեխնոլոգիաների ներդրում և տարածաշրջանային զարգացման աճի խթանում:
ԿԵՀ-ի որոշման նպատակով վերապատրաստման (թրեյնինգ) ծախսերի ճանաչում որպես նվազեցվող ծախսեր	Գործունեության առաջին 10 տարիների համար կորպորատիվ եկամուտները հաշվարկելու նպատակով աշխատողների վերապատրաստման ծախսերը ճանաչվում են որպես նվազեցվող ծախսեր՝ դրանց արժեքի 200 տոկոսի չափով:	ԿԵՀ	Հարկի նվազեցում	Ֆ	S	-	Ա	Այո	Հարկային խթանների նպատակները՝ ներդրումների խրախուսում, նոր աշխատատեղերի ստեղծում, եկամուտների աճ, առաջադեմ տեխնոլոգիաների ներդրում և տարածաշրջանային զարգացման աճի խթանում:
ԿԵՀ-ի որոշման նպատակով R&D ծախսերի ճանաչում որպես նվազեցվող ծախսեր	ԿԵՀ-ի որոշման նպատակով R&D (հետազոտություն և մշակում) ծախսերը ճանաչվում են դրանց արժեքի 200 տոկոսի չափով:	ԿԵՀ	Հարկի նվազեցում	Ֆ	S	-	Ա	Ոչ	Հարկային խթանների նպատակները՝ ներդրումների խրախուսում, նոր աշխատատեղերի ստեղծում, եկամուտների աճ, առաջադեմ տեխնոլոգիաների ներդրում և տարածաշրջանային զարգացման աճի խթանում:
Ներդրումային ապրանքների ազատում ԱԱՀ-ից	ԱԱՀ-ից ազատվում են 360,000€ եվրոյից ավելի արժեք ունեցող մեքենաները/տեխնոլոգիական սարքավորումները, որոնք օգտագործվում են արտադրողականության աճն ապահովելու համար:	ԱԱՀ	Ազատում հարկից	Ֆ	S	-	Ա	Ոչ	ALTAX, «Ալբանիայի հարկային համակարգը և ներդրումային միջավայրը, 2016», էջ 30 – 44. Տնտեսական զարգացման, առևտրի և ձեռնարկատիրության նախարարություն, «Albania Calls», 2015, էջ 16
Ալբանական արտադրության ապրանքների արտահանման ազատում ԱԱՀ-ից	Վերաբերում է արտահանման նպատակով արտադրվող տեղական ապրանքների արտահանմանը երկրի մաքսային տարածքից դուրս, որի	ԱԱՀ	Ազատում հարկից	Ֆ	S	-	Ա	Ոչ	

	դեպքում կիրառվում է ԱԱՀ-ի գրո դրույթաչափ: Արտահանողները կարող են օգտվել ԱԱՀ-ի գեղչից արտահանման նպատակով գնված ապրանքների մասով:									
Արտադրությունում օգտագործվող մեքենաների և սարքավորումների ագատվում են ԱԱՀ-ից	Արտադրության նպատակների համար նախատեսված մեքենաները և սարքավորումները ագատվում են ԱԱՀ- ից:	ԱԱՀ	Ագատ ում հարկից	Ֆ	S	Արտադ րությու ն	Ա	Ոչ		
Ագատում ուց.ապահովագրության հակերից	Գործատուն ագատվում է սոցիալական ապահովության պարտադիր վճարներ վճարելու պարտավորությունից՝ նոր ստեղծված բոլոր աշխատատեղերի մասով, 1 տարի ժամկետով:	Սոց.ա պահով ագրութ յան հարկ	Ագատ ում հարկից	Ֆ	S	Արտադ րությու ն	Ա	Ոչ		
Տեքստիլ ապրանքների արտադրության ագատվում ԱԱՀ-ից	Տեքստիլ ապրանքներ և կոշիկեղ արտադրող ձեռնարկությունները ագատվում են հումքի, տեխնոլոգիական մեքենաների և սարքավորումների 20 տոկոս ԱԱՀ-ից (եթե դրանք օգտագործվում են արտահանման համար նախատեսված ապրանքների արտադրության մեջ)	ԱԱՀ	Ագատ ում հարկից	Ֆ	S	Տեքստի լ ապրան քներ և կոշիկեղ են	Ա	Ոչ		
ԿԵՀ-ի նվազեցում աձխաջրածնի համար	Նավթի և գազի արդյունահանման ուլորտում գործունեություն իրականացնող ընկերությունները վճարում են շահութահարկ 50 տոկոս դրույթաչափով (ի տարբերություն բոլոր այլ տնտեսվարող հարկատուների նկատմամբ կիրառվող ԿԵՀ-ի հաստատագրված 15 տոկոս դրույթաչափի)՝ բոլոր կապիտալ, գործառնական և վարչական ծախսերը հանելուց հետո, համաձայն կառավարության հետ կնքված «Նավթի համատեղ օգտագործման մասին» համապատասխան համաձայնագրի (որը կնքվում է յուրաքանչյուր ընկերության հետ առանձին):	ԿԵՀ	Հարկի նվազեց ում	Ֆ	S	Աձխաջ րածին	Ա	Ոչ		
Աձխաջրածինների ագատում ԱԱՀ-ից	Նավթի արդյունահանման հետախուզական/հետազոտական փուլի աշխատանքներին (որոնք իրականացվում են կապալառուների կողմից) վերաբերող ապրանքների և ծառայությունների ներմուծումը ագատվում է ԱԱՀ-ից:	ԱԱՀ	Ագատ ում հարկից	Ֆ	S	Աձխաջ րածին	Ա	Ոչ		
Էներգիայի արտադրության ագատում ԱԱՀ-ից	ՀԵԿ-ների կառուցման համար անհրաժեշտ ցեմենտի և երկաթի ներմուծումն ագատվում է ԱԱՀ-ից:	ԱԱՀ	Ագատ ում հարկից	Ֆ	S	Էներգի այի արտ.	Ա	Ոչ		
Ֆիլմարտադրության գործունեության ագատում ԿԵՀ-ից	Ազգային կինեմատոգրաֆիական կենտրոնի կողմից լիցենզավորված և ֆինանսավորվող ֆիլմարտադրության	ԿԵՀ	Ագատ ում հարկից	Ֆ	S	Ֆիլմար տադրո ւթյուն	Ա	Ոչ		

	ստուդիաները և կինեմատոգրաֆիական արտադրանքն ազատվում են կորպորատիվ եկամտահարկ վճարելու պարտավորությունից:								
ԿԵՀ-ի որոշման նպատակով կորուստների տեղափոխումը առաջիկա ժամանակաշրջանների	Ֆինանսական վնասները կարող են տեղափոխվել առաջիկա ժամանակաշրջանների հաջորդական երեք տարիների համար (առաջին վնասներն օգտագործվում են առաջինը): Սակայն, դրանք չեն կարող տեղափոխվել առաջիկա ժամանակաշրջանների, եթե հարկային տարվա ընթացքում հարկ վճարողի բաժնետիրական կապիտալում ուղղակի կամ անուղղակի մասնակցության կամ ձայնի իրավունք սվող բաժնետոմսերի սեփականության ավելի քան 50 տոկոսը փոխանցվում (փոխակերպվում) է:	ԿԵՀ	Հարկի նվազեցում	Ֆ	S	-	Ա	Ոչ	
Ներդրողների շահաբաժինների ազատում հարկից	Ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ ընկերության կողմից ռեզիդենտ հարկ վճարողին վճարված շահաբաժինները և շահույթի կիսման գումարները ենթակա չեն հարկման ԿԵՀ-ով: Սա կիրառվում է անկախ բաժնետիրական կապիտալում մասնակցության չափից, ձայնի իրավունք սվող բաժնետոմսերի քանակից կամ գումարից, կամ շահառուի հիմնադիր կապիտալում մասնակցությունից:	ԿԵՀ	Հարկի նվազեցում	Ֆ	S	-	Ա	Ոչ	
Օտարերկրյա հարկային զեղչեր	Ալբանիան կիրառում է օտարերկրյա հարկային զեղչերից օգտվելու իրավունքներն անգամ այն դեպքում, երբ չի կնքվել կրկնակի հարկումը բացառելու մասին համաձայնագիր այն երկրի հետ, որտեղ վճարվում է հարկը: Նման պայմանագրի առկայության դեպքում կրկնակի հարկումը բացառվում է կամ հարկից ազատելու կամ ԿԵՀ-ի գործող դրույթաչափի (15 տոկոս) չափով հարկային զեղչ տրամադրելու միջոցով:	ԿԵՀ	Հարկի նվազեցում	Ֆ	S	-	Ա	Ոչ	
Վառելիքի մասով ԱԱՀ-ի կրեդիտագրում	Այն հարկատուները, որոնց գործունեության հիմնական ուղղությունը աղյուսների ու սալիկների արտադրությունն է և տեխնոլոգիական միջոցներով ապրանքների փոխադրումը, կարող են վառելիքի գնման մասով կրեդիտագրել ԱԱՀ-ի գումարը, եթե այն ամբողջությամբ և բացառապես օգտագործվում է իրենց բիզնես գործունեությունն իրականացնելու համար՝ հարկատուի տարեկան	ԱԱՀ	Հարկի նվազեցում	Ֆ	S	Աղյուսներ և սալիկներ	Ա	Ոչ	

	ընդհանուր շրջանառության սահմանված տոկոսի չափով:								
Տաք ջրի արտադրության համար կիրառվող արեգակնային մարտկոցների համակարգերի ազատում ԱԱՀ-ից	Վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործումը խրախուսելու նպատակով՝ Օրենքն ազատում է մաքսատուրքերից և ԱԱՀ գումարների վճարման պարտավորությունից ցանկացած այն ածին, ով արտադրում կամ տեղադրում է արեգակնային մարտկոցների համակարգեր: Ցանկացած անձ, ով շենքերի կամ տեխնոլոգիական գործընթացների համար արտադրում կամ տեղադրում է այդպիսի համակարգեր, պետք է փոխհատուցվի դրանց արտադրության կամ շինման առաջին համար ներմուծված նյութերի մասով վճարած մաքսատուրքերի գումարները: Վճարված գումարների վերադարձումը կատարվում է օրենքով սահմանված որոշակի պայմանների կատարման դեպքում՝ ներկայացնելով արեգակնային մարտկոցների համակարգերի արտադրության կամ շինման առաջին համար ներմուծված աշխատանքների հաշիվ-ապրանքագրեր:	ԱԱՀ	Ազատում հարկից	Ֆ	S	Ջրի արևային տաքացուցիչներ	Ա	Ոչ	
ՈՉ ՖԻՍԿԱԼ ԽԹԱՆՆԵՐ									
Խթանի անվանում և տեսակ	Ամփոփ նկարագրություն	Խթանի կիրառման ձև	Կատեգորիա ֆիսկալ / ոչ ֆիսկալ (Ֆ/Ո)	Տեսուչության/շրջանի մակարդակով (Ք/Տ)	Ոլորտ	Ազգային / Ենթազգային մակարդակով (Ա/Ե)	ՀՏԳ – ին հատուկ (Այո/Ոչ)	Նպատակ(ներ)	
Հանրօգուտ նպատակներով հանրային գույքի վարձակալություն	Կառավարությունը կարող է վարձակալության հանձնել 500 քառ. մետրից ավելի տարածքով հանրային գույք կամ տալ իր համաձայնությունը հանրային գույքի վարձակալության դիմաց 1 եվրո խորհրդանշական վարձակալության վճար սահմանելու համաձայնագրին, եթե այն օգտագործվում է արտադրության կազմակերպման նպատակով, որի համար պահանջվում է 10 մլն եվրոյից ավելի ներդրում: Կառավարությունը կարող է նաև վարձակալության հանձնել հանրային գույքը կամ տալ իր համաձայնությունը հանրային գույքի վարձակալության դիմաց 1 եվրո խորհրդանշական վարձակալության վճար սահմանելու համաձայնագրին, եթե այն օգտագործվում է 2 մլն	Նվազեցված վարձակալության	Ո	S	Արտադրություն	Ա	Ոչ		

	Եվրոյից ավելի ներդրում պահանջող այնպիսի գործունեություն կազմակերպելու համար, որը նպատակաուղղվում է որոշակի ոլորտում սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, ինչպես նաև գործունեություն, որն առնչվում է սպորտի, մշակույթի, զբոսաշրջության խթանմանը և մշակութային ժառանգության պահպանմանը: Այդ ծրագրերից յուրաքանչյուրի չափանիշները և պայմանները սահմանվում են Նախարարների խորհրդի կողմից:							
Պետության կողմից աշխատավարձի 100% սուբսիդավորում	Պետությունը վճարում է նոր աշխատողների 4 ամսվա աշխատավարձը, ինչպես նաև առաջարկում է տարբեր ֆինանսական խթաններ վերապատրաստման համար:	Դրամա շնորհ	Ռ	S	Արտադրություն	Ա	Ոչ	
Հանրագուտ նպատակներով հանրային գույքի վարձակալություն	Հանօգուտ նպատակներով պետական գույքը վարձակալելու համար կառավարությունը սահմանում է 1 եվրո խորհրդանշական վարձակալության վճար:	Նվազեցված վարձակալության վճար	Ռ	S	Տեքստիլ և սպրանքներ և կոշիկեր	Ա	Ոչ	
R&D դրամաշնորհներ	Հետազոտությունների, տեխնոլոգիաների և ինովացիայի գործակալությունը (ARTI) իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հանրային մարմին է, որի առաքելությունն է գնահատել, ֆինանսավորել, մշտադիտարկել և ղեկավարել գիտության, տեխնոլոգիաների և ինովացիոն ոլորտների պետական ծրագրի շրջանակներում իրականացվող ծրագրերը: ARTI –ին (http://www.akti.gov.al/) ֆինանսավորում է ՓՄՁ-ներին նպատակաուղղված ծրագրեր, ինչպես նաև նրանց տեխնոլոգիաների արդիականացման ու նոր տեխնոլոգիաների ներդրման նախաձեռնություններ: Գործակալության գործունեությունը ֆինանսավորվում է պետական բյուջեից. միջոցներ են հատկացվում նաև անհատների ու մասնավոր հատվածի կողմից, ինչպես նաև ԵՄ ծրագրերի, որոշ երկրների ու գործընկերներ կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում: R&D ծրագրեր իրականացնելու համար կարող են դիմել ինչպես տեղական, այնպես էլ Ալբանիայում գործող միջազգային ընկերությունները:	Դրամա շնորհ	Ռ	S	-	Ա	Ոչ	

<p>Երաշխավորված գնման սակագին վերականգնվող էներգիայի արտադրության համար</p>	<p>Նախարարների խորհուրդը՝ կարգավորող մարմնի ներկայացմամբ, հաստատում է էլեկտրաէներգիայի սակագնի հաշվարման մեթոդաբանություն, որի հիման վրա սահմանվում է էլեկտրաէներգիայի հաստատագրված սակագին (FIT: feed-in tariff): Օրենքը սահմանում է, որ էլեկտրաէներգիայի «...մեծածախ հանրային մատակարարը (WPS) պետք է գնի արտոնությունից օգտվող արտադրողի կողմից արտադրված էլեկտրաէներգիան՝ վերջինիս կողմից պահանջ ներկայացնելու դեպքում»: Այդ նպատակով, WPS-ին և արտադրողը կնքում են էներգիայի գնման համաձայնագիր (PPA)՝ 15 տարի առավելագույն ժամկետով: Օրենքի համաձայն՝ WPS-ին պարտավորվում է գնել վերականգնվող էներգիայի աղբյուրներից ստացված էլեկտրաէներգիան այն գնով, որը «...կապահովի ներդրման վերադարձելիությունը՝ շահույթի ողջամիտ շեմով»: Հաստատված մեթոդաբանության համաձայն՝ կարգավորող մարմինը որոշում է տարբեր աղբյուրներից և տարբեր տեխնոլոգիաներով արտադրված էլեկտրաէներգիայի հաստատագրված սակագինը: ՀԷԿ-ների կողմից արտադրված էլեկտրաէներգիայի հաստատագրված սակագինը որոշելու նպատակով՝ կարգավորող մարմինն արտադրողներին բաժանում է երեք խմբի, ըստ դրանց արտադրական հզորությունների՝ (I) 0 – 2 ՄՎ, (II) 2 – 5 ՄՎ և (III) 5 – 15 ՄՎ: Էներգիայի գնման համաձայնագրով սահմանված վճարը գործում է առավելագույնը 15 տարի և վերանայվում է կարգավորվող մարմնի կողմից յուրաքանչյուր տարի:</p>	<p>Սուբսի դավոր վող հաստատագրված սակագին</p>	<p>Ռ</p>	<p>S</p>	<p>Վերականգնվող էներգիայի արտադրություն</p>	<p>Ա</p>	<p>Ոչ</p>	<p>2013թ. մայիսի 2-ին Ալբանիայի խորհրդարանն ընդունեց «Վերականգնվող էներգիայի աղբյուրների մասին» (RES) նոր օրենք, որը նոր էջ բացեց երկրի էներգետիկ շուկայի համար «կանաչ լույս» տալով տեղական և օտարերկրյա ներդրումներին: Օրենքն անհրաժեշտ էր 2009/28/EC ԵՄ Հրահանգի իրականացման համար: Օրենքը նախատեսում է, որ Նախարարների խորհուրդը՝ էներգետիկայի և բնական ռեսուրսների ազգային գործակալության (AKBN) առաջադրմամբ, պետք է հաստատի «Վերականգնվող էներգիա ազգային գործողությունների ծրագիր, 2020թ», որտեղ սահմանվում են տրանսպորտի և ջեռուցման ենթակառուցվածքների համար էլեկտրաէներգիայի արտադրության վերականգնվող էներգիայի աղբյուրների ազգային թիրախները, ինչպես նաև այդ խնդրի լուծմանն ուղղված համապատասխան միջոցառումները: Օրենքը սահմանում է հիդրո-, հողմային, ֆոտոգալվանային և կենսագանգվածային էներգիայի ոլորտներում ներդրումների կարգավորման համապարփակ շրջանակ, ինչպես նաև ներկայացնում է կենսավառելիքի օգտագործումը, որը մինչ այդ առկա չէր Ալբանիայում:</p>
---	--	--	----------	----------	---	----------	-----------	--

Բոսնիա

ՖԻՄՎԱԼ ԽԹԱՆԵՐ									
Խթանի անվանում և տեսակ	Անվտանգություն	Վերադարձի հարկ	Խթանի կիրառման ձև	Կատեգորիա (ֆիսկալ/Ոչ ֆիսկալ (Ֆ/Ո))	Տեսակետ/տարի մակարդակով (Տ/Ո)	Ոլորտ	Ազգային/էներգետիկ մակարդակով (Ա/Ե)	ՀՏԳ-ի հատուկ (Ար/Ոչ)	Նպատակ(ներ)
<p>Բոսնիայի և Հերցեգովինայի Դաշնության (այսուհետ՝ ԲՀ Դաշնություն/FBiH և ԲՀ/BiH) ներդրումային խթան</p>	<p>Այն հարկատու, որը ԲՀ Դաշնության տարածքում առնվազն հինգ տարի անընդմեջ նվազագույնը BAM 20 մլն (10 մլն €) ընդհանուր գումարի ներդրում է կատարում արտադրության ոլորտում, ազատվում է հարկումից 5 տարի</p>	<p>ԿԵՀ</p>	<p>Հարկի նվազեցում</p>	<p>Ֆ</p>	<p>S</p>	<p>-</p>	<p>Ա</p>	<p>Ոչ</p>	

	ժամկետով, որի առաջին տարվա հաշվարկը սկսվում է այն տարվանից, որի ընթացքում կատարվում է առնվազն BAM 4 մլն (2 մլն €) գումարի ներդրում:								
Հատուկ կարիքներ ունեցող անձանց զբաղվածության ապահովման ԲՀ Դաշնության խթան	Հարկ վճարողը, որի աշխատողների ընդհանուր թվաքանակի 50 տոկոսից ավելին կազմում են տվյալ ընկերությունում 1 տարուց ավելի աշխատող հաշմանդամ կամ հատուկ կարիքներ ունեցող անձինք, ազատվում է ԳԵՀ վճարելու պարտավորությունից այն տարվա համար, որի ընթացքում հաշմանդամ կամ հատուկ կարիքներ ունեցող անձինք կազմել են աշխատողների ընդհանուր թվաքանակի 50%-ից ավելին:	ԳԵՀ	Ազատում հարկից	Ֆ	S	-	Ա	Ոչ	
